



Գ Ա Գ Ի Ն

Զ. ՏՄԵՆ 1967 ՀՊՏԵՐԵՐ

digitized by A.R.A.R.©

ԹԻԻ 10

پاكين  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد اوتين كارنيك قزانهجيان

PAKINE  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

բւգին

ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԱՐՈՒԾԱՅԻ

ՎԱՐՔԷ ԽՐԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ԽՐԱԳԻՐ  
 Պ. ՄՆԱԳԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆԴԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԿ  
 Տ. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Վ. ԾՇԱԿԱՆ  
 Ժ. ԱՓԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳԱՄՆԵՐԵՆ  
 † ԵՒ. ՊՕՅԱՅԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI  
 Rue Sélim Boustani,  
 Beyrouth-Liban

Հեռագրային քիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ժ. ՅԱԿՈՐԵԱՆ
- Զ. ՈՐԲՈՒՆԻ
- Ա. ԱՐՓԻՆԷ
- ՎԱՐԴԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- ՌԻԳԱ ՌՐԲԵՐԵԱՆ
- ԲԻԻԶԱՆԻ ԵՂԻԱՅԵԱՆ
- ԱՐՄԷՆ ԲԱԲԱՅԵԱՆ
- ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ
- ՄՈՒՍԱ ՓՐԵՆՍ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
- ԵՐՈՒԱՆԻ ԵՐՈՒԱՆԻԿԵԱՆ
- .....
- ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ձ. ՅԱՐՐ, ԹԻՒ 10

ՀՈՒՑԵՄԱՐՆԵՐ 1967

ԳԵՂԵՐՏ

### ՕՏԱՐ ՇԵՄԻՆ

Ա.

Հինգ տարեկան մանչուկա այսօր՝  
 Ձեռքին բռնած՝ դպրոց տարի,  
 Օտար դպրոց: Եւ օտարի  
 Ձեռքին դրի  
 Հայու ազուտը ձեռքը անար,  
 Մի՛րար խնամար:

Հայ արիւնով ու հայ լեզուով  
 Մանչուկա իմի՞ն՝  
 Ձեռքն՝ ին իսկ իմ  
 Տարի, դրի դպրոց մը խորք  
 Եւ յանձնեցի եւ օտարի  
 Մը անձամբօք:  
 Արցունքս աչքիս, արցունքն հոգւոյս,  
 Քայն ձգեցի սեմին անլոյս  
 Ու հլայ դուրս:

Ան՝ մե՛րս մտաւ օտար դռնէն  
 Եղնիկօրէն,  
 Զգիտեալով որ այդ ուզին  
 Ձէ՛ր տանը իմ Արարատին:  
 Ու սլացա՛վ ծիծառնեղէն՝  
 Ան մե՛րս ցատկեց խորք պարտէզէն,  
 Որուն վարդերն – ամ չէ՛ր գիտեր –  
 Իր Մասիսին փո՛ղջն անգամ չէր...

Մինչ ետեւէն,  
 Եւ ցայգօրէն  
 Կը ճայէի կանաչ շուքին,  
 Որ կը շիջէր օտար մութին...  
 Եւ ճայն տուի՝ իրե՛ն ծարաւ,  
 Որպէս զարուն ովստիսի.  
 Ու ճայնիս մէջ՝ հայ հօր մը ցա՛ւ,  
 Եւ կար կարօ՛տը Մասիսի:  
 Ան չընեց.  
 Խորք մտքիս մէջ ժխորուն  
 Խառնուեցաւ ու չխցաւ  
 Հայրական կանչըս սիրայեզգ  
 Ու հայ լեզուն:

Եւ ի՞մ տղաս, սրտէ՛ս ծաղկած,  
 Ինձմէ՛ գնա՛ց...  
 Գարունս առած՝ իր գարնան հետ,  
 Ետին ձգեց ճմեռ ու լաց:

Եւ, հա՛յր մը հայ, որ բնաւին  
 Զ՛ուգեր մեռնիլն իր հայ գաւկիթ,  
 Այսպէս սակայն զարկի՛ սրտէն  
 Ու մեկնեցայ  
 Շեմէն ամայ ու անհայ՝  
 Եւ իրբու հայր  
 Անօթահար,  
 Որպէս ծախած եւ բլլայի

Անգին գաւակն առանց գինի...  
Ես՝ ծախելի՛ր...

Եւ տուն դարձայ ես միւ-մինակ,  
Ու գլխահակ ու անգաւակ,  
Թախիծ մը քաց  
Սրտի՛ս փակած  
Կարծես վազուան հա՛յ մը քաղած,  
Մտածելով իմ մո՛ւթ գրախոտիս,  
Բախտի՛ս հայտ, բախտի՛ս հովու,  
Որ հայ արտէս փրցուց որդիս,  
Ու գիւ մետեց, ու քողուց գիւ  
հարստ մայրերու  
Վերայ պանդուխտ՝ հեռու՛, հեռու՛...

Բ.

Երբ մետած եմ իմ քանկ որդին՝  
Խոտ ու խոտան բանի մը պէս  
Կարծես գետին,  
Եւ լակտի մը պէս կարծես՝  
Խառնիխուռն խաժամուծին,

Կը մտածեմ հայու խաչին,  
- Տխո՛ւր բաժին, տժգո՛յն բաժին,  
Մոռ՛ւր քաշակ,  
Այս աշխարհի անուշ ու շէն  
Սեղաններէն  
Բաժին ինկած հայո՛ւ բաժակ:

Ու կը խորհիմ,  
Թա՛ղ մը միայն հեռու իրմէ՛  
Բայց տարերով, բայց դարերով  
Կարծես բաժա՛ն ալ իրարմէ,  
Ես կը խորհիմ  
Արցունքի չափ եւ սուգի պէս  
Խորհու՛րդ մը ծով,  
Երբ ալ յանձնած եմ իմ որդին՝  
Անգոյն, անգէտ  
Խաժամուծին,  
Երբ ծախած եմ  
Անիէն քանկ հայու հոգին  
Գորշ մշուշին,  
Հեռուներու անորոշին:

Կը մտածեմ իր հայ հոգւոյն.  
Ու կը տեսնեմ

Յաւիս մէջէն՝  
Թորգովի քառ տղաս երմա  
Ամբոխին մէջ օտար տղաց՝  
Փողոց ինկած որբի համգոյն  
Ա՛յնչափ միմակ, ա՛յնչափ ամայ,  
Ուղեկորոյս գառնուկի պէս  
Ա՛յնքան շփոթ, ա՛յնքան շուար,  
Տղա՛ս, գար ես ձեռքն՝վըս չար  
Տարի, դրի դարո՛ց օտար:

Ան չլսե՛ պիտի իր շուրջ  
Ո՛չ մէկ հայ շուրջ՝  
Որ համբուրեր իր հայ հոգին  
Ո՛չ մէկ հայ քառ՝  
Որ զօգանջէր մէջն իր սրտին  
Ու հասակին քոչո՛ղ քե՛ւ տար:  
Ան չտեսնէ՛ պիտի չորս դին  
Ո՛չ իսկ ժպիտ մը հայ մանկան՝  
Որ իր օտար ետքերէն  
Արեւ բանար ձրարատեան:  
Իսկ ի՞նքը ... սիրտն իր խաչ ու պար  
Որո՞ւ կարողար  
Եւ հայերէն կանչիմ իր շէն՝  
Ո՞վ պատասխան տար հայերէն:

Եւ պատկերէն այս խելագա՛ր,  
Կու լամ արցունքն անմխիթար  
Եւ սուգն անյոյս՝  
Ի՛մ պատերուն հայրենական,  
Որ վառեցան, որ մոխրացան՝  
Մեր դարերուն, մեր քառներուն  
Բաշխելու լոյս  
Եւ հայութիւն...

Եւ կու տամ հարց  
Յաւիս դիմաց.  
- Ա՛հ, ի՞նչ ըլլայ պիտի, Աստուած,  
Իր հայ հոգին.  
Մէջն անարեւ այդ ճմռտուան  
Եւ գիշերուան այդ անուտին,  
Որ աշխարհն է ցուրտ օտարին:

Ո՞րչափ մինակ պիտի գգայ  
Անհունին մէջ օտարութեան...  
Եւ անտեղեակ՝ ան լա՛յ պիտի  
Առաջին լացն իր պանդուխտի:  
Դեմքերուն մէջ օտարական  
Եւ ձայներուն անհարազատ:

Պիտի յանկարծ ա՛րշափ խորաչի  
Ու երկնչի,  
Յանկայ փայտչի՛լ  
Այն երգի՛քէն որ ի՛րը չէ՛  
Ու երբեք ալ չըլլա՛յ պիտի...-

Պերճանքին մէջ խորք պալատի,  
Մեծ Շէշփափրն ան ի՞նչ սորվի՛  
Նարեկացւոյն առանց մեծղի:  
Օտար լեզուի խնջոյ՛քին մէջ,  
Ան ի՞նչ երգէ *Լա Մարսելէզ*՝  
Առանց ճնա՛ր կամիտասի:  
Տար հողին վրայ,  
Ան ի՞նչ յազայ՝  
Առանց չճնա՛ղ Արարատի  
Իր աչքերուն դէմ Անամի:  
Եւ ի՞նչ ընէ  
Օտար դափնի՛ն՝  
Երբ գայն չառնէ՛  
Պիտի ձեռքէն հայ ուսուցչին:

Ք.

Ա՛հ, ի՞նչ ըլլայ պիտի հոգին,  
Հայա՛ւ հոգին,  
Խաժամուծի՛ն ու մշուշին  
Մէջ գաղթային:  
Արարատի կուռ բերեղէն  
Փրփած հոգին,  
Հայկի անյաղք, ա՛ւզ ազեղէն  
Նատարճակուած այս հա՛յկ հոգին,  
Լուսառչի աւստուածեղէն  
Լամբէն կաթած այս ջինջ հոգին,  
Ու Մաշտոցի լոյս ուղեղէն  
Ջահուած հոգին,  
Որ ի՛ր բոցով շնորհմաստեց  
Գարեք տխեղծ  
Եւ անոցմէ ծնու ոսկի՛,  
Հագարատր Աւարայրի՛  
Ու Տէր-Ջօրի՛ ժառանգ հոգին,  
Ա՛հ, ի՞նչ ըլլայ պիտի, հոգի՛ս,  
Եւ ի՞նչ՝ որդիս...-

Մասիսներու  
Համար ծնած հայու հոգին  
Ո՛րչափ, ա՛րշափ պիտի մտի՛  
Մաքսններէն ա՛յսչափ հեռու

Եւ նախքերա՛ կարօտով լի,  
Լեռներէն վար՝  
Գիտնին զամուտն արծիւի պէս,  
Անստուներէն  
Դուրս բանուած առիծի պէս,  
Արծի՛ւ, առի՛ւծ հայու հոգին  
Ի՛նչպէս, ի՛նչպէս  
Պիտի մտի, պիտի մտի  
Բա՛նու ու կապա՛նք օտար ափին:

Յաղքէ՛ հագար Աւարայրի,  
Հարիւր հագար ալ Տէր-Ջօրի,  
Տօկա՛յ դարի ու բարբառի,  
Դասնա՛յ վկայ, սուրբ ու հերոս,  
Որ օր մը վատ  
Ան յանգի հա՛ւ –  
Օտար տունի մը աս՛ա շեմին...  
Հա՛ւ յանգի ամ՝  
Թափառական  
Ու ամօքի լանի մտն,  
Անանկ, անանկ իրքեր իշխամ...  
Ա՛յսպէս մեռնի  
Հայարտ, հարատու հայու հոգին  
– Ի՛նչ հա՛յ որդին...-

Ա՛հ, ի՞նչ կրնամ  
Ալ նս բնի իրեն համար,  
Տարաշխարհի ժխորին մէջ՝  
Անմիտեար,  
Այր-բեն-գիմը բանայէ գատ,  
Իր աչքերուն գիւմաց շուար՝  
Իրբու գանձի սնտո՛ւկ առատ:  
Եւ ի՞նչ կրնամ՝  
Իր ջինջ սրտի թուղթին վրասն  
Հայ «Հայր Միք»ը փռելէ գատ՝  
Իրբու հացի սեղան պարարտ,  
Այս աշխարհի երաշտին մէջ:

Եւ ա՛յ անհար,  
Գուցէ յուստ, գայն կը թաղում,  
Ջայն կը յանձնեմ այն Աստուծոյն,  
Որ յաղթեց սուր Աւարայրին,  
Որ յաղթեց հա՛ւք Տէր-Ջօրներուն:  
Ա՛յն Աստուծոյն,  
Որ Մասիսի ժայռէն դարբնեց  
Հայու հոգին,  
Սուրբ Գրիգորի աւտղէ՛ն վառեց  
Հայու հոգին,

Որ Մեքսիկայի կազապարեց  
 Հայու հագին,  
 Որ Վարդանանց արեա՛մք խառնեց  
 Հայու հագին,  
 Եւ Նարեկի կրակա՛վ այրեց  
 Հայու Հոգին:

Գ.

Եւ արթնցած իմ կեկիծեմ,  
 Նենգ քախիծեմ,  
 Մեղի քմրիքես ես քա՛փ կու տամ,  
 Օտարին դէ՛մ ես ծա՛փ կու տամ.  
 - Բայց կը մեռնի՞  
 Հայու հոգին մասխենի...

Ե՞րբ է մեռեր Մասիսն անձանդ՝  
 Երբ որ անոր ձիւնն աղամանդ  
 Մինչեւ այսօր կը ցառագէ  
 Սուրբ Տաղանին վէպն ոսկիէ:  
 Ե՞րբ է մեռեր  
 Ոսկեփետուր Մեքսիկայն անմեռ՝  
 Երբ հայ լեզուն կը քռչի՞ դեռ  
 Դարէ ի դար, լեռնէ ի լեռ:

Հայու Ոգին  
 Ե՞րբ է մեռեր - մեռե՞ր միքէ -  
 Երբ Վարդանի ամպրոպ հոգին  
 Դեռ Աւարայր կը շեփարէ  
 Յագկերտներու փաթորիկին  
 Դէ՛մ փռսփորէ:  
 Մեռե՞ր է բնու հայու հոգին՝  
 Ձէ՛ պարտասեր երբ տակաւին  
 Սուրբ Դուրքի սասունածին  
 Եւ ամէն մէկ հայու սրտին  
 Դեռ կ'արշաւէ բոցէ իր ձին:

Մեռե՞ր է ան,  
 Երբ լեզունը այրիկեան  
 Թօթափուելով Տէր-Ջօրներու  
 Հուր ու սուրէն գեհեմակեան  
 Եւ յառնելով արիւնաբոս  
 Եփրատներու կարմիր Շովէն՝  
 Դեռ կը քայլ մինչեւ այսօր՝  
 Աւելի՛ հոծ ու մեծագոր:

Գալիֆոբեթա, 1967

Ի՞նչպէս մեռնէր,  
 Երբ հայ բազուկը երկաթէ՝  
 Քանդուածին տեղ կը քանդակէ,  
 Երբ հայ բնարը կենսագեղ՝  
 Կը սիրեցէ՛ որբերգի տեղ,  
 Եւ երբ հայ սիրտն հաւատաշունչ՝  
 Դեռ կ'ազօթէ՛ յուսամբունք:

Ի՞նչպէս մեռնի  
 Ան, խաչը երբ  
 Աղամակերպ՝  
 Կը սաւառնի՞  
 Արծուաթիւ՝  
 Սիւնին վերեւ  
 Երկնապարգեւ  
 Էջմիածնի...

Մեռնի՞, մեռնի՞,  
 Երբ որ հեռուն, փոյթ չէ՛ հեռուն,  
 Վա՛րդ հող մը կայ՝ արիւնի՛ գոյն,  
 Անունը հա՛յ,  
 Վըրսն երկի՛նջ հայաստանեայց:  
 Եւ կայ Աստուած՝  
 Նախ եւ առաջ:

Ու կը հանգչիմ ա՛յն հաւատքով,  
 Որ ծովէ ծով  
 Եւ Մասիսի շուքէն հեռու  
 Պիտի երբե՛ք Ան չքողու  
 Հայու հոգին  
 Եւ իմ որդին - հազար որդին...

Ճ

Հինգ գարունով պակաւոր  
 Լճանակա այսօր  
 Եւ ի՛մ ձեռքով դարոց տարի,  
 Դարոց օտար,  
 - Օ՛ր մը ամառ,  
 Օ՛ր մը հունձի,  
 Օ՛ր մը դափնի,  
 Ազգերուն մէջ՝ իրրեւ հայ մարդ՝  
 Եւ ըլլալու, զիս զգալու  
 Հարո՛ւստ, հպա՛րտ՝  
 Իրմով, Հայով...

ԺԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ

# Մ Տ Ա Մ Ո Ւ Մ Ն Ե Ր

կրակը, որ պատճառն է մտածող մարդուն երեւութին այն աստեղն որ մարդը սկսու է փած (\*) կերակուրով մանիլ, դեռ շնորհապարտութեան ուժով պատճառ մըն ալ ունի: Այն է՝ որ թափառաշրջիկ մարդը նստակեաց մարդու վերածեց: Մարդը թուրքուեցաւ կրակին շուրջ, կրակորան շինեց քնակարանին մէջ ու անոր պահապան կարգեց իր կողակիցը: Ինքը զնաց արտերը հերկելու: Կինը ստացաւ տունը կտաճարերու իր բաժինը՝ մայրապետութիւնը: Այսպէսով հաստատուեցաւ աշխատանքը, իսկ աշխատանքը հիմը դրաւ մարդկային ընկերութեան առաջին մղիչին:

Ասոր, երբ հպարտութեամբ կ'արժեւորենք մարդը իրրեւ ընկերային էակ, պահ մը շինք խորհիր, թէ կրակին պարտական ենք:

Ուրիշ՝ կրակապաշտութիւնը, որ երախտագիտական զգացում է:

## Ճ

Ոստիլ պաշտամունքի վրայ, կը նշանակէ անուշադն ծիծաղելի ըլլալ: Այսօրուան մարդը պաշտամունքին մէջ ինքզինքին նուստացումը կը տեսնէ, բայց զարմանալիօրէն հպարտ է ան, երբ կին մը կամ նոյնիսկ բռնաւոր մը կը պաշտէ:

(\*) Ուշադրութիւն հուսկեբրուքիամ, որ վերագարս մըն է դէպի որոճացող անասնակոմ վիճակը:

Եթէ պաշտամունքը երախտագիտութեան նշան է է՝ նաեւ ուրիշ բան մը, շատ աւելի կարեւոր, իրրեւ հետեանք երախտագիտութեան, խաղաղութիւնը:

Ընդհանրապէս մենք զօհերն ենք բաներուն մեր սնունց տուած իմաստին համար, որ մեր իրենցմէ սպասածը չէ: Բաները բազմապիտի գոյութիւններ ունին: Բացէք բառարան մը, փնտոցէք բառի մը իմաստը, եւ պիտի տեսնէք սնորդի մացը բազմաթիւ բառեր, որ յաճախ շին համապատասխաներ մեր փնտոածին: Գժգոհ էք, անհունգիտ էք, որովհետեւ անհաղորդ կը մնաք: Կուրկայ մեր հոգիին մէջ: Կարգացէք պաշտամունք բառին դիմացի բացատրութիւնը: Եթէ զօհացաք, կը նշանակէ, որ դժուարեամբ չէք: Ար միտքը մեքենական է եւ ոչ թէ մտածող, որովհետեւ պաշտամունք բառին իմաստը պէտք է փնտոել ուրիշ տեղ, հոն՝ ուր դրուած է խաղաղութիւն բառը:

Պաշտամունքը խաղաղութիւն բառին միւս անունն է: Պաշտամունքի մէջ եղող մարդուն հոգին խաղաղ է եւ այդ խաղաղութիւնը գերազանցապէս անհրաժեշտութիւն մըն է առողջ եւ հետեւաբար երջանիկ ապրելու համար: Հոգեկան խաղաղութեան մէջ ներքին գործարանները երանաւէտ աշխատանք կը տանին, պիտի բռնէ կրկնով կ'աշխատին, ինչ որ վերենք կը փրկէ հոգեկան անհանդատութեան պատճառած խանգարումներէն, սուշորդ, յաւելալ ճիղէն, ինչպէս նաեւ ներքոր գեղձերու գերարտադրութեան վնասներէն:

Հոս պէտք է փնտռել ներկայ մարդկութեան անծանօթ եւ սահմոկեցուցիչ հիւանդութիւններուն պիտաւոր պատճառներէն մէկը:



Ապերախա մարդուն հոգին կատարեալ դժոխք մըն է: Ապերախտ մարդը անսէր մարդն է, զուրկ բարեկամութենէ: Ամէն ոք կը խուսափի անկէ: Ապերախտը մենաւոր մարդն է՝ նետուած իր ներքին դժոխքին կրակնեղուն մէջ:



Պէտք է վերստին սերտել հին ճշմարտութիւնները: Դուրս բերել զանոնք բառերու մոխրակոյտէն վերադարձնելու համար իրենց սկզբնական պայծառութեան:

Եւ այս՝ ի փրկութիւն մարդկութեան:

Վասնզի մարդկութիւնը կը կարօտի խաղաղութեան, բայց ո՛չ զէնքերու պարտադրած խաղաղութիւնը, այլ՝ լոռութիւնը հողինէրուն մէջ: Ահա թէ ինչու ինքները ճերթաք բարոյճի տեղ կ'ըսէին «զոյճք խաղաղութեամբ» եւ կամ «խաղաղութիւն ամենեցուն», ինչ որ ըսել կ'ուզէ խաղաղութիւն ամէն մէկուն: Վասնզի, եթէ ամէն մէկուն հոգին խաղաղ է, խաղաղ է նաեւ զուրքը:



Երբ դէմ դիմաց նստանք, Հոս Անճէլըսի իր տան արեւաշող պարտեզին մէկ անկիւնը, ուխտի սառած գուաթներուն առջեւ, հարցուցի Ալեքսանդր Գլըքսան բարեկամին:

— Ինչո՞ւ, Ալեք, ինչո՞ւ չես գրեր, ինչպէ՞ս կրցար ապրիլ երեսուն ասոր չպրելով:

— Ձիտիք այդ մտքին, — ըսաւ իմ սիրած բանաստեղծ բարեկամս, երեսը անդին դարձնելով եւ վճռական:

— Ձէ՛, — ըսէ, — այսօր պիտի պատաս-

խանես հարցումիս: Այս տեղէն չեմ շարժիր, առանց պատասխանը ստանալու: Փարիզէն անցած ատենդ ալ նկրուցար հարցումէս, թեւերդ շարժեցիր օդին մէջ ու անցար-գացիր, իսկ այսօր ոչ անկողին կրնաս երթալ, ոչ ալ զործի: Ռէմպո գրեց պոնէ Վիլիսիքը Էքլիքը Է Էմտինընդ դո՛ւն, դուն ի՞նչ բացատրութիւն ունիս, Այն ատեն խօսեցաւ:—

— Սիրելիս, ինծի համար բանաստեղծութիւնը շատ մեծ բան է: Այն օրէն որ զգացի թէ չեմ կրնար ըլլալ ինչ որ կը կարծեմ թէ է՝ բանաստեղծը, դադարեցի:

Հոռութիւնը լախտի պէս ինկաւ վրաս: Ինծի ըսելիք չէր մնացած այլեւս:

Պահ մը վերջ, ինքզինքս գտնելով, ըսի.

— Պատասխանդ կ'ընդունեմ, շատ հասկնալի է, բայց որովհետեւ ես ալ ոտակէ անցած եմ, բայց այն օրէն ի վեր, որ, ես ալ, երբ զգացի թէ չեմ կրնար ըլլալ ինչ որ կը կարծեմ թէ է՝ բանաստեղծը, փորձեցի արձակը եւ դեռ կը շարունակեմ փորձել:

Ինչո՞ւ: Հիմա ես ալ հարց կու տամ ես ինծի, ինչո՞ւ գրել: Ինչու յամառի: Նստեր եմ սեղանիս առջեւ, ճերմակ թուղթերու զէզը ձեռքիս տակ: Կէս գիշերը շատոնց անցեր է: Դեռ կը փորձեմ, կը փորձեմ, ինչո՞ւ: Կարծես կեանքի մերժումը ըլլար գրելը: Ու կ'ըսեմ ես ինծի զե՛լ, գնա՛ պատկէ, հանդիստ ըրէ՛ն:



Երբ կը գրեմ, ամբողջ ժողովուրդը նստած է դիմացս: Ամբողջ մարդկութիւն մը: Կը զգամ անոր ներկայութիւնը, որ ստեղծելու բացակայութիւն է — երբ կը խօսիմ անոր հետ զրիչիս ծայրովը բացակայութիւնը կ'ըլլայ ներկայութիւն եւ ես կը հաղորդուիմ անոր հետ: Իմ բացակայութեանս, որ իմ միակնութիւնս է, ինքն ալ կը փոխուի ներկայութեան: Այսպէս, երկու ներկայութիւնները իրար կը խառնուին, իրարու կը հաղորդուին: Արուեստը միակնութեան ստամն է:



Ողբի ի բռնին, ճանկերս լարած, կը կառչիմ ներկային, զոր ժամանակը ամէն վայրկեան, ամէն մէկ միջոնեցորդ վայրկեան զիս կը դառնալի՜մէ անցեալին ծոցը: Անցեալին մէջ մարդկութիւն չկայ: Կայ անոր յիշատակը մեր մաքրին մէջ: Անցեալը միեակութեան դերեզմանն է: Ատոր համար կը կառչիմ ներկային մտքով ու ժողով եւ, տառապանքով, արիւնտաճ ձեռքերով:

Արուեստը ներկային կառչելու ճիշդն է, որ յաւիտենութեան պատրանքը կուտայ:



Հրաշեայ Քոչար ոչ եւս է: Փառաւոր թաղում: Ամբողջ Հայաստանը ներկայ էր: Ի՞նչ կ'ըսեմ, ամբողջ Խորհրդային Միութիւնը: Բայց մարդոց այդ վշտահար ու հպարտ բազմութիւնը չի կրնար անոր մէկ ճկոյթն անգամ շարժել աւել: Հիմա որ մարդիկ ընցուցին իրենց անզոր պարտականութիւնը, որ դերը, անոնք, Հոգին տակ, գործի պիտի անցնին: Պիտի տարբարուեն, բզեկ-բզեկ պիտի ընեն, պիտի անէացնեն ինչ որ կայ իրմէ, որպէսզի նոր էութիւն մը յառաջ գայ: Որդերը՝ բնութեան այս յարախնդրները:

Յայտնի է, այս զանգուածային վիշտը. մեր վիշտը, չէր դար անհետացող Գոշարէն, այլ անկէ՜ որ պիտի ըլլայ ան: Այն մեծ խոստումէն՝ որ կըցած էր ըլլալ, վերջապէս Խոստումը, կրեւակայութեան այս պղծիչ, այլ խորհրդաւոր մեքենան: Միտալ կը գրէ: զոնէ տասը տարի ետ ապրէր: Մէկ նախադասութեան մէջ մեր ամբողջ վիշտը: Անխոստովանելի խոստովանութիւն մը միանգամայն, որովհետեւ, արդարեւ, Քոչար նոր է, որ սկսած էր արուեստի արահետներէն ներս սարգիլ, գաղտագողի: Գողի պէս: Զէ՞ որ արուեստագէտը ամենամեծ զոհն է: Կեանքի գաղտնիքներուն գողը:

Գողին պէս, ան ալ, անցնելէն հաք մեզի կը յայտնուի, անոր գործած աւերէն, եթէ կարելի է այսքան ըսել:



Նամակ Շահնուբէն Վել-եղեւծի տութիւթով:

Այն ատեն, երբ յուսահատութիւններուն ամէնէն սեւը կ'ապրէի: Մ'վ կրնայ հասկնալ, թէ ի՞նչ ըսել է զիջք հրատարակել հայկական սփիւռքին մէջ: Կը հրատարակես, լաւ: Եւ դեռ ձեռքդ չի բռնար: Կրնայ զիջել, արտէջ մաս մը դնել իւրաքանչիւր ձեռագրութեան մէջ, ծրարել, գրուածաթուղթ փակցնել լորձուճիչ հոտացրնելով: Եւ դեռ կը խորհիս ուրախութեանդ կրակին մէջ, որ, արդէն, անհոմբեր ճեղի կը սպասեն: Ու կրակը կը բոցավառի: Բայց, ահա, լուսութիւն: Մէկը միւսին հաւեհն ձօներդ կը գլորին անտարբերութեան անկշտամ երախին մէջ:

Միամիտ:

Ձեռ խորհիւր որ զիրենք պարտազանց ըլլալու դիրքին մէջ կը մտցնես: Կը պարտադրես: Միամիտ:

Ու շուրջ պարագութիւնը կը տարածուի, հոն՝ ուր կը կարծէի որ բազմած էր բարեկամութիւնը:

Յանկարծ անապատին մէջ հիւղակիդ դուռը կը զարնեն, սւշ պիւր ատեն, զորդազին: Բարեկամ միւս է որ կը վերադառնայ, ան՝ որ օր մը մեկնեցաւ անլերադարձ:

Շուտ, սեղանը դրէք եւ մորթեցէք ամենապարարտ հորթը: Դրէք սեղանին վրայ ամենասղանիւ զիւնին, մինչ այդ, բոց թեւերդ զրկելու համար բարեկամութեան վերադարձը, քանզի ան շատ տառապեցաւ եւ տառապեցուց:

Այս ի՞նչ չգեղութիւն, Ատուած իմ, տառապանքն ու ուրախութիւնը զէրկ դրկի:

Զ. Ո.

Ա. ԱՐՓԻՆԷ

Հետագայ անտիպ կտորը մաս էր կազմել Ա. Արփիմէի  
պատմութեան հատորին, որ Հեմմֆի հասակը ցուցու-  
նք խորագրով յոյս կը տեսնէ մի քանի շաբաթէն:

**ՀԱՐՑՈՒՄ ՈՒ ՊԱՏԱՍԻԱՆ**

Գոյներու այդ առինքնող աշխարհին մէջ կը զուար-  
թանար յանկարծ ու մեծ վարպետներու հոյակապ գործե-  
րուն հմայելով կ'երջանկանար: Այդ բոլոր նկարները կար-  
ծես կը խօսէին իրեն, կարծես հարազատներ էին իրեն:

Իայց ունէր իր նախասիրածները...  
Ինչպէս երաժիշտները՝ զանոնք ալ զետեղած էր ան-  
հասանելի բարձունքներու վրայ:

Առաջինը՝ Ռէմպրանդն էր. զայն տարած բազմեցու-  
ցած էր Պեթհոլէնի կողքին:

Յափշտակութեամբ կը դիտէր անոր նկարներուն  
խորհրդաւոր ստուերներէն լոյսի ու սուկի հմայիչ ցայտ-  
երը, ու դիմանկարներուն առջեւ, Տոսթոյեւսկիի հաւա-  
սար, հոգիները պեղող կախարչ մը կը տեսնէր:

Ու էլ կրեքոն...

Իր գործերէն կարծես մէլամագձոտ երանգներով ա-  
ղօթքի մրմունջներ կը բարձրանային ու ամէն ինչ երկա-  
րամիզ, միտտիկ ոլորտներու մէջէն գէպի երկինք կը  
ձգտէր:

Ու էլ կրեքոն տարած գրած էր Պախի մօտ:

Ու կը սիրէր, կը սիրէր սուղաւորապաշտները, նկար-  
չութեան մէջ թարմութիւն ներմուծող այդ յեղափոխական-  
ները: Անոնց գործերուն առջեւ երկա՞ր կը յամենար, իւրա-  
բանչիւրին արժանիքն ու անանձնայատկութիւնը ճշդէլ՝  
ճիշդով:

Բազմութեան մէջ յաճախ առանձին զգացող ու աւանդութեան մէջ նոր աշխարհներ, նոր հորիզոններ փնտրող աղջիկ մըն էր, սնած ու մեծցած պաշտամունքովը արուեստներուն, որոնցմէ զատ, կը խորհէր, թէ զինքը հեանքին կապող ուրիշ ոչ մէկ հետաքրքրութիւն ունի:

Բայց որովհետեւ բարձունքներու, լուսանճանչ կտարներու միասն աչք ունէր եւ ոչ մէկ վստահութիւն՝ իր ընդունակութիւններուն, նախընտրէր էր հրապարակ չլսուի ու իր էութիւնը հրահրող արուեստի սէրը՝ մտապահ հոգիներու մէջ ներմուծելու պաշտօնին նուիրուել:

Ան արուեստի աշխարհին մէջ կ'ոգևորէր ու կը վաւարթանար, բայց երբ աչքերուն առջեւ պատկերանար այդ հանճարեղ վարպետներուն ապրած կեանքը՝ վայելքը կ'ամպոտէր:

Որոնոց հոգիներու երկունքի տառապանքը, գէպի աննուան բարձունքները խոյանքն ու ժառանգուածը...  
Չգտու՞մ գեղեցիկին...

Ի՞նչ է արուեստը, բարձր արուեստը, կը դռչէր՝ բնն, շատեր, շատ շատեր փորձեր են զայն սահմանել, դեղեցիկին մէջ թաքնուած այդ անծանօթը, որուն գոյութիւնը կարելի է զգալ միայն:

Ի՞նչ բան ունի գինք այդպէս հիշնոսացած կը պահէ՛ վան կողի Վոյտք մը հին կօշիկին առջեւ...

Գամուած կը մնայ հոն, կը դիպէ մազնիսացած, յափշտակուած, մինչ շատեր կ'անցնին անտարբեր, ակնարկ մը միայն նետելով ու կը մօտենան զոյնի ու նիւթի ճօխութեամբ անհամեմատօրէն աւելի հարուստներուն:

Չոյք մը հին կօշիկ... Բայց անոնցմէ կարծես կը ցայտէ նկարիչին ստեղծագործական հանճարը... Անոնց մէջ կարծես բանտուած է արուեստագէտին տառապող հոգին, որ գինք իր մօտ կը պահէ... որ գինք իրեն կը կանչէ...

Յաջորդ սրահէն կը լսուի հրաժշտութիւնը, որ կ'ուռի, ալիք-ալիք կը տարածուի, կը ծաւալի, կը դրկէ աղբկան հոգին:

Ուրեքը մեքենաբար կ'ուղղուին հոն, թանգարանին պարսկցի պատրանք առող դահլիճը, ուր առնկերը ծառի հասակ առած՝ կ'երկարին դէպի գմբէթը, ուրիշ մազուող դարուկ լոյսերը խորհրդաւոր կիսաստուերներ կը ստեղծէին:

Թաւջութակը կը հեծէ թխադէմ երկասարդին ճպտին տակ, մինչ ջութակահարին արտայայտիչ աչքերը կը խոնարհին պահ մը զգացումի օւժգնութենէն ու դաշնակահարուհին ատգոյն դէմքը կը պրկուի ներքին յուզումէն:

Աղջիկը կը փակէ աչքերը, հոգին կը թեւածէ, ամբողջ էութիւնը վերելքի մէջ է ու երանութեան արցունքի կաթիլ մը այսը կը թրջէ:

Երբ երաժշտութեան վերջին հնչիւնները կը մարին՝  
կը բանայ աչքերը :

Իր առջեւ, նստած է անհանդարտ դոյզ մը. պատանեկան տարիքի ու իրարու սեղմուած զոյգ մը, ու անոնց մօտ՝ նիհար ու տարիքոտ կի՛ն մը, որ հողին երաժշտութեան այրիներուն յանձնած, անոնցմէ յորդող յուզումի երանդներէն վերացած, երազներու աշխարհի մը մէջ կորուսուած կը թուի ըլլալ :

Ազլիկը կը գիտէ զայն ու սրտի սեղմում մը կ'ունենայ, իր եւ անոր միջեւ նմանութիւն մը կը տեսնէ, ու ժպտով մը մտովի կ'ըսէ. « Երկար չի տեսեր... ես ալ, այդպէս ծերացած, խորչումս, անճանաչելի դարձած՝ պիտի գամ մինակ եւ ինչո՞ւ... որովհետեւ այդպէս եմ ուղած » :

Հոս, ճիշդ հոս էին նստած Վրոյրին հետ, երբ առաջին անգամ եկան միասին :

Աւելի քան տասը տարի առաջ էր ատկաւ, Նոյն ամսուան, Նոյն օրը...

Ճշմարիտ վայելքի օր մըն էր եղած այդ եւ կը յիշէր, թէ ոտքերը դեռնէն կտրուած էին յանկարծ ու հողին թեւեր էր առած :

Մարդիկ առհասարակ կը տաղտկացնէին զինք, ու մտովի յաճախ կ'ըսէր, թէ ինք կեանքի կու գար ա'յն ստուն միայն, երբ խօսակիցը կը հետաքրքրէր զինք ու կը սիրէր այն բաները, զորս ինք կը սիրէր :

Այդպէս էր եղած Վրոյրը, ու իրենց միջեւ հողեկան կապը շուտով գոյութեան էր կոչուած ու ամրացած, զսացումը խորացած :

Բայց հանդիպումները որքա՛ն յաճախակի կը դառնային, որքա՛ն զայն մօտէն ճանչնալու առիթներ կը ստեղծուէին, այնքան աւելի կը համոզուէր, թէ պէտք չէր իր կեանքը անոր կապէր : Ձար ու կարծր բանի մը գոյութիւնը տիրակա՛նօրէն անոր էութենէն կը ցցուէր ու իր հողին կը ճնշուէր ու կ'աբտասուէր : Եւ օր մըն ալ որոշեց խղել կապը քանի դեռ ուշ չէր :

Ու անցան տարիները. եւ ինչպէս անցեալին՝ ոչ ոք յաջողեցաւ հետաքրքրել զինք : Գոհ էր սակայն ու վերջնականապէս համոզուած, որ ինք չէր կրնար ապրիչ այն կեանքը, որ ընդհանուրին էր վիճակուած, եւ փոյթը չէր, թէ անոնք, այդ « քնդհանուրը » ինչ պիտի խորհէր կամ կը խորհէր իր մասին : Գիտէր՝ թէ զոյլացած չէր ու երբեք պիտի չզոյլար :

Երաժշտութիւնը վերսկսաւ :

Ձուլը կը շարունակէր սիրաբանի : Տարեց կիներ իր խիտ ու յանդիմանական սկիւարիը ուղղեց զինքը անհանդուտանող այդ լսկոտներուն, բայց անոնց աչքերը արհամարհանքով միայն պատասխանեցին :

Աշխարհը, բովանդակ տիեզերքը իրենցն էր. կեանքը էր լիութեամբ իրենցն էր. ո՛վ էր այդ շրջած պառուը, որ այդպէս խիստ սկիւնարկներ կ'ուզէր, որ հաւանաբար, սիրոյ ժասին ոչինչ դիտէր...

Աղջկան ակնարկը ինչու էր ծաղիկներով լըջանակուած աւազանին, որուն կեղբունէն բարձրացող սիւնիկին վրայ՝ փոքրիկ հրեշտակ մը տաւիղ կը նուազէր:

Յանկարծ, կարծես սիրտը կանգ առաւ. շունչը հտրեցաւ, սրահին մէջ ամէն ինչ մշուշի մէջ կորուսեցաւ: Հոն, քովնախ նստարանի մը վրայ նստած էր Վրոյրը՝ թարմատի կնոջ մը հետ...

Իրեն այնպէս թուեցաւ, թէ սիրտը երկաթէ ձևով մը ափին մէջ կը սեղմուէր, ու կոկորդին մէջ բան մը կը կարծրանար:

Երաժշտութիւնը, որ ջիւ առաջ գինքը երանութեան թեւերուն էր յանձնած՝ կարծես դադարած ըլլար. այլևս ոչինչ կը լսէր, միայն, աչքերը Վրոյրին ու այդ վայելուչ, սիրուն կնոջ յառած՝ քարտեցած կը դիտէր:

Տասը տարի ամբողջ չէր հանդիպած անոր, եւ ա՛հ, նոյն քաղաքին, նոյն թանգարանին մէջ, նոյն ամսուան, նոյն օրը...

Եւ ան ատեններն չէր այլևս...

Ուրեմն...  
Գունքերուն վրայ՝ մագերէ թեթև մը ճերմկեր էին ու նստառէն բաւական մը նահանջէր: Յաճախ կը հակէր զէպի երիտասարդ կինը ու բաներ մը կը չնջար եւ ինք՝ կարծես թունաւոր խայթուածք մը կը զգար:

«Տեսա՞ր, - կ'ըսէր ներքին ձայն մը, - տեսա՞ր, եւ կը պարծենայիր, թէ չէիր գղջացած, թէ երբեք պիտի չգղջայիր...»

Ի՞նչ էր նուազուածը, չէր դիտեր, չէր ուզեր դիտել, կարծես ամբողջ նուազախուձրէ մը բարձրացող սրտոս մըն էր, որուն յաջորդեց ձայներու հեղեղ մը, ու անոնց մէջէն մեղամաղձուտ սոյլ մը հասաւ իրեն ու կոտորացող սիրտը արիւնեց:

Իրեն այնպէս կը թուէր, թէ ան ատենց իր կողմը նայելու՝ կը տեսնէր զինք, կը զգար իր տառապանքը ու կը հրճուէր: Թա՛մաւ չըթուե՞ր, չփղձկելու համար յանկարծ ու ետևի դռնէն նետուեցաւ դուրս:

Հետացաւ արագ, կը քայլէր անպատակ, առանց պիտաւու, թէ ուր կ'երթար: Օդը զով էր, մեղմ զեփեւս մը մագերէ կը զգուէր, ճակատը կը շոյէր:

Երջանիկ կը թուէր, խորհեցաւ, եւ ինչո՞ւ երջանիկ պիտի չըլլար. եթէ այս մէկը չէր եղած՝ կային շատ մը ուրիշներ...

Կը քայլէր արագ, աւելի ու աւելի արագ, կը շնչէր

խոր ու հետզհետէ կը հանդարտէր, հոգին կը խաղաղէր։ Քայքայեց ընտանեացի ուղղուեալ էին դէպի լճակը ու հոն, նստորանի մը վրայ գրեթէ ինկաւ յողնած։

Հոս ալ սիրարանող զոյգեր իր շուրջ... Աչքերը յառեց լինի ջուրերուն մէջ թափուող թեկ թեկ ցոլեքերուն ու ճիշդ ըրաւ մտքէն վանկու ամէն մասս ծուծ։

Յանկարծ, հոն, իր մօտ, ստուեր մը նկատեց, ակնարկը յամբարար ուղղեց անոր։ «Վերագեմ», խորհեցաւ, ու ջանաց ուղիք գալ, բայց ստուերը կը յամտուէր հոն մնալ, աչքերը յառած՝ իր աչքերուն։

- Վրո՛յր,- շնորհաց, հագիւ լսելի ձայնով,- ի՞նչ կ'ընես հոս...
- Այն ինչ որ դուք կ'ընես...
- Ե՞րբ...
- Այո՛, դուք... ինչո՞ւ նուազահանդէսը չվերջացած հետացար...

- Գլուխս կը ցաւէր, ուղեցի բաց օդին մէջ ըլլալ...
- Ո՛չ, տեսար զիս ու հետացար...։ Երեւի երկուքս ալ յիշէր էինք հին թուական մը, վայելքի անկրկնելի օր մը, այլապէս, ինչպէ՞ս բացատրել մեր երկուքին ներկայութիւնը հոս...

- Աղջիկը պահ մը լուռ, յետոյ, յարեց՝
- Բայց տոանձին չէիր դուք...
- Ատիկա՞ էր ուրեմն փախուստիդ պատճառը... Եթէ աւազդու թեամբ զիտէիր՝ պիտի տեսնէիր տիկնոջ ամուսինը իր քով... Քանի մը օրէ ի վեր հիւր եմ իրենց։
- Վրո՛յր,- ըսաւ յանկարծ, աչքերէն արտմութիւնը վանած,- Վրո՛յր, ուրեմն տեսար զիս հոն ու հետեւեցա՞ր ինձի...

Այս անգամ Վրոյրն էր, որ մնաց լուռ ու քիչ ետք, հարցուց լրջացած աչքերով.

- Ինչո՞ւ կ'ուզես զիտնալ ատիկա...
- Ոչինչ, ոչինչ, պարզ հետաքրքրութիւն, պէտք չունիս գոհացում տալու։
- Իսկ եթէ «այո» ըլլայ պատասխանս...
- Ինձի զարմանք պիտի պատճառէ...
- Ինչո՞ւ...
- Որովհետեւ, տարիներ առաջ որոշեցիք այլեւս զիրար չտեսնել։
- Եւ այդ որոշումը վերջնական եղաւ քեզի համար եւ վղջում չունեցար...
- Այո՛... վերջնական...
- Եւ, անդառնալի՞...

«Յիմար, յիմար,- կ'ըսէր ներքին ձայն մը,- սիրտդ

չէ որ կ'ըսէ այդ խօսքերը, սթափէ քանի դեռ ուշ չէ: Տա-  
կաւին ժամ մը առաջ ճիգ կ'ընէիր արցունքները զսպելու:

«Տիրէ՛ ինքիկն՝ ըրդ պողպատէ կամ քէ, — կ'աւելցնէր  
աւելի տիրական ձայն մը, — դիտես, թէ ոչինչ փոխուած է  
մէջը. ամբօրէն փարած ես նախասիրութիւններուդ, հա-  
ժողութիւններուդ եւ միշտ զգացած, թէ այդ կեանքը քեզի հա-  
ժար չէ ու զզջումը հաւանարար շուտով պիտի յաջորդէ:  
Եւ ահա, այն շար ու կարծր բանը, որ զխաւար պատճառ  
էր եղած ետ կենալուդ՝ որմէ խրտչած ու սորսափած էիր,  
շատ աւելի շեշտուած է անոր աշքերուն մէջ այժմ»:

— Այո՛, վրոյր, — պատասխանեց հանդարտ, — եւ . .  
անդառնայի:

Ակնարկը հետեւեցաւ անոր մինչեւ հեռանալը ու  
դպաց, թէ բան մը վերջնականապէս մեռաւ կուրծքին տակ:  
Մութը սկսեց էր իջնել: Երկու՛ր դիտեց լինին ջու-  
բերը, որոնց վրայ հովը սարսուռ կը ձգէր:

Անամպ կրկինքի խոր ու անուշ կապոյտին մէջէն կը  
շողար կիտալուները, որուն մօտ, սո՛վոյն աստղ մը կը  
պլպլար կանթեղի մը լոյսին պէս: Հեռո՛ւն, հորիզոնին  
վրայ, ուրկէ արեւն էր հեռացեր՝ մանիշակապոյնի երանդ-  
ները դեռ կը յամենային:

Քիչ անդին նստող կին մը, իր մօնշաւկին ձեռքէն  
բռնած՝ հեռացաւ:

Աղջկան ոտքերուն առջեւ, տղեկը բան մը ձգեց:

Նկատած էր այդ սո՛վոյն մանշուկը, որ փոխանակ  
վնդակ խաղացող տղոց խառնուելու՝ մօրը քով նստած՝  
հակած էր տեսարակի մը վրայ:

Երեցաւ ու վերցուց ճմրթկուած թուղթը, որուն վրայ  
դէմք մըն էր պծուած: Ուղից ծալքերը եւ ուշի ուշով դի-  
տեց մանուկի մը այդ միտմիտ պծալբութիւնը, ու հոն,  
սովորականէն տարբեր այդ պիծերուն մէջ, կարծեց տեսնել  
բաներ, որոնք ապագայ արուեստագէտ մը ի յայտ կը բե-  
րէին:

Բնազդարար, դարձուց թուղթին միւս կողմը՝ ու  
զարմանքը կրկնապատկուեցաւ:

Լեռներ, նախապատմական կենդանի մը, արծիւի  
նմանող թռչուն մը. իր տարիքին անհամապատասխան գի-  
ծեր, շուքեր:

Թռիչք, երեւակայութիւն, ինքնատպութիւն, խոր-  
հեցաւ հրճուանքով, ինչպէս նաեւ բժախնդրութիւն, դժ-  
ւարահաճութիւն, որոնց պատճառաւ՝ չէր հաւնած ու նե-  
տած էր զայն:

Մէքենարար, մատիտ մը հանեց պայուսակէն ու  
լամբարէն յորդող լոյսին տակ, սկսաւ ամբողջացնել կիսատ  
մնացած մասերը:

Ապագայ արուեստագէտ մը, կը կրկնէր ոգեւորուած,  
ապագայ արուեստագէտ մը...

Յանկարծ, կրակէ տառերով հարցում մը կարծես  
մտքակէց միտքը...

Զրկանքներ, յուսահարուսիւններ, որոնում, եր-  
կունք, տաժանք ու աստապանք...

Կ'արժէ՞ր... Միթէ՞ կ'արժէր...

Այդ տեղոյն տղեկը, փոխանակ հետեւելու բնականոն  
ու հանգստաւէտ կեանքի մը վայելքներուն տանող ճանա-  
պարհին՝ պիտի բռնէր դէպի բարձունքները աստիճանող  
չողարձակ ուղին, որ սակայն ցից էր, քարքարուտ ու տա-  
տասկածածկ, եւ իր մատներն ու զարշապարները արհնե-  
լով, բայց յանախ երկնառաք երանութեամբ՝ պիտի ձգտէր  
վեր, վե՛ր, ու թերեւս պիտի ըլլար այն քիչերէն, որոնց  
տրուած էր աստուածային այն բացառիկ կայծը, հուրը,  
որով պիտի կարենար նուաճել բարձունքը ու հասնիլ կա-  
տարը:

Աչքերը կրկին թափառեցան լիճի սարսուռն ջուրե-  
րուն վրայ, ուղղուեցան հեռաւոր դաշտը, բարձրացան  
դէպի ծառերը, դէպի երկնակամարի կապոյտ խորքը, դէպի  
լուսինն ու պլպլացող աստղը՝ ու յանկարծ կանգ տռին:

Այդ քիչերը, այդ մեծերը, այդ բացառիկները՝ ի-  
րենց խոյանքին մէջ պիտի դիտնային թափանցել այդ խոր-  
քէն ներս ու... հպիլ աստուածայինին:

Եւ մտախոր առանց վարանումի շարժեցաւ ու դրեց  
պատասխանը վերի հարցումին...

Ա. Ա.





### ՎԵՐՁԻՆ ԻՂՉ

Երբոր մեռնիմ, ե՛կ ինձ այցի,  
 Զոյգ մը ծագիկ ձեռքդ բռնած,  
 Ե՛կ ինձ այցի, որ չ՛մոռցուի  
 Շիրիմս անկիւն մը բողբուած:

Շքեմերուդ վրայ բոզ ֆայգրահամ  
 Բառերուդ տեղ կարօտակէզ,  
 Ազօբֆիդ ջինգ բառերն ըլլան  
 Խնկապարար ստաշիտ պէս:

Քուչունները գարնամարեր  
 Ազօբֆնրուդ պիտի խառնեն  
 Դայլայլն իրենց, կամայ ծառեր՝  
 Ստափն եւ երգն իրենց ամեն:

Մահն ինձ այսպէս ֆայգր պիտի ըլլայ,  
 - Երազ մը սոսկ, եղաւ ինչպէս  
 Կեանքն, որ անցաւ երկրիս վրայ  
 Սիրոյ անուշ երգի մը պէս:

Երբոր մեռնիմ, ե՛կ ինձ այցի,  
 Զոյգ մը ծագիկ ձեռքդ բռնած,  
 Ե՛կ ինձ այցի, որ չ՛մոռցուի  
 Շիրիմս անկիւն մը բողբուած...

ՎԱՐՊԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ

Պատկերս Այբէս

**Գ. ՍԱՍՈՒՆԻ**

**ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ**

**ՄԱՍՆ Ե.**

**ՍԱՐՀԱՏ ՎՏԱՆԳԱԻՈՐ ԱՐՇԱԻԱՆՔՆԵՐՈՒ  
ԿԸ ԶԵՌՆԱՐԿԷ**

*Կուրտիկի բարձունքին, տանիքի մը վրայ կեցած՝ Սուսամ հոգիի աչքով վարի զսոթթափները կը խուզարկէր:*

*Մարհատի խումբը կ'իջնէր գէպի զաշաբ: Ձիերու սմբակներուն ձայնը, հեռագրական թիքթաքի պէս, կը հասնէր Սուսամի լսողութեան, ու անոր սիրտը կը բարախէր անոնց խորհրդաւոր տրոփին հետ:*

*Երազային հեւքով կը տեսնէր Մարհատի շարժումները, կը խօսէր տնոր հետ, անպատասխան, ու կը ղդար վճռական կամքը այն երկաթէ մարդուն, որ նետուած էր ազատութեան նուիրական ճամբուն վրայ:*

*Ազատութեան շքերթի նուազն էր, որ կը լսուէր ժայտերու արձագանգներէն:*

*Գացին անձնուրացները ու Սուսամ մնաց մինակը, մտահոգ, բայց երջանկութեամբ ողորուն: Անոր սիրտը կ'երգէր խորհրդաւոր պսակի անանուն երջանկութիւնը:*

*Ի՞նչպէս եղաւ, ո՞ր աստուածը այդ օր վար իջած էր իր բարձունքէն անկարելի երջանկութիւն մը բաշխելու Սօսեաց անտառի փախստականներուն, Սուսամի համար անբացատրելի հրաշք մըն էր: Մահուան հետ հաշտուած էր, միայն մէկ անդամ Սարհատը տեսնէր, ու ծառայող զառնար, ինքնակամ ծառայող, երջանիկ մահ...:*

*Ու հիմա, ինքնամոփօփ, Կուրտիկի բարձունքին, Սուսամ երջանկութիւնը կ'ըմբռնէր... սակայն, սիրտը զոյղ: Ազատութեան մարտիկները այդ ճանապարհին վրայ պիտի զոհուէին: Ու խեղդուկ ձայնով ինքն իրեն հետ կը խօսէր:*

*- Մատաղ ըլլած անոնց ճամբուն, Աստուած, հրաշքը զուն կատարեցիր, այնպէս ըրէ՛ որ իմ արիւնն ալ անոնց արեան խառնուի...:*

Խռհում, երազ ու մրափ: Սուսամ անոնց հետն էր, Սարճատի կող-  
քին, ճիշդ ստիկ տակ կեցածին պէս, պտտառա զոհական պակումին...  
Անգին, Մշոյ դաշտը գիշերուան խաղաղութեամբ կը հեւար, ու խոր-  
հրդաւոր արտփիւնը ձիհրուն՝ թունդ կը հանէր փրտեքր ազատասենչ  
ժողովուրդին, որ ամէն տեղ Սարերու Ասլանի խոյ ու առնական ժոնջիւնը  
կը լսէր:

Ձիաւոր խումբը կ'անցնէր աբազ, անվարուն հարուածին միշտ պտտ-  
րաստ: Ու ճամբաները բայ էին անոնց առջեւ: Թշնամին բռնած էր լախ-  
նասարած դաշտը, մինչեւ Նեմրութ, բայց եբ մութը կ'իջնէր, թուրքերը  
ծածքի մը տակ կ'առնէին իրենց դյուխը, կայծակէն շածխանայու գզուշու-  
թեամբ:

Ս. կարապետի վանքէն մինչեւ Նեմրութի ստորոտները թրջական  
արիւնարբու վաշտերը բռնած էին Մշոյ դաշտի արեւելքն ու արեւմուտքը.  
Սարերու Ասլանի սարսափը ջլատած էր բոլորը: Ու օսմանան բանակը  
չարժան մէջ գրած էր իր գորամասերը, վտանգաւոր առիւծը ոչնչացնե-  
լու համար:

Նեմրութի եւ Գրգուռի ստորոտներէն փոթորկալի հով մը կ'անցնէր:  
Վարդէնիսի, Ղարսի եւ Հացիկի սուրհանդակները ճամբաները կը խաղաղ-  
կէին լուսաստղի ազօտ լոյսով: Ականջները դաւտին փակցուցած՝ անհուն  
արտփիւնը կը լսէին, որ թաւալումով կ'առաջանար գէպի Ղարս գիւղը: Ո՞ր  
անկիւնէն պիտի յայտնուէին, եւ ե՞րբ թռչունի ճիշդ պիտի լսուէր:

Կը սպասէին:  
Ու ահա, Ղարսի արտերու թումբերէն ազդանշանը կը լսուէր: Քա-  
նի մը վայրկեանէն սուրհանդակներն ու պահակ մարտիկները Սարճատի  
առջեւ կեցած, կախուած էին անոր շրթունքներէն:

- Ձեր գիւղը պիտի մնանք այս գիշեր, - բաւ Սարճատ, - լուր  
տուէք Վարդէնիսի եւ Խըւնքի պահակներուն որ Ֆեառայիներ անցան գէ-  
պի Նեմրութ: Իրենք գզոյշ ու արթուն ըլլան: Տեղական մարտական խում-  
բերը իրենց զէնքերէն չբաժնուին: Դէպքեր կրնան տեղի ունենալ այս ընթ-  
իակայքը...:

- Մեր աչքին վրայ, պարո՛ն Սարճատ, ձեր վալը բարով եղնի՛ր...  
Ու Սարճատի խումբը, չորս մասերու բաժնուած, շուքի պէս արագ  
անցաւ գէպի գիւղը եւ տեղաւորուեցաւ այն տուներուն մէջ, որոնք տիրա-  
պետող զիւրքեր ունէին:

Լուսիւնը համատարած էր, եբ արշալոյսը բացուեցաւ: Նեմրութի  
եւ Գրգուռի խոյ թնդիւնները դադրած էին:

Լեռներն ալ զգայուն դարձած էին եւ գիտէին, թէ իրենց ծոցին մէջ  
հարազատ զաւակներ ունէին, ու անոնց գազտնիքը պիտի պահէին լուս  
խոկումով:

Փայտի պէս մարտիկները կը հանգստանային Ղարսի ծածքերուն տակ:



Խորհրդաւոր լուսիւն մը կ'ապրէր Ղարս գիւղը, բայց հրաբուխ մը  
կ'նտար անոր ծոցին մէջ: Լուս անցուղարձի մէջ էին գիւղի երեսիւններն ու  
մարտիկները, գազտնիք մը անոնց գէպի վրայ:

Վաշտ մը գորք կար գիւղին մէջ, իսկ խուզարկու քանի մը վաշտերը

չըմկայքը բռնած էին: Բռնակալութեան ու ազատութեան ուժերը գիրկ  
գրկի մէջ էին, դէմ դէմէ:

Գաղանձքն էր, որ ջղուգար կը դարձնէր թշնամին:

- Ո՛ր է այդ կեանքը...

Մինչ, մօտակայ տան մէջ, անձնուրացները դէն ի ձեռին՝ կը խոր-  
չըրգակցէին:

- Ի՞նչ պիտի ընենք, Գէորդ, - ըսաւ Մակար մտահոգ, - մեր շորս  
բոլորը օսմանցու զօրք, իսկ շրջանի քիւրտերը անվստահելի:

- Ընդ այդ անվստահելի քիւրտերը կալի մէջ բերելու համար այս  
կողմերը եկանք: Ղաւթմ պէկը միայն դաշնակից դարձուցինք, բայց քանի  
մը պէկեր կան, որոնք կա՛մ մեր կողմը պիտի դառնան եւ կա՛մ պիտի հար-  
ւածենք: Սուրհանդակներ տրուէն ճամբայ հանած եմ, երբ արեւը մար  
մտնէ՝ ճամբայ կ'ըլլենք: Գործը կա՛մ հարուածով կը վերջանայ, կա՛մ Ղա-  
ւթմի ճամբան կը բռնեն:

- Կրակի հետ կը խաղանք, Գէորդ, ամէն ատեն մարդու մայրը տը-  
լայ շի բերեր, - Մակարը վերջացուց իր խոհեմութեան քարոզը:

- Մակա՛ր, մինչև այս անիրաւիներու կուրծքին ծուռկը չդնես, խօսք  
չեն հասկնար: Եթէ աղջիկ եղաւ, այդ ալ մեր ճակատագրէն է:

Մարհատ դարձաւ միւս խմբապետներուն:

- Ձեր խումբերուն գլուխը անցէ՛ք, պիղի պիտաւոր դիրքերը մեր  
ձեռքն են: Տղաքը թող հանգստանան եւ զգոյշ ըլլան իրենց կտուցը գորս  
Հոնելու:

Գիւղի մարտիկները, աչքերը շորս կողմ, խմբապետները կ'առաջ-  
նորդէին դէպի թաքստոցները:

Մակար խօսքը ուղղեց Գոմսայ Մօսոյին:

- Տղա՛յ, Գէւան ծուր է, փորձանք կը փնտռէ: Բանի մը օր հաշիւ  
անցած է իր պսակէն, Սուսամն ալ թողեց անտէր, եկանք, ինկանք այս  
կրակին մէջ: Ես բան չեմ հասկնար...

- Մակա՛ր, Գէորդի համար հարսանիքը կուրծն է: Սօսիներուն տակ  
եղած պսակը անոր սիրտը չգովացուց:

Ու խմբապետները աներևութացան իրենց թաքստոցներուն մէջ:

Արեւն արդէն բարձրացած էր Հորիզոնին վրայ:

Ձեռտայինները, դէնքը գրկած՝ կը հանգստանային:

Ճ

Ձեռտային կը մրափէ, չի քնտնար: Գաթան պայքարի մը սովորոյթը,  
նոյնիսկ մէկ աչքը բաց ննջողներ կային:

Կէս օրուան ծօտերը բուրն ալ ոտքի վրայ էին: Պատառ մը հաց ու  
թոց կերան, որպէս ստիպողական պարտականութիւն մը:

Ձեռտային մեշտ դժգոհ մըմունջ մը ունէր, երբ անունդ մը առնելու  
հորհաղորած էր:

- Ուտելու այս պահանջը վերջանար, Աստուած... Ամէն բարիքէ  
չբաժարած ենք, վերէն ամէն ինչ կը տեսնես, այս ուտելու պահանջն ալ  
մեզմէ ա՛ն, որպէսզի հանդիստ մեր գործին նայինք, - Մակայ Ղաղարն էր,  
որ կէս կատակ, կէս փիլիսոփայական խօսակցութեան մը սկսած էր Աս-  
տուծոյ հետ:

Գոմսայ Մօսօն անդիէն:

- Հաց ուտել չես ուզեր, դնդակ մը ուտելու պատրաստուէ, չուտով սարսիճքի կ'իլլինք:

Մարտիկները խնդային Ֆետայի երկու փոխտնփաներուն վրայ, ու շայցին իրենց զէնքերը:

Ղարսը ետուզուի մէջ էր: Տեղական մարտիկները մտահոգ, թաղերու անցքերուն անկիւնները բռնած էին: Նոր ջոկատներ կը մտնէին գիւղը, եւ թաղէ թաղ կ'անցնէին, տուններուն առջեւ կը կենային, ջուր կ'ուզէին երբեմն ալ ֆիթերնին դռներէն ներս կը խոթէին, երբ սարսի մը չուզէր տեսնէին թոնրատուներ:

Ու պատահեցաւ անխուսափելին:

Քուրք գինուորները փողոցներուն մէջն էին, դռնէ դուռ: Գոց դրան մը առջեւ՝ պահ մը սպասելէ ետք, անոնք դուռը ուժով հրեցին: Առ ար պիտի ուզէին, թէ խաղաղութեան դիտաւորութիւն ունէին, մարդ չզիտցու: Հրացանները պայթեցան: Անոնք դէմ զէմի եկած էին Ֆետայիներու մէջ խմբակին հետ, որ վերի թաղը բռնած էր:

Թրքական վաշտը եւ նոր հասած ջոկատները փողոցներուն մէջն էին: Յախուճ շարժումներով զենքերը ուղղած էին տուններուն: Ու վերի թաղի համազարկները իրարու կը յաջորդէին: Քուրք Հրամանատարին համար ստոյգ էր, թէ վտանգաւոր Ֆետային ծուղակի մէջ բռնած էին ու իրեն պիտի մնար յաղթանակի դափնին:

Խուժուած զէպի վերին թաղը:

Մարհատ յարձակումի ազդանշանը տուաւ ճիշդ կէտօրին: Կախով ցիտի մաքրելիմ հաշիւը: Անխուսափելի պատահարէն դուրս գալու ուրիշ միջոց չունէին:

Չորս զիբքերէ համազարկ բացին փողոցներուն մէջ խոնուած թրքական վաշտին վրայ: Անվրէպ հարուածներու հրամանը խիստ էր: Առաջին ստիճի տասնոցները պիտի գործէին, երբ բազմութիւն ելլէր իրենց դիմացը:

Ու զիտակները թուալեցան Ղարսի փողոցներուն մէջ: Քուրքերը յանկարծակիի եկան: Ոմանք պատերուն տակ գլուխ թաքցուցին, ոմանք խուճապով գիւղէն դուրս եկան եւ ինկան Ֆետայիներու զնդակներուն տակ: Կուրծք կրծքի կուր մը սկսած էր: Ֆետայիներն իրենց ընկիւղը գիտէին, իսկ Քուրք գինուորները տասնհակ առ տասնհակ, վեր ու վար, աջ ու ձախ կը խուժէին աննպատակ համազարկերով: Տասնեակներ գետին կը փռուէին միաժամանակ, ու հարուածները կու գային ճիշդ իրենց գիտացէն կամ կողքէն, միշտ աներեւոյթ զիբքերէ:

Յանկարծուտ կուրը հազիւ կէս ժամ տեւած էր, երբ թրքական ուրիշ վաշտ մը գիւղը մտաւ, այն անձնախտահարութեամբ, թէ Ֆետայիները ծուղակի մէջ բռնած են: Անոնց ոչնչացման պատիւին արժանանալը մեծագոյն նպատակն էր Մլոյ դաշտ արշաւանքի ելած զօրամասերուն:

Նոր հասնող վաշտի յառաջագահ երկու ջոկատները, տարբեր փողոցներէն հազիւ ներս մտած էին, երբ զգետնող համազարկի բռնուեցան: Ու երբ զիտակները փռուեցան իրենց զայլերուն առջեւ, սարսիճահար՝ պատերուն տակ ապաստանեցան: Վաշտի մեծ մասը անմիջապէս նահանջեց զէպի դաշտը, հեռաւոր թուճախներուն վրայ դիմք բռնելու համար:

Ղարսը Սարբերու Ասլանի տիրապետութեան տակն էր: Դիմադրող զօրամաս մնացած չէր: Այս ու այն անկիւնը ինկած վերաւորներու նուսպը միայն կը լսուէր:

Գիւղի մարտական ուժերը արդէն զործի անցած էին: Յանկապին աւար ժը փոռած էր Ղարսի պատերուն տակ: Ձէնք ու ռազմամթերք, որոնց ա՛յնքան պէտք ունէին Տարօնի ազատամարտիկները:

Գիւղի մարտական ուժերուն վրայ կ'աւելնար Հարիւրէ աւելի ընտիր պէնք, ու Տնտալիները իրենց կողքին կ'ունենային քաջակորով բանակ ժը: Ուրիշ ի՞նչ անուն կարելի էր տալ այսքա՛ն զինուած ուժերուն, որոնք գիւղի թարժրագիր տանիքներն ու պատերը, թումբերն ու աւերակները բռնած՝ շեշտակի հարուածը ուղղած էին դէպի դաշտը, ուր զօրամասերն ու քրտական ցեղախումբերը պիծակի պարսի նման ամէն կողմ բռնած էին, կոտորածի եւ կողողուտի մեծ ախորժակով:

Կէսօրէն մէկ ժամ ետք, կռիւը զիրքային ճակատամարտի մը վերածուեցաւ: Թշնամին խորտակուած վաշտի իրական կացութենէն անտուգակ, քանի մը անգամ զրո՛ւի անցաւ: Համազարկերէն ինկան յառաջապահները, ու յանդիմող զօրամասերը ետ նահանջեցին: Անոնց յաջորդեցին քրտական ցեղախումբերը, ձիաւոր, սրանք խիզախ արշաւանքներու գիծեցին, սարսափեցնելու այս հայ ֆէլլանները: Ու երբ իրենց շարքերէն, ձիերն ու ձիաւորները միասին թաւայեցան դաշտին մէջ, դէմքերին դարձուցին դէպի նահանջի ճամբաները եւ Հեռացան Ղարսի սահմաններէն:

Հայ Յեղափոխականներու գիւցապական արարքներուն քով, այլ օր, ողբերգական, բայց սրտապնդող իրողութիւն մը պիտի արձանագրուէր: Սարհատի հրամանին տակ Հասէն ու Հասանօն Հերոսական կռիւ մղեցին Թշնամիին դէմ, մինչ անդին, կառավարութեան աչքին փոշի փչելու դժտաւորութեամբ՝ Ղասըմ պէկը ձիաւոր ստուար խումբով մը կը մասնակցէր պաշարումին: Կռուի ընթացքին Ղասըմի Հետեւորդներէն արդէն եօթը հոգի սպաննուած էին, ու թերեւս անոնց մէջն էին Հասէի եւ Հասանոյի զէնքի ընկերները...

Սարհատ, որ գաշտ իջած էր ցեղապիտինէն ոմանք հարուածելու կամ յեղափոխական շարժման միացնելու, անօրինակ կռուի մը կը բռնուէր: Ըսկատամարտը կայծակնային կը դառնար: Կրկնակի նպատակներուն հասած էին Տնտալիները: Թրքական բանակը ճակատար կողած էր, իսկ քըրտական շարք մը ցեղախումբերը իրենց պէկերէն եւ կարիճներէն ռազմաթիւ դիակներ թողած՝ կը հեռանային, իրենց ողբերգութիւնը քրտական երգի վերածելով, ուր Գէորգի փառքը կը հիւսէին:

Իրիկուան զէմ կռիւը դարձաւ հարսանիք: Ձէնք ու ռազմամթերքը շատ: Կռուողներուն թիւը քառասպտակի: Թշնամին Հարիւր յիսունէ աւելի դիակներ ձգած էր գիւղի փողոցներուն մէջ եւ դաշտի յայնքին:

Սարհատ գիւղի քանի մը նշանուոր երգիչներ քովը կանչեց.

- Գիւղի շորս դիրքերէն կռուի երգեր երգեցէք: Ձեր ձայնը մեր հրացաններուն որոտէն աւելի պիտի ազդէ Թշնամիին:

Պահ մը ետք, Հերոսական երգերու արձագանգը կը գնկլտար դաշտի տարածքին: Հեռուէն քրտական ողբերգի խուլ ձայնբը տակաւին կը լսուէին.

- Ծանր կռիւ մը տեղի ունեցաւ ամտէր Ղարսի մէջ...

Ու երգը կը յիշատակէր քրտական կորուստները ափոքանքով ու Կապուկի Բայց երգի զօղանջը բարձր կը թրթար, երբ Սարիբու Ասլանի անունը կը յիշուէր: Կռիւը կարծես նոր կը սկսէր ու դիակները կ'իյնային կեծական թուրէն:

- Հարսանիք այսպէս կ'եղնի, - ըսաւ երիտասարդ Ախօն, - Ս. Կարապետի անտառին մէջ ձէն ու ձգտուն չէինք կրնար հանել: Մաս՝, Ի՞նչ կ'ընես, հրաման առնենք Սարհատէն ու պար մը բռնենք:

- Տղայ՛, խելօ՛ք կ'եցիր, դեռ կոբւր վերջացած չէ: Մեր հարսանիքները թաղում ալ կ'ուենան...

- Թողումը ամէն օր մեր առջեւն է, ուր կտրաւ կտպը...

Պօքը չվերջացուց: Սարհատ կեցած էր անոնց զլխուն վերեւ: Ախօն ոտքի ելաւ: Սարհատ թեւը մտաւ երիտասարդ Ախօնին եւ սկսան պարել երկուքով:

Փետայիները Սարհատի պարը կը զիտէին հրճուանքով: Կը զգային՝ որ յաղթանակը ապահովուած էր:

- Մաս՝, Ի՞նչու տղուն սիրտը կը կոտրես, պարելը կուրի կը նշանակէ:

Սարհատ Ախօն հրեց դիբբի մէջ ու անցաւ միւս դիբբերը աչքէ անցընելու:

Արեւմարը կը մօտենար ու իրենք էլք մը պիտի գտնէին թէ՛ իրենց եւ թէ՛ գիւղի փրկութեան համար:

Թշնամին երկու-երեք ջելումներ հեռուորութեան վրայ կեցած՝ շք-փոթ վիճակ մը ունէր: Փետայիները պարբերաբար մօտին հրացանի ամէնէն հեռուոր տարողութեամբ կրակ կը բանային անոնց վէճ, ու երկու հարկ մեթր անդին՝ դնդակներու տարափէն փոշի կը բարձրանար, աւելցնելով շքոթը թշնամիին շարքերուն մէջ:

Արեւը լեռնապագայներէն սկսած էր քաշուիլ: Մշոյ դաշտին աշմուշը կ'իջնէր: Մութը շուտով կոռուդներն ու կոռի դաշտը պիտի կլանէր: Հրամանատարը քոյի սպային ահանջին՝

- Կատաղարութիւնը եւ մենք միշտ կը հարցնէինք ո՞ր է Գէորգ Պապուշը... հիմա գիտենք տեղը ու բան մըն ալ չենք կրնար ընել:

- Վաշտ մը դօրք կուրին զո՞ւ դնաց... այդ կեազուրը եթէ չհետապնդէինք, վարկերնիս աւելի բարձր կը մնար, - ըսաւ սպան:

- Գիշերը իջնելու վրայ է, զօրքերը ապահով գօտի մը փոխողքենք: Պաւարի մէջ անոնք աւելի վտանգաւոր են եւ աւելի շարժուն, - ըսաւ հրամանատարը եւ կարգադրեց, որ զօրքերը անմիջապէս ջրտական մօտակայ գիւղերու ճամբան բռնեն:

Սեւ հորդանները կը հետանային Ղարսի սահմաններէն:

Խորհրդաւոր գիշերուան մէջ, թրքական գիւղերը հայոց ազատութեան ճանապարհը չէին կրնար փակել:

Մշոյ դաշտի այս անկիւնը, մէկ քանի ժամ Ազատ ու Անկախ էր:

Ազատութեան դրօշակներնեւ կողքին կանգնած էր ժողովրդական բանակ մը, հերոսական խոյանքներով: Ու մէկ օրուան Ազատութեան հըր-հըւանքէն գիշերօթի, պատրաստ էր իր տունն ու սեղը Ազատութեան սեղանին զոհարելու:



Այդպիսի խաղաղ գիշեր ապրած չէր Ղարս գիւղը: Դարաւոր ազատութեան մը հպարտանքով առյուծ, բոլորը ոտքի վրայ էին, - մարտիկ, գիւղապետ, քահանայ, կին ու երեխայ:

Թշնամին հեռացած էր իրենց սահմաններէն, կոտորուած եւ վերաւոր :

Ֆիւրտերը սուղ ու շիւանով դարձած էին իրենց գիւղերը :

Թշնամի շկար դիւզի սահմաններուն վրայ : Իրենց դէմ, այդ գիւղեր կոռուող դուրս պիտի չգար, ցերեկուան սարսափը ապրելէն ետք, Բայց վըտանդը կախուած կը մնար գիւղի եւ աղատամարտիկներու գլխուն : Ճեւալիները գիւղի կիզրոնը հուաքուած էին : Պահակներ դրուեցան անթաներուն գլուխը, ու կարճ խորհրդակցութիւն մը ունեցան :

- Տղա՛ք, կարկուտէն ազատեցանք, անձրևէն չխեղդուինք, - Սարհատ պատկերեց իր մտածումը :

- Կարկուտ կ'ըսես ու կը կենաս, - ըսաւ Գոմսայ Մօսն, - բայց մեզ չըդեհի մէջ նետեցիր, բարեբախտաբար, մեր երկաթէ շապիկը շայրեցաւ :

- Քաշուինք լեռները, Գէո'րգ, դաշտին մէջ մեղ կրնան խեղդել : Այդ գիւղիները որ Ղարսեցիները փոսերուն մէջ թաղեցին, Օսմանցիին հաշուի չ'առնեն, կորան գացին : Վաղը անոնց տեղ, մեր դէմ հազարը կը հանէ, - Գեո'ր Մակարն էր որ վտանգը կը շափէր :

- Լեռներու ճամբան պիտի բռնենք կէս գիւղերին, մինչ այդ, այս գիւղը եղած չեղածով պիտի ազատենք ու նոր ճամբայ կ'լինք, - եզրակացուց Սարհատ, ու դարձաւ գիւղի կոմիտէին եւ երեւելիներուն :

- Ի՞նչ գիւղացիները ճամբայ հանեցէք դէպի հայ գիւղերը, երեք ուղղութեամբ : Զինուած ուժերը ատոնց պիտի ընկերանան :

Դառնալով գիւղապետին եւ քահանային :

- Դուք ալ կիները, ծերերն ու փոքրիկները կ'առաջնորդէք Քր'նէր, անէնէն մօտիկ գիւղը, Ղարսը պէկի մօտ : Ինձմէ բարեւ տարէք եւ ըսէք, որ Սարհատ ձեզ իր քով լրկեց ապահովութեան համար : Ինչ որ ունիք, հետերնդ տոէք, Մէկ ժամէն գիւղը պիտի դառարկուի : Մե՛ վախճաք, մենք մեր թիկունքը կը պաշտպանենք :

- Այս օրը տեսնեք, ալ ի՞նչու պիտի վախնանք, պարո՛ն Սարհատ, - միարեան ըսին քահանան եւ գիւղապետը, - դուք ո՛ղջ ըլլաք, մեր անձներէնները լեռներուն վրայ թող կանգուն կենան, մենք վախ չ'ունենք, կորուսաններէն ցաւ չունինք, մեր տունն ու տեղը ազգին ազատութեան թո՛ղ Դատաղ ըլլան...

Ճեւալիները իրարու երես կը նայէին : Ամէն ինչէ հրատարած մարտիկները անձուէր ժողովուրդ մը կը տեսնէին իրենց գիւղաց, որ մեծով ու պղտիկով ճեւալի դարձած, պատրաստ էին ամէն բանէ հրատարիլ, աղատութեան ի խնդիր...

»

Խորհրդաւոր գիւղերը լեզու ելած էր գիւղէ գիւղ : Կրուն հայ գիւղերը լուռ էին, բայց գիւղացիներու աչքերը կը խօսէին, սիրտերը հրճուանքով լեցուած էին, Քրտական սուգի լե՛ւնները աւելին կ'ըսէին : Թուրք զօրամասերը չէին երեւնար, ու դէպքի ականատեսները անոնց խուճապահար վիճակը կը պատկերացնէին չափազանցուած պատումներով : Ղարսը խորհրդաւոր քարակոյտ մը դարձած էր : Ժողովուրդը կ՛



Հասէր երման գետի պէս: Հարիւրէ աւելի մարտիկներ, թրջական կոնոնա-  
ւոր գէնքերով գինուած՝ գործի վրայ էին եւ ժողովուրդի հոտանքին ուղ-  
ղութիւն կու տային:

Ո՛վ էր տեսիւր հարիւր մարտիկ մէկ գիւղի մէջ, այն ալ ընտիր գէն-  
քերով գինուած: Անոնց անձնագրատան քայլերէն մարդ ա՛յն տպաւորութիւ-  
նը կ'ունենանար, թէ յաղթական բանակ մը կ'առաջնորդեն փառքի հորիցն-  
ներուն վրայ:

Գիւղը կը լսէր հետզհետէ: Ոտքի ձայներն ու շշուկները կը վերջա-  
նային:

Սարհատ գիւղի քանի մը ճամբունորոս վրայ պահակներ դրաւ:

Յակոն, Հասէն եւ Հասանոն ընկերացան այն բազմութեան, որ Ղա-  
սըմ պէկին քով ապաստան պիտի դառնէր: Յաղթանակի ամբողջ պատկերը  
այս մարտիկները պիտի տեղեկացնէին Ղասըմին. Մեյքի կո՛խէն, կամայ  
ակամայ, Ղարսի ժողովուրդը պիտի պաշտպանէր եւ պիտի ուղէր ցոյց տալ  
իր ամբողջական հաւատարմութիւնը:

Ղարսի կեդրոնը հաւաքուած երեսուն Ծեռայիներ, ձիերու սանձերը  
բռնած՝ Սարհատի հրամանին կը սպասէին:

Պահակները վերազարձած էին եւ զեկուցում կու տային Սարհատին:  
Արամ էր կողքին կանգնողներուն.

— Տղա՛ք, հրդեհէն ազատեցանք: Ո՛չ Սարհատ եւ ոչ ալ մենք այսօր-  
ւոն ճակատամարտը հաշուի տաւ չէինք: Ծեռային ալ էր յեղափոխական  
Աստուածը ունի եղբեր...

— Ձեզի կ'ըսեմ, Գէորգը ծուռի է, փորձանք կը փնտել, եւ մեզ ալ  
ծանր փորձանքներու կ'ենթարկէ, — ըսաւ Մակար, — այսօր ազատեցանք,  
չեմ գիտեր, գիշերը տեղ պիտի հասնի՞նք:

— Քեռի՛ Մակար, մենք բոլորս ալ ծուռի ենք, քանի որ ծով թշնա-  
մու գէ՛մ գէ՛նք վերցուցած ենք, — Արամն էր, որ պարզ եղբակացութեան  
կը յանդէր:

— Այդպէս չէ, տղա՛յ, մենք կուտի ելած ենք մեր ժողովուրդի ա-  
զատութեան համար: Գէորգը չեղած տեղն ալ կուտ կը ստեղծէ, փորձանք  
կը փնտել, ցոյց տալու համար որ պակն ու կիներ իր աչքին չեն երեւիր:

— Այդ մասին խօսք չբանաք, — ըսաւ Գոմսայ Մօսօն, — այլապէս  
Սարհատ այս գիշեր նոր ճակատամարտի մը մէջ կը նետէ մեզ:

— Ճիշդ կ'ըսէ Մօսօն, լռենք եւ մեր գործը տեսնենք, — ըսաւ Մո-  
կուճի Ղազարը, որ իմաստուն խրատներ տալու վարկը կը վայելէր Ծե-  
ռայիներուն քով:

— Տղա՛ք, ձիերը չեծէք: Մասնիկի մեր անտառը պիտի հասնինք:

Սարհատ արդէն ձիուն վրայ էր:

— Մեր դէմ ելլողը, թրջական վաշտ ըլլայ թէ քրտական ցեղախումբ,  
կը հարուածէք եւ կ'ունցնիք: Ուղղութիւնը անփոփոխ կը մնայ: Իրարմէ  
կրնանք բաժնուիլ, բոլոր ճամբաներուն ծանօթ էք: Հոն, անտառին մէջ  
իրար կը գտնենք: Այժմ համախումբ պիտի հետեւինք յառաջապահներուն:

Շուները, գիւղի անտօրը լռութենէն ջղախապած՝ երկինքն է վեր  
կ'ունային: Կատուները երբեմն փողօցը կը կտրէին, դիմացի պատի վրայ  
կլլելու: Քանի մը պառաւներ եւ ձերբեր փակուած կը մնային իրենց թոն-  
բատունը: Դարաւոր օճախը հազար տարիներ կանգուն մնացած էր, ու ի-  
րենք աւանդական տունէն չէին կրցած բաժնուիլ:

Գիւղը ձիւերը խուճրի քառաբրդէն թնդաց:

Պահ մը հոգ, երբ ձիւտորները հեռացան ու լուսթիւնը սեւ կուպրի պէս իջաւ Ղարսի վրայ, շուները այս դատարկութիւնը գերտախն ունայրի յէպի երկինք:

•••

Ազատութեան արծիւները թառած էին Մովսարի բարձունքներուն ու լուսեայն գրոյց կ'ընէին կաղնի ծառերուն հետ:

Սարհատի լարուած ջիզերը հանդարտած էին: Ղարսի կոխը կշիռի կը զարնէր, մտածումը ունեւրէն կախ: Երբ հարուածողական արշաւի կ'էջնէր զաշտ, հաշուի մէջ շիւտ Ղարսի կոխը: Ու անակնկալը տեղի ունեցաւ իր կամքէն անկախ: Բայց Ղարսի կոխը երկու զլխաւոր նպատակի հասաւ, տուանց կորուստի: - Թրքական վաշտերը չլմեցուցիչ հարուած ստացան, ու անոնց կորովը ջլատուեցաւ հարիւրէ աւելի դիակներու արիւնստ տեսարանին առջեւ: Իսկ ջիւրտ պէկերը ջախջախիչ դաս մը առին, ու զգացին՝ թէ Սարհուտ Աւլանին գէժ արշաւանքները արիւնով ու սուսով կը գերջանան:

Սարհատ կը խորհրդածէր.

- Մէկ-երկու պէկի փոխարէն տասնեակ մը պէկեր համոզումի բերինք Ղարսի զաշտին մէջ: Վաղուան մեր դործին ամէնէն արդիւնաւոր մասը այս գերջին պարագան է: Թուրքերը կրնան սարսափիլ, բայց հարիւր ասքերի կորուստը հաշուի չեն առներ: Անտէք մարդիկ էին, անյայտ հոթութեամբ մը ունեցան:

Սարհատ խօսքը ուղղեց քովիններուն.

- Տղա՛ք, լաւ հանգստացէ՛ք, վաղը անտառը պիտի պարպենք...

Մովսարի զեփուտները զուրդուրանքով կը շոյէին արեւահար մարտիկները, որոնք ծառերուն տակ, կաղնի կոճղի պէս երկարած, կը մրսփէին:

Յաջորդ օրը, երեկոյեան, երբ արեւի ճառագայթները դեռ կը շոյէին Մովսարի ծառն ու ծաղիկը, Ճետայիներու փաղանգը պատրաստ էր ճամբայ ելլելու:

Մակարն ու Զօլօն, Մօրուք կարօն ու Մանուկ Շէնիկին իրենց մարտիկներով Մասնոյ խորխորատներուն մէջ պիտի աներևութանային:

Աւրանի Արամը Ս. Կարսպետի շրջանը պիտի անցնէր, կորիւնի դործը շարունակելու:

Սարհատին պիտի ընկերանային քսան խեղախ մարտիկներ, որպէս հարուածող բռունցք:

Դասաւորուած խումբերը տունդարձ մը կ'ընէին, կամովին տունէն հեռացողները, իրենց շրջանը պիտի անցնէին երկու շաբաթ, ու թերեւս առիթ ունենային պապենական սեմէն ներս մտնելու, կարճ պահ մը:

Սարհատին ընկերացողները կուրտիկի բարձունքները ոտքի տակ պիտի առնէին: Իրենք ալ տուն վերադարձողի ասորումն ունէին: Այդ անտուններուն մէջ, անկիւն մը, Սուսամ իրենց կը սպասէր յուզումնահար: Հայ Յեղափոխական կեանքի անկարելի հրաշքը... Սուսամի ներկայութիւնը այդ զառթափներուն վրայ, անտառներն ու խորխորատները, քարանձառներն ու ցցուն, ժեռուս դազաթիները տունի վերածած էր:

Քոյր մը ունէին Հոն, Ֆետայիներուն միացած անձնուէր Հայուհի մը կար Հոն, որ իրենց վայրի կեանքին մէջ, պահ մը տան քաղցը շունչը կը բերէր:

Խուճրները ճամբայ էլան: Յաղթական էին: Աւտոն մը Հայրենի երկրին խորշերուն մէջ պիտի աներեւութանային:

Աւ Ֆետայիները միտո թարով կ'ըսէին Մովսարին.

- Մնա՛ք բարով Մովսարի պաղ-պաղ ազրիւրներ, մե՛նք կ'ընքանք արիւնոտ կռուի, դուք գուլալ մնացէ՛ք...

Մտներն ու ծաղիկները, աղբիւրներն ու ծառերուն ապաստանած թռչունները Ֆետայիներուն մրմունջներուն կ'արձագանգէին.

- Սրբա՛ք բարով, դառնա՛ք բարով...

Ճ

Ղարսի կռիւը բացառիկ հորուած մը հասցուց դաշտը տակնուվրայ ընող զօրամասերու վարկին: Բանակը պարտուած էր ու ամօթահար:

Փնտրտուքի էլած էին, ու գտած Սարկու Արլանը: Բողոքաբեր գործատանքը գիւղին ներսն ու դուրսը բռնած, մասնակցած էին վճռական կռուին: Աւ աղքատն դիտկներ փողոցներուն եւ դաշտին մէջ ձգելէ զատ, բազմաթիւ վիրաւորներ կային, որոնք շմեկուցիչ դէպքի պատմութիւնը կու տային արտոագողիցիկ մանրամասնութեամբ:

Ցնցուած էր Մուշի կառավարութիւնը ու կը զգար իր անզօրութիւնը, երբ ազատագրական շարժման անխնայ զործելակերպին գէ՛մ դիմաց եկած էր:

Մուշին եւ Պիթիսէն զօրամասեր կը հասնէին դաշտի արեւելեան շրջանը, բայց իրենց գիմաց կըրուն Հայ դիւղիը միայն կը տեսնէին, ու Ղարսն ալ դատարկուած: Թրքարարոյ վայրագութեան երկու ծերեր ու պառաւ մը դահ կ'երթային, երբ անդին՝ պատերուն տակ, ինկած տասնեակ մը վիրաւոր ասքեարներ կը զանէին, որոնք կը խոստովանէին, թէ Ֆետայիները իրենց ձեռք շտուին որպէս վիրաւորի:

Քանի մը օրերու անորոշ փնտրտուքներէն ետք, վարկաբեկիչ նոր դէպքի մը տեղի շտալու Համար, Թրքական վաշտերու մեծ մասը վերադարձաւ Պիթիս եւ Մուշ: Մակաւաթիւ վաշտեր միայն մնացին գլխաւոր կեդրոններուն եւ ճամբաներուն վրայ:

Այդ օրերուն այլեւս հարցնող չկար, թէ ո՛ւր է Գէորդ Չավուշը:

Ֆետայիները աներեւոյթ կ'զած էին: Անոնց մասին շուրջ իսկ չէր լսուեր որեւէ անկիւնէ:

Լուր բերող չկար: Հարցում ընող չկար:

Թուրքերը իրենց զայրոյթը ծամեցին եւ լռեցին:

Քիւրտերը, այդ անօրինակ հարուածէն ետք, Քէօս Օղլին փնտրեցին՝ անոր բարեկամութիւնը շահելու համար:

Մարհատի խիզախ հարուածները սպեղանի կը դառնային ճնշուած ժողովուրդին:

Տարօնի աշխարհը չէր հարցնէր, թէ ո՛ւր է Գէորդ Չավուշը: Ան ժողովուրդի սրտին մէջ արշաւանքի էլած էր, Բուռիկ Ջալալին տակը, Թուր կեծակին ձեռքը...



Սարճատի խումբը երկու շաբաթ խաղաղ կեանք մը անցուց Փնթա-  
րի, Գոմերի եւ Ս. Յովհաննու վանքի անտառներուն մէջ: Խումբի անդամ-  
ները երկուքով ու երեքով դասաւորուեցան քանի մը վտասակի տուներուն  
մէջ: Անոնք երբեմն միայն հաւաքուեցան Սարճատի լուրջ խորհրդակցե-  
լու եւ իրենց ռազմամիտքի քանակը ստուգելու համար: Այդ պահերուն,  
Սուսամ տնոնց ծառայեց քրոջ մը Կուրդուրանքով, ու կեանքի վայելքն  
հրաժարած մարտիկները անսովոր յուզումով զգացին, որ քոյր մը ունին  
իրենց կողքին, քոյր մը այնքան սրտատուչ նուիրումով:

Ֆետայիի հոգիին ներքին ծաւրերուն մէջ լուռ աշխարհ մը կար, որ  
երբեք չդրոհուրուեցաւ: Հարուստ աշխարհ մը, որ այդ հերոսներուն սըր-  
տին լուռ երգը եղաւ:

Ռ՛վ կրնար երեւակայել, որ Սարճատի խումբը պիտի կրնար զուրս  
զուր Դարսի արինալի զուպարէն, թշնամիի ծովացած ախիբներէն շրջա-  
պտտուած: Գուրգէլը Յրոնքի մէջ, եւ ուրիշ խումբեր այլ շրջաններուն  
ընդհարման ընթացքին՝ նահատակուած էին ամբողջութեամբ, թշնամիին  
բազմաթիւ զոհեր խլելով:

Ու հիմա, լեռներու ծերուկներուն մէջ, կամ մթասառեր անտառնե-  
րուն ապաւինած, անոնք կրկին յարութիւն տուած աստուածներու պէս միշտ  
պատրաստ էին նոր զուպարներու մէջ նետուելու:

Ֆետայիները վարժուած էին կեանքի տարիները հաշուել օրով ու  
ժամով:

Իր կրակներուն պատկումէն ետք, Սուսամի համար օրը հազար տա-  
րի դարձած էր: Հողեպէս ամէն օր, ամէն ժամ պատրաստ էր նահատա-  
կութեան: Ու նահատակութիւնը անմահութիւն էր այս անձնուէրներուն  
համար:



Մտահոգ լուսթիւն մը կար կառավարական շրջանակներուն մէջ:  
Հպարտանք ու անձնապատահութիւն՝ ժողովրդական զանգուածներուն քով:  
Ազատութիւնն ու բռնակալութիւնը դէմ դիմաց, մասյլ դէմքով՝ Խ-  
րարու դէմ ատամ կը կրճտէին:

Քիւրտերը երգերով Սարբու Ասլանի դովքը կը հիւտէին եւ նամակ-  
ներ կը հասցնէին Սարճատին, անոր տեսութեան արժանանալու համար:  
Թրքական կառավարութիւնը եւ Սարճատը մրցման ելած էին արդ  
երկրամասը կառավարելու համար: Քիւրտերը ակնյայտի հակում ցոյց  
կու տային դէպի հայ Յեղափոխական շարժումը եւ դիւրին զործէք ըլլալի  
կը խուսափէին:

Սարբու Ասլանը վտանգաւոր ուժ մը դարձած էր: Ու քիւրտերը Խ-  
րենց աչքին աւելի կը հաւատային, քան Սուլթանի հրամանին...



Հանդիստի վերջին օրերն էին:  
Սարճատ բազմաթիւ նամակներ ստացած էր զանազան շրջաններէն:

Մտածումը կրկին ծանրացած էր անոր ունեւերէն: Կարճ ժողովէ մը ետք, երբ Հանգիստի նստած էին անտառի ստուերներուն տակ, Գոմայ Մօսն սկսաւ իր մարգարէական զրոյցը.

- Տղա՛ք, Սարհատ ծրարներէր կ'որոճայ, շուտով այս տեղերէն պիտի հեռանանք:

- Մեռանք նստելով, - ձայնեցին քանի մը անդուսպ մարտիկներ: Յուլիտի վերջերն էին: Արեւի գոլէն թմրած՝ շատեր կը մրափէին: Երեկոյեան դէժ՝ Սարհատ երեւցաւ իրենց մէջ, ժպիտը դէմքին, լարժումները արագ:

- Ի՞նչ մեռելի պէս պատկած էք, պարի՛ ելիք, Ախօ՛... Մէկ վայրկեան ետք՝ տասնեակ մը արդէն դեմքերը կը դռիէր: Պարտը բերնէ բերան փոխասացութեան պէս անտառին մէջ կ'արձագանգէր: Աւ Սարհատ պարի դուռն էր, աչքերը հեռու հորիզոններուն:

- Տղա՛ք, ձեր պատրաստութիւնները տեսէք, փասփշտակալի եւ ոտնամանի կարկասուք եթէ ունիք, հիմակուրնէ վերջացուցէք, ձամբայ պիտի ելլենք, - ըսաւ Մօսն քովիներուն:

- Ի՞նչ դիտես, ո՞վ ըսաւ, Մօս՛, - ձայնեցին միւսները: - Տնայններ՛ր, Սարհատի պարը մտածում է ու հրահանգի դասուբում, չէ՞ք դիտեր, - եղբակացուց Մօսն:

Աւ պարը կը դառնար, խանդավառ ու պատերազմական: Պարտղներուն դաւաբումներն ու ծափերը թշնամիին դէմ յարձակողականի պատկերը կը ցուցադրէին:

Պարը վերջացաւ... Նայուածքները ուղղուած էին Սարհատին: Կարծես կը հարցնէին, - հիմա ի՞նչ պիտի ընենք:

- Կէս գիշերին ձամբայ պիտի ելլենք, - ըսաւ Սարհատ, - ձեր պատրաստութիւնը տեսէք, ձիերը լուս կերակրեցէք, ու գուք ալ անօթի շմեք: ձամբան երկար է...

Մօսն մոմուց. - Եղա՛ւ... Տղա՛ք, պաշար առէք ձեր հետ: Ձունեցողի յոյսը կը մնայ այն բուռ մը բովուած ալիւրը...

- Տղա՛ք, զիւրա պէկեր եւ իրենց զինակիցները մ'եր տեսութեանը պիտի գան: Անոնց սովորութիւնները գիտէ՛ք, ձեր շարժումները ծանր, ու դէմքի դիժերը լարուած ըլլան: Մանաւանդ ուշադրութիւն դարձուցէք ձեր արտաքին տեսքին: Քիւրտը աչքով կը դատէ:

Սարհատի հրահանգները ստացած էին: Քանի մը ժամուան հանգիստի այդ պահերուն իմբաստաններն ու մարտիկները իրենց պատրաստութիւնը կը տեսնէին:

Սարհատի քովն էին Փեթարի իշխան Պետոն եւ Գոմերի Տէր Սարգիսը: Հոն կը սպասէին տեղական խումբ մը մարտիկներ: Գիտէին որ խումբը պիտի հեռանայ իրենց շրջանէն: Սարհատի վերջին հրահանգները պիտի լսէին:

- Տէ՛ր Հայր, մենք այս դիւեր մութին մէջ պիտի աներեւութանանք: Տեղական մարտիկները քու հրամանին տակ պիտի գործեն: Այս շրջանին լուսածնօթ մեր տղաներէն քանի մը հողի այս տեղերը պիտի մնան: Նեղ օրերուն, մենք այս կողմերը պիտի ապաստանինք: Գիւղական կոմիտէները իշխան Պետոյի խորհուրդով պիտի շարժին: Սարհանգաները անպահաս պիտի ըլլան, - պահ մը լռելէն ետք, Սարհատ շարունակեց, - Մու-

սամբ կը մնայ ձեզ խնամքին եւ վտանգի մը պարագային՝ կ'ըլլայ տեղա-  
կան մարտիկներուն հետ:

Սուսամ յուզումնաւոր մտիկ կ'ընէր Սարհատի հրահանգները, որոնք  
կտակի մը բնոյթը ունէին:

Դառնալով անոր.

— Սուսամ, զուեւ այլ գլուխդ կը պահես այս կտրիճներուն հետ: Եթէ  
մեզի բան մը պատահի... մո՞տ մը կը վստահ մեր հողուն համար:

Սարհատս կեանքին հետ խաղալու լաւագոյն արտօնադրութեանը  
մէջն էր:

Տխուր ժպտո մը զծաղրուած էր Սուսամի, Տէր Սարգիսի եւ իշխան  
Պետոյի դէմքին: Միւս մարտիկները վարժուած էին Սարհատի արտայայ-  
տութեանց: Կեանքը կատակ մը կը դառնար, երբ տեղուպարի կ'ըլլէր:

Ազատութեան պանդխտ հնչիւն կար ժողովուրդի սրտին մէջ:

Ճ

Թիրապացոյ սիրտ մը կը մնար Կուրտիկի բարձունքներուն վրայ:  
Սուսամ արշաւանքի ելած խումբին հետն էր հուզուին: Անոնց խօսքը կը  
լսէր, շարժումները կը տեսէր, Սարհատի եւ սուրբ ընտիրներու շունչով  
կը ստղորուէր: Ու երբեմն, սթափած, ինքզինքը կը զտնէր սենեակին մէջ,  
հիւրասիրուած անշարժ մարմին մը:

Օրերը օրերուն կը յաջորդէին, օրը տարի կը դառնար: Ու Սուսամի  
աչքերը արցունք կը կտրէր՝ Սարհատի եւ ընկերներու ճամբաներուն նա-  
յիւով:

Անդին, Մառնիկի անտառը ետուզեա մը կ'ապրէր: Հոն, հսկայ կաղ-  
նիճներուն տակ, մարտական հսկանները կը ճեմէին, հիւրեր կ'ընդունէին,  
հիւրեր ճամբու կը գնէին: Կեանքի նոր երեւոյթի մը շարժական բեմը բաց-  
ած էր այս լեռներուն վրայ: Ու Տետայինընը, որպէս տէր ու տիրական  
այդ բարձունքներուն, խորհրդաւոր շարժումներուն ընթացքը կու տային,  
իւր սպաւորութիւն գործելով հասնող ցեղախումբին եւ ցեղապետ տղային  
վրայ:

Սարհատ ցեղապետական սպաւորիչ ձեւերը գիտէր: Իր շուրջ հա-  
ւաքուած մարտիկները իրար կը գերազանցէին իրենց կարգապահութեամբ,  
տոտձ քայլերով, եւ հիւրասիրելու ծանրութեամբ:

Ղարսի դէպքէն ետք, Սարհատին տեսնել եւ անոր բարեկամութիւնը  
լահելը ցեղապետներուն համար դարձած էր հրամայական պահանջ մը:

Քրտական շրջանակները, թէեւ անորոշ, բայց հոտառութեամբ կը  
դրային փոփոխութիւն մը Ղասրմ պէկի ընթացքին մէջ: Ու երբ այցելու-  
թեան վայրին մէջ Հասէն ու Հասանօն Տետայիններու շարքին մէջ տեսան,  
համոզուեցան, որ Ղասրմ պէկը դաշնակից դարձած է Գէորդ Չափուշին:  
Իրենց խօսքով, լեռնելու Քէօն Օղլիին:

Բացօթեայ հիւրասիրութիւններն իրենց շքեղութենէն բան մը չէին  
կորսնցնէր, ու անտառի բնական տեսարանը պալատի փարթեմութեան աւ-  
պաւորութիւնը կը թողուր ջիւրտերուն վրայ:

Հոն էր Գէորդ Չափուշը, առիւծներով լըջապատուած: Միջուրջաբ  
հերոսական էր: Ուժի գերազանց ցուցադրութիւնը ցեղախումբերու աչքը կը

խոցներ, ու Սարհատ, այդ բարձունքներուն վրայ, ամենազոր զէմքն էր, որ կախում չունէր ո՛չ Մուլթանէն եւ ոչ ալ քրտական պէկերէն: Սուրբ կարուն էր, Հարուածը՝ անվրէպ:

Ժողով ու գրոյց իրարու կը յաջորդէին երեք օրէ ի վեր:

Սարհատ կը խօսէր պէկերուն եւ աղաներուն հետ, հաւաքաբար կամ առանձին:

- Բարեկամներ, թո՛ղ այս ազն ու հացը հալու մնայ: Մենք նոյն աբիւնն ունինք, բայց դժբախտութիւնն այն է, որ հայն ու քիւրաք իրար չկրցան հասկնալ: Օսմանցին Հարիւր տարի առաջ ձեր ժեծերը կը կոտորէր, երբ մենք ուժ մը չէինք: Այսօր մեզ կը կոտորէ, երբ զէնք վերցուցած ենք ձեր արատաւթեան համար, ու ձեզ գայլի պէս նետած է ձեր ժողովուրդին վրայ: Վաղը, երբ մեր հաշիւը մաքրեն, պիտի դառնան ձեզ խեղդելու: - ձի՛շէ կը խօսէս, աչքի յոյս Սարհու Սարան, մենք ձիւթիւն չունինք ու ատոր երեսէն շատերը բանտ կը մտնեն, ուրիշներ պարսպ տեղ կը սղաննուին:

- Գիտեմ որ դուք թուրքը կը ճանչնաք: Ձեր երգերուն մէջ սմէն օր կը կրկնէք.

- Թուրքը դաւաճան է, անոր հաւատալ չ'ըլլար,  
Թուրքը խաբարայ է, քեզ կը խաբէ...

- Կ'երգէք, ու նոյն օրը կը մոռնաք, երբ հայ մը սպաննել ու կողոպտել պէտք է:

- ձի՛շէ կը խօսիս, Մուհամմէտ մարգարէն քու բերնով կը խօսի:  
- Ո՛չ Յիսուսը, ոչ ալ Մուհամմէտը մեզի չեն օգներ, կթէ մենք իրարու չօգնենք, - ըսաւ Սարհատ:

- Թո՛ղ Աստուած վկայ ըլլայ, զուն մեր ժեծ կըրայրն ես: Գուն իպէտ (Հերոս) ես, այս երկրի Քէօս Օղլին ես: Ո՛ւր որ ըլլաս, մենք քու կողքին ենք:

- Եթէ ձեր խօսքին վրայ հաստատ կենաք, իղեսի (Հերոսի) պէս, շատ քան կը փոխուի այս խառնակ աշխարհին մէջ: Կը մաղթեմ, որ այս եղբայրութենէն ետք, իրարու առջեւ ամօթով չ'մնաք...

Սարհատի խօսքը կը հաստատէին պէկերը բացազանչելով.

- Աստուած թո՛ղ վկայ ըլլայ...

Ու ցեղախումբերը Հեռացան Մովսարի այս բարձունքէն, պահուսակ ու հպարտ, որ Գէորդ Չափուչի բարեկամութիւնը շահած էին:

- Անգամ մը մեր շրջանը եկէք: Մեր ժողովուրդը ձեր երգերը կ'երգէ, եւ փափաք ունի ձեզ տեսնելու: - Կ'ըսէին ցեղապետները: - Մեր մարտիկները պատրաստ են ձեզի պէս Հերոսի մը ծառայելու:

Յեղախումբերը կը հեռանային հաւատարմութեան երգումներով: Եւ իրենց երգիչներուն ձայնը ձորերը կը լեցնէր, երբ անոնք արդէն Մասնիկի վայրէջքներէն կ'անցնէին:

Հաջ-քրտական բարեկամութիւն, ուժի եւ զէնքի վրայ հիմնուած:



Ժայռէն Ժայթքող աղբիւրը կը լրվի՞ր դէպի ձորերը: Աղբիւրը կ'էրգէր քնութեան կրքը, ու ճատայիները, ծառերուն տակ՝ կ'անցի դաժան խնդիրները կը քննէին:

Տեղափոխուած էին իրենց նախկին բանակատեղիէն: Նոր զերթը, զէպօքի մը պարագային՝ ճամբաներ կը բտնար սնունց առնելու զէպօք արեւել-  
եան Մովսարը եւ սև լեռները:

Մառնիկի մարտիկներէն տասնեակ մը, խմբապետի ղեկավարու-  
թեամբ, հսկողութեան պարտականութիւնը ստանձնած էին: Գիւղը հա-  
մոզուած էր, թէ Ֆետայիները հեռացած են զէպօք ուրիշ շրջաններ:

Քրտական աղմկայի շարժումները Մառնիկը վտանգած էին: Բայց  
թրքական զօրքերը Պիթլիտի գլխաւոր ճանապարհին վրայ, Ռաթ գիւղը եւ  
շրջակայքը բռնած՝ իրենց տեղէն շարժելու միտք չունէին: Ղարսի կողմ  
սպասուրութիւնը դեռ թարմ էր, ու հրամանատարները կը զգուշանային  
արիւնայի ընդհարումներէն:

Հարցնող չկար թէ ո՞ւր են Ֆետայիները...

Բայց Սարհատի լեզէնը սովորականէն աւելի յուզումնահար հոգե-  
վիճակ մը ունէր:

- Ի՞նչ պիտի ընենք...

Ոնգիբը զբուած էր անսեղան ժողովին ու բոլորն ալ ճիշդ կը թափէին  
ուզողութիւն մը որդեգրել, հայ-քրտական բարեկամութեան այս մթնոլոր-  
տին մէջ:

Ֆետային երբեք տատանում չէ ունեցած ազատագրական պայքարի  
ընթացքին: Իր ընկելքը գիտցած է, ու գործը կատարած է կեանքի ու մահ-  
ւան վճարականութեամբ:

Սարհատ, նոյն վճարականութեամբ, երկաթը տաք-տաք ձեծելու հա-  
մոզումն ունէր:

- Յեղափոխմանը ուն պէտք է այցելենք անմիջապէս, մեր ցուցադրած  
ուժը անոնց մտքերուն մէջ աւելի ամուր զօրելու համար: Քիւրտը աչքով  
կը համոզուի:

- Գէորգ, Գէորգ, ջիւրտ պէկերն ու աղաները մտէն օր իրարու կը  
դառնն. մե՞զի բարեկամ պիտի ըլլան: Այս հրաշքին չեմ հաւատար, Գէորգ,  
ձեռք քաշէ այս փորձանքէն, - Մակարն էր որ իր սիրտը կը պարպէր:

Սարհատ:

- Գիտե՛մ, տղա՛ք, պիտե՛մ թէ այս պէկերէն շատերը իրենց վախէն  
բարեկամ դարձան մեզի: Գիտե՛մ որ ոմանք կրնան մեզ կռնակէն հարուա-  
ծել: Նոյնիսկ Ղասըմը որ այսօր Մելիք տնունը կը կրէ եւ կոմիտէ կազմած  
է, պողպատէ օղակով պիտի բռնենք, որպէսզի չդաւաճանէ: Բայց թուրք  
կառավարութեան ազդու հարուած մը կու տանք, ջիւրտ պէկերը մեր կող-  
մը առնելով, իրական կամ անուանական իսկ ըլլայ այդ բարեկամութիւնը:

Չօլօն անդիէն մուտաց:

- Չեմ հասկնար, Ֆետային երթայ ջիւրտին քով ու իր վիղը դնէ  
անոր դաշտին տակ, այդպէս բան կ'եղի՞ր...

- Չօլօ՛, տնաչէ՛ն, մենք կ'երթանք, որպէսզի անոնց վիղը դնենք մեր  
վաշտին տակ, - ըսաւ Սարհատ, կէս կատակ:

Ֆետայիները խնայցին, բայց մնացին մտածումներով ծանրաբեռ-  
նրած:

Քանի մը օրէ ի վեր կացութիւնը կը քննէին, առնելիք քայլերու մա-  
տին կը խօսէին կիսատ նոխազատութեամբ ու հարցական իրարու կը նա-  
չէին: Սակայն, Մովսարի ջիւղ մթնոլորտէն մտահոգութիւնը չէր փա-  
րատեր:



Մարհատ կը մտածէր ձիաւոր ստուար խումբով մը անցնել ջրտական քանի մը կեդրոններ: Պէկերն ու աղաները ինչ որ տեսած էին Մառնիկի տնտեսին մէջ, կրկնակի տպաւորութիւն պիտի կրէին կայծակնային բանակէն: Բայց մարտիկ ընկերներու ոմանց անվտանգութիւնն ու վերապահումը տատանում մը տեղի ունեցաւ Մարհատի մէջ:

Այդ օրը, կէսօրէն ետք, Մարհատ ինքիբրեւ կը խորհրդածէր: Արդէն տաննակ մը ջրկատ էր եւ պատուիրած որ պատրաստ ըլլան:

Երեկոյեան կողմը, Մարհատ չէն ու ուրախ տրամադրութեամբ մարտիկներու համախմբման մէջը էր: Կատակն ու հրմշտուքը սկսած էր խումբէ խումբ: Այս մարդանջին մէջ Մարհատն ամէնէն անտակն էր:

- Բան կայ, տղա՛ք, պատրաստ եղէ՛ք, - մռլտաց Մօսօն ծառին տակ հաւաքուածներուն:

Մարհատ կաղնիին կոթնած՝ երբ խօսքը ուղղեց մարտիկներուն, բոլորն ալ լարուած, ձեռքը զէնքին՝ մտիկ կ'ընէին:

- Տղա՛ք, մեր խորհրդակցութիւնները վերջացան: Նկատի առի մեր շարք մը ընկերներու մտահոգութիւնները եւ երկար խորհրդածեցի այդ մասին: Եթէ հարուած տալու որչաւանք մը ըլլար, պիտի շտատանէի: Հիմա մեր ընկերքը այն պիտի ըլլայ, որ մեր հարուածներուն տպաւորութիւնը շարունակուի, ու բարեկամներ շահինք: Այդ պատճառաւ, որոշեցի տաննակով մը իջնել դաշտ: Զիւրէն պիտի հրատարինք, աղմուկով անցուդարձի կարիք չկայ: Հին օրերու մեր սրկեցրած գաղտնի ձեւերը, այս պարագային, աւելի նպատակայարժար կը գտնեմ:

Մարհատ դարձաւ այն տաննակին, զոր ընտրած էր, անուններ յիշելով՝ ըստու:

- Պատրաստ եղէ՛ք, քանի մը վայրկեանէն ճամբայ պիտի ելլենք: Խումբը երկուքի բաժնուած կը մնայ այս բարձունքները, մինչեւ մեր վերադարձը:

Շատեր դժգոհ էին որ Մարհատի հետ պիտի չմեկնէին զէպի գործի վայրը:

Մակար՝ կրկին ուրա ըրաւ խօսելու:  
- Գէտ'ըդ, մի՛ երթար, դաւաճաններու թակարդին մէջ կ'իջնաս: Քիւրտները հետուէն կտոպարէ՛, բայց անոնց մի մօտենար:  
- Մակա՛ր, երկաթը տաք-տաք կը ծեծեն: Փորձ մը կ'ընենք, տեսնենք թ'նչ դուքս կու դայ:

Մարհատ եզրակացութեան եկած էր: Խօսքը աւելորդ էր: Տաննակը արդէն պատրաստ էր, երբ արեւը Ս. Կարապետի գոթէթներէն կ'անցնէր: Մարհատ բունեց դաշտի ճամբան, ու աւելցուց.

- Մուրհանգակները անպակաս պիտի ըլլան:



Մարհատի խումբը Առուառինն էր, Մառնիկի լեռն ստորոտը, դաշտին մէջ:

Քիչերուան հիւրն է Ծեռային: Մարհատին չըլապատու գիւղի մարտիկներու եւ կոմիտէի պատասխանատուներու զէնքին, Ղարսի կոտի հըր-երանքը կար:

- Մեր սիրտը զովացաւ, պարո՛ն Սարգստ, այս անգութները մեր Հոգին վառեցին, դուք ալ անոնց մարմինը վառեցիք, - կոմիտէի ներկայացուցիչն էր խօսողը, - մեր ժողովուրդը ամէն օր մեր արեւով կ'երգանու, մեր արեւատուօթեան աղօթք կ'ընէ...

- Մեր արեւը, երկար կամ կարճ, մեր աչքին չ'երեւիր, այս ժողովուրդին արեւը տաքնաբ, ու ան ազատէր այս դիշատիչներէն:

- Աստուած մեր խօսքը լսէ, - ձայնեցին գիւղացիները:

Սարգստ տեղեկութիւն ստացաւ թրքական զօրքերու կայաններու մասին: Ոտա գիւղը, Առուստինջի մօտիկ, վաշտերը դիրք գրաւած էին: Զօրք կար վարդենիսի եւ իրենց մէջ: Մուշէն Պիթլիս ճանապարհը ու մուր բռնած էին, առանց տեղաշարժի: Անշուշտ թրքական բանակը քրտական ազմկալի երթեւեկներէն կոտորած էր Ֆետայիներու եւ քիւրտ աղաներու կապը: Զգուշութեամբ եւ մտահոգութեամբ կը հսկէր բոլոր անցուպարձերուն:

Լուսաստղը ճամբայ ելլելու նշանը տուաւ:

Սարգստ մեկնելու պահուն խօսքը ուղղեց դիւղի խմբապետին.

- Մենք պիտի անցնինք Մեղրադետը, անդի շրջանները ուղեք անցընելու: Դուք զգուշութեամբ մեր բոլորսիքը նայեցէք:

- Յաջողութիւն մեր գէնքին... - ձայնեցին Առուստինջի մարտիկները:

Ֆետայիները գիւղէն դուրս եկան եւ ուղղուեցան դէպի Մեղրադետ: Առուստինջի խմբապետը գիւղի եզերքէն բաժնուեցաւ Սարգստէն, ու կապուղ քայլերով՝ անյետացաւ դիւղի փողոցներուն մէջ:

Համատարած խաւարի մէջ, խաղաղութիւն մը կը հեւար:

Մտահոգ էին Մանսիի ժայռերուն ապաստանած Ֆետայիները: Մտմտութի մատնուած էին նաեւ Առուստինջի մարտիկները: Սարգստն անցած էր այդ անկիւնէն:

Ոտմբը գիւղէն քիչ մը հեռանալէն ետք, Սարգստ դարձաւ մարտիկներուն.

- Տղա՛ք, վերադառնանք Առուստինջի այն դոմբ, որ մեր ճամբուն վրայ է, գիւղէն դուրս, քանի մը քայլ հեռու:

Ճաննակը քայլերը ուղղեց այդ կողմ ու տեղաւորուեցան դատարկ դոմբի մէջ: Գիւղը տեղեակ չէր այս գաղտնիքին: Պահակները կը փոխուէին, արթուն հսկողութեան համար: Ֆետայիները լրիւ հանգստացած էին, երբ արեւը արդէն քանի մը հասակ բարձրացած էր:

Ֆետայիներու առաջին գործը հղաւ անօթութիւնը հալածել, որպէսզի կազմ ու պատրաստ ըլլային հաւանական դէպքի մը պարտադատին:

Կէսօրին գիւղը խռովքի մատնուեցաւ: Ոտա գիւղէն երկու վաշտ զինուորները Առուստինջը շրջապատեցին: Վաշտ մը գիւղը մտաւ եւ սկսաւ խուզարկութիւններուն:

Գիւղացիներն ապահով ու հանդարտ էին:

Սարգստ անցած էր Մեղրադետէն անդին: Բայց թրքական վաշտերը մօտիկ գիւղերը տեսական հսկողութեան տակ կը պահէին, յանկարծոքս հարուածներէն խուսափելու համար:

Կէս ժամուան փնտառուքը ուղարկելն կը մնար: Մտրակին տակ արիւնդուայ դիւղացիները բաս մը շէնքի գիտեր: Տկար հոշիներն իսկ անդեկութիւն մը շունչէին տալիք:

Եւ սակայն, տեղի ունեցաւ աղիտալի անակնկալը: Քրքական վաշտերը զիւղի բոլոր տուները սանտրած էին: Քանի մը ջոկատներ աւերակ դոմի դրան կեցան: Անոնց մուտքը համազարկով զիմաւորուեցաւ: Կուրծք կուրծքի կռիւը սկսած էր: Գոմի դրան ոտջեւ եւ զիւղի պատերուն տակ հրոցաններու կրակը, տեղի տուաւ համադարկերու բոլոր փողոցներուն մէջ: Քանի մը վայրկեանի բնթացքին արդէն երկու տասնեակ դիակներ ինկած էին զիւղի պատերուն տակ: Ով ո՛ր տեղն էր, մարդ չէր կրնար ջուկել: Գոմի մէջ մարդ մնացած չէր: Ու դէպի դիւղի փողոցները կ'առաջանային ջոկատները, աջ ու ձախ կրակելով:

Սարհատ զիւղի կեղրոնը հասած էր: Հեռուէն նշմարեց Գոմսայ Մօսն որ զիւղացիներուն միացած՝ դէպի դաշտը կ'առաջանար, կորսուելով զիւղական ամբիւնին մէջ:

Սարեբու ատիւնը շուրջը նայեցաւ, ու ինքզինքը մինակ զկաց:

Սարհատ Քրքական ազայի հագուստ հագած էր եւ կը կրակէր զօրքին վրայ, որոնք փողոցի ծայրէն կ'երեւէին: Քուրք քանի մը զինուորներ որ շուտարած կեցած էին իրեն մօտիկ պատի մը տակ, ձայնեցին:

— Էֆէնտի, մերիներն են որ կու դան, մի՛ կրակեր անոնց վրայ:

Սարհատ սթափեցաւ:

Գարմաւ այդ զինուորներուն կողմը եւ անոնց առջեւ անցած:

— Ձարկէ՛ք այդ կեանքները, յառա՛ջ... ու ուղղուեցաւ դէպի այն քիւրտին տունը, որ զիւղին պահակն էր: Քուրք զինուորները անոր ետեւէն այս ու այն տունը կը մտնէին միշտ կրակելով:

Սարհատ արդէն կանգնած էր քիւրտ պահակի դրան: Ներս մտաւ, անակնկալի բերելով քիւրտը, որ զէնքն ստան, դուրս պիտի ելլէր տունէն: Ամենայն հաւատարմութեամբ Սարհատին տեղաօրեց իր տան մէկ անկիւնը, ու դուրս եկաւ, զէնքը ձեռին:

Պահակին տունը ոչ ոք մտաւ:

Ան հոն կեցած էր, կռուին մասնակից...

Առուառիծը արիւնտոեցաւ: Ու միայն Մոսն փրկուեցաւ, ժողովուրդին հոսանքին հետ: Միւսները, ութ ընտիր Ֆեռայիները ինկած էին գոմին առջեւ, ու զիւղի փողոցներուն մէջ:

Քուրքերն իրենց կորուստներուն ուշագրութիւն չզարձուցին: Հաւաքեցին նահատակներու դիակները եւ բոնեցին Մուշի ճանապարհը:

Սպաննուած Ֆեռայիի մը վրայ դրած էին Սարհատի պայուսակը եւ կիթը:

Յաղթական զոտոգութեամբ կը վերադառնային Մուշ, Սարեբու Աօլանի դիակն ալ իրենց հետ...

Տարի ու կէս անցած էր այն օրերէն, երբ Քրքական բանակը Սարհատի արշաւանքներէն ճզակոտոր կ'ըլլար, եւ սակայն Գէորգ Չափուլը կը մնար անհայելի:

Քրքական յաղթանակը հեռագրով հաղորդեցին Սուլթան շահին:

Մշոյ կառավարական շրջանակները սպաննուած Ֆեռայիները թաղելու առիթն ու քիչ մը հանգիստ շունչ քաշեցին:

••

Գիւերը կ'իջնէր այս տխուր տեսարանին վրայ: Ինչ որ տեղի ունեցած էր ժամանակին Տրօնքի մէջ, Գուրգէնի խումբի ցուալի ոչնչացումով, նոյնը տեղի կ'ունենար Ասուատինջի մէջ, սուսի մասնակից Սարճատը:

Տարօնի ժողովուրդը հողեկտն ճմլումով կծկեցաւ ինքեր վրայ:

Մառնիկի բարձունքներուն ապաստանողները հողեկան ողբերգութեան մը կը մտնուէին այս անակնկալ կռուին, որուն արդիւնքը չէին գիտեր: Սարճանդակներ ձամբայ հանած էին ստոյգ լուր ստանալու համար:

Կէս գիշերն անցած էր, Սարճատ միմակ, ընկճուած ու տխուր կը մանէր Մառնիկի անտառը:

Յուզում, զրկախառնում, ու քարացած դէմք: Սարճատ, կտրծքէն զարնուածի պէս՝ մռայլ ու տանջալից դէմք ունէր:

Լաւթիներ աւելի խօսուն էր:

Հարցումներ չեղան:

••

Քանի մը օր ետք, Սասունցի Դաւիթի ձայնը կը լսուէր Ծովստարի բարձունքներէն:

— Դեռ կ'ենդանի եմ...

Հիասթափութիւնը ու սրատողոյր խորշակի պէս կ'անցնէր թուրքերու սիրտերէն:

Անգուցիլի առիւծի մուռնչ կը լսէին...

Կ. Ս.

(Շար.)

ՈՒՐԱ ՈՐԲԵՐԵԱՆ

**ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՄԻՋԵՒ**

Գեղեցիկ է այնքան, որքան կրնայ ըլլալ վտանգը հետաւէն դիտուած : Տաք ալիքներուն վրայ ծփալու անսահման փափաքս աւելի յոյ յագ-  
նութիւն մը կու տայ մարմնիս : Օրերէ ի վեր, հոյնաստեակ տղամազքու-  
քիւն մը կը տանջէ նաեւ հոգիս : Թոյլ տալ բոլոր պրկուած ջիւղերը, աշ-  
խատիլ աւելի թուլնալ, ոչինչ զգալ, աշխատիլ չզգալ : Մեծ գրայնութիւն-  
ներէն մինչեւ ամենափոքր ամուր կզպել պահարանի մը մէջ, ե...

Մփալ, անդադար ծփալ, միշտ ծփալ : Ամէն պատուեան փակել ար-  
տաքին աշխարհի դէմ, բացի անոնցմէ, որոնք կը նային միայն յաներուն,  
ուր աւպերը նաեւ կը ծփան յոյլ՝ անոնց գագաթին : Նայիլ միայն հոն, ուր  
կայ միօրինակութիւն, հեզաստ կեանք : Ուր չկան ձորեր, վայրէջքներ ու  
վերելքներ :

Հեռացում, մոռացում, մեկուսացում : Վերիվայրումներէ յոգնած  
մարմնի մը եւ հոգիի մը համար չկայ աւելի մեծ դարման, քան մոռացու-  
մը ինքնութեան, ետի գոնագոն երեսակներուն : Ոչինչ սպասել կեանքէն,  
ոչինչ տալ անոր : Եւ ծփալ, ծփալ...

Ո՛չ խանդավառուիլ, ո՛չ յուսալսար ըլլալ : Ո՛չ խաբել, ո՛չ խարուիլ :  
Ջնջել ամէն սահման ուրախութեան եւ տխրութեան միջեւ, ժպիտի եւ ար-  
ցունքի միջեւ : Ընել պարտականութիւնները մեքենարար, չմտածել նայնիսի  
իրաւունքի մասին :

Ձմտածել որ կայ վիճակ մը կեանք կոչուող եւ թէ այդ կեանքը իր  
մերկութեան մէջ կրնայ գոհացնել : Հարկ է այդ կեանքը գգեստաւորել,  
գարդարել : Հակառակ պարագային կրնայ ըլլալ այնքան տգեղ, որքան ու-  
մէն իրականութիւն իր ամբողջութեանը մէջ :

Ոչինչ խոստացուած է մարդ արարածին իր ծննդեան, ոչ մէկ մար-  
հակ ստորագրուած : Հետեւաբար, ոչ մէկ իրաւունք :



Ոչ մէկ նորութիւն հոգեկան վիճակիս մէջ : Ոչ մէկ նորութիւն տա-  
լիք թուղթին : Բայց չէ՞ որ ես էի ուզած այս միօրինակութիւնը, այս ծու-  
լութիւնը հոգւայն, մարմնին, սրտին : Ես էի, որ փակեցի ամէն դուռ ար-  
տաքին աշխարհի դէմ :

Կը դիտեմ դէմքս հայելիին մէջ : Անսահման անդորրութիւնը մեռե-  
լային անշարժութիւն մը տուած է անոր : Ա՛խ, ի՞նչ երջանկութիւն : Ոչինչ  
կը սպասեմ կեանքէն, հետեւաբար երբեք յուսալսար պիտի չըլլամ : Գլանի-

կի մը թամօր եւ ամբողջութեամբ դուրս տլուած ծուխերուն ընդմէջէն, անխրակամ նկարի մը տպաւորութիւնը կը թռչում: Վստահարար: Այդպէս պիտի արտայայտուէր առաջին անօրը, որ զիս պիտի տեսնէր այս վիճակին մէջ:

Ոչինչ ունէի: Գծրախոտութիւնս անգամ ինծի չէր պատկաներ: Գրգռութեամբ ինձ, որուն վրայ տարիներով գուրգուրացած էի, արպէս միակ սեփականութիւն:



Աշնանամուտի պազ հով մը կը խազայ բակի ծառերու տերեւներուն ետ, որոնք բուրբն ալ կանայ եմ տակաւին: Բայց կը մտնի: Կը փաթարուի իրարու, կը հեռանան, դարձեալ կը փաթարուին:

Մոխրագոյն կատուն տաք անկիւն մը կը փնտռէ եւ ռսեխով շուք կը պտտցնէ: Մոխրագոյն-կապոյտ օդը փոքր սարսուռներ կու տայ մարմնայն:

Բուրդէ թեթեւ շալի մը պլլուած, բիթս գրեթէ ապակիին փակցուցած, նստած եմ պատուհանին ետեւ:



Յանկարծ, արեւը փայլեցաւ: Թաց մտածումներս կը շոգիանային արեւուն նորածիլ ճառագայթներուն տակ: Ակամայ ժպիտ մը ունեցայ: Ի՞նչ ծիծաղելի գազափարմեր ունեցած էի ինչ առաջ: Կեանքը գեղեցիկ էր:

Այսօր՝ սկսեալ էի ուրեմն: Արեւու ճառագայթ մը կը բաւէր ամբողջ հոգեվիճակս փոխելու:

Մոխրագոյն կատուն մեղադրական կը նայէր ինծի՝ շեշտակի: Գաւառանման էի իրեն: Ամէն կեզմ վարդագոյն էր:

Թաց մտածումներս շարժած էին: Գեղեցիկ տուփի մը մէջ շարքի գանձէք, եւ վարդագոյն ժապաւէնով մը կապելէ ետք, դրի պահարանին խորը:

Օր մը կրնայի դարձեալ պէտք ունենալ անոնց: Երբ ոչինչ մնար ուղեւս, երբ ուսանողութիւնը գար հաստատուիլ մօտս, շատ հանելի պիտի ըլլար գտնել ճիւղ յիշատակներ, որքան ալ մոխրագոյն ըլլային անոնք:

Բ. Ո.

ԲՈՒԶԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ

# ԽԱԶԱԲԵՐԴԻ ԱՍՊԵՏՆԵՐԸ

ՄԱՏԹԵՍՍ ՈՒՌՀԱՅԵՑԻՒՄ ԺԲ. Դարու Պատմիչ Խաչակիր Արշալաններու Ոգրերգութեան՝ իր գիրքի անհրջամ մէկ էջիւ վրայ արձանագրած է Հայկական ապստամբութեան քաղաքացիական պատերազմի ժամանակ, զոր երբոր ես կարգացի՝ ան իմ փառքի միտքիս մէջ անցուցուի, ընդարձակուեցաւ, գրուեց ամբողջ Խաչակրական պատերազմի հոգեմտով՝ որպէս խոստացած մէկ վեպը Հայ դուրսի դիւցազնագործութեանց:

— Անր արքայազգոր կամքը կատարած է, Տէ՛ր Քաղաք, — բառ թանձրէս իշխան՝ խոնարհելով Պաղատին, — բանակը կազմ է ու պատրաստ, երբ ճամբոյ ելլել կը հրամայէք...

— Վազը, առաւօտն իսկ, — վճռուպէս պատասխանեց Պաղատին, — լոյսը բացուելուն՝ անմիջապէս... Այժմէն ճամբայ հանեցէք սուրհանգակները, մին Անտիոք, միւսը՝ Տրիպոլիս, թէ Քաղաքը Երուսաղէմ կը վերադառնայ... ճանապարհին՝ պիտի շղանդաղինք. ըջտապելու ենք մեր Գահին ու գործին...

Թանգրէս Իշխան դուրսը խոնարհացուց՝ լուռ՝ ու զուրս ելաւ Պաղատինի ջանապարհ վրանէն:

Բայց ելլելէն ետքը՝ շփոթեցաւ, թէ ի՞նչ պիտի ընէր. Նախ մտածեց լարելի էր Ղեղերը՝ վաղուան ճամբորդութեան համար. եւ շտապ գնաց իր վրանը: Այնտեղ, ուղեց Հայոց Ամանոսի խաղաղէն քամուած դաւաթ մը թանձր պինի ըծպել: Բայց հազիւ դաւաթը լեցուցած ու հտին էր դարձած՝ օտիպուեցաւ լեցնել երկրորդ դաւաթ մը, այս մէկը՝ նոր իր վրանը մտած Սուրհանգակին համար:

Գաւաթներն ու խոսքեր միաժամանակ կարծկտացին, իրար խառնուեցան, ու թանգրէս անմիջապէս վերադարձաւ իր թագակիր Տիրոջ վրանը:

Դորը այն դարն էր՝ երբ Խաչակիր Ապստամբութեան բանակները յորդելով Հռոմոսի ու Տրիպոլիսի ու Դանուբի հովիտներէն՝ հսկայ, կատաղի այլքներով հոսիս-տարածուել էին յաղթականորէն մինչեւ Սիւրուսի, Որոնդէսի, Եփրատի ու Յորդանանի հովիտները: Անոնց խաչանիշ զբօշանքը իրենց ծփուն շուքը կը ձգէին ամէն բերդաքաղաքի պարիսպէն ու աշտարակէն:

Եւ ամառը այն ամառն էր, երբ Անտիոքի շրջակայ թաքտոցներէն իջած վրիժառու Քիւրճէններ խուժել, վայրենաբար թալլել էին Անտիոքի նորահաստ փողբիկ Իշխանութիւնը. բայց երուսաղէմի Մեծ Քաղաքը փութով օգնութեան էր հասեր, անդիմադրելի հարուածով ցրուել որեւրեմ վահանները, աշխարհը խաղաղեցուցեր, ու հիմա հարկ էր վերադառնար իր գահուն: Թաղթական Ապստամբութեան իջեւանած

բանակատեղին էր Աբամէլ, սուրբական  
Հոմսի շրջանի հին քաղաքին մերկ դաշ-  
տը. ու երեկոյեան խաղաղութեան մէջ  
կը հանդէր ճաշակիր յոյնած քանակը:

Իսկ ջահազարդ վրանը ա՛յն վրանն  
էր՝ ծիրանի մետաքսներով ծալ-ծալ վա-  
րագորուած՝ ուր գողղողացող լոյսերու  
տակ կ'երթեկեկէր Պաղտին Բ. Թաղաւոր  
երուսաղէմի, զուրը թանձրացող խա-  
ւարին պէս խորհրդածալ իր ճակտին  
կնճռունը մատներովը ակօսելով խիտ-  
խիտ:

Ինչո՞ւ սակայն պիտի խանդարուէր  
մեծայայտ Ասպետին սրաի այդ խաղա-  
ղութիւնը... Որովհետեւ յանկարծ ետ  
իր մօտը եկաւ ասպետներու ամէնէն քա-  
ջը եւ ուրի՛մ լունակի՛ հրամանատարը՝  
Թանգրէտ.

- Տէր Թագաւոր, - ծանոյց Թան-  
գրէտ, - այս անգամ ա՛յ՛ մասնաւոր  
սուրհանդակ է հասած Հայոց Ուսու-  
նէն... Հրաման ունի անձամբ ներկա-  
յանալու Ձերդ վեհութեան...

- Ի՞նչ. սուրհանդակ այս անգամ ալ  
Հայոց Ուսուսնէն... Ս՛հ, զօգնութեան  
խնդրանք մը եւս անշուշտ... Երէ՛կ Ան-  
տիոքէն ու Հալէպէն էր, այսօր՝ Եղե-  
սիտէն, եւ վաղը անշուշտ, ուրի՛շ մէկ  
Թակարդէն... Ի՞նչ պայքարի զայս է  
այս... Պաշակիր ամէն մէկ թաղին՝ քա-  
ւական չէ՞՞ միթէ՛ իր սեփական գահին  
հոգը... Բայց, լա՛ւ, լա՛ւ. թո՛յլ տուէք՝  
պայ՛ թիկնապա՛հ, նե՛րս ատաջնորդէ...

Մինչ թիկնապա՛հը զնաց սուրհան-  
դակը հրաւիրելու, Պաղտին ու Թանգրէտ  
մնացին լուռ՝ իրարու դիմաց: Անոր  
կայծկլտուն աչքերէն կարելի էր դուշա-  
կել՝ թէ Թանգրէտի ջիղերը կը լարուէին  
նոր ատգամճակատի մը նախադաշակու-  
թիւնով: Բայց կարելի չէր գուշակել,  
թէ ի՛նչ ծանր խոհեր կը խորացնէին Պաղ-  
տին Թագաւորի ճակտին կնճռունը: Ան  
սկսու փոքր քայլերով արագ-արագ եր-  
թեկեկել մետաքսածալ վրանին մէջ:

Դեռ զի՛շ առաջ քանակին հրամանը  
բաժ էր պատրաստուել՝ վերադառնալու  
երուսաղէմ մայրաքաղաք: Չորս ամիս-

ներէ ի վեր արդէն բացակայած էր զա-  
հէն: Եկած էր Որոնդէսի հովիտը, Թիւրք-  
մէն էլ-Ղաղիէն ու Թուղթեքէնէն վրէժը  
լուծելու համար Անտիոքի Թակարդուտ  
Իշխան Բոժէրին: Լուծած էր այդ վրէժը  
պատուով: Թիւրքմէնը լաւ հասկցած էր  
այլեւս, թէ Պաշակիր Իշխանները իրար  
լքած չէին:

Եւ այժմ Պաշակիրներու Թաղաւորը  
Պաղտին կ'անձապարէր ետ դէպի Երու-  
սաղէմ՝ իր Աթոռը... Այնտեղ եւս Պա-  
շակիր Պետութեան սահմանները լատ ա-  
պահով չէին՝ Եղիպտոսի Սուլթաններու  
յարձակումներուն դիմաց... Ո՞ր մէկ  
ճակատին հասնէր իր սուրը...

Ասպետներու Թագաւորը ժամանակ  
չունեցաւ ենթադրութեանց մէջ թափա-  
ռելու. որովհետեւ թիկնապա՛հը ինչ-  
պէս արագ դացած էր՝ այնպէս շուտով  
վերադարձաւ, հետը՝ Ուսուսնիցի Հայը:

Սուրհանդակը խոնարհեցաւ ասպե-  
տորէն եւ իր ձեռքի կնքեալ թուղթը մա-  
տոյց Պաղտինին: Թագաւորը չքակեց  
կնիքը. զայն դեռ ձեռքին բռնած՝ կո-  
զէր նստուածքով մը կուսակն ամէն ինչ:  
Սուտորէն քննեց սուրհանդակը, ու նկա-  
տեց, որ անոր զգեստէն ու զէնուզրահէն  
կը պակսէին Պաշակրութեան ասպետ-  
կան նշանները... Ու հարցուց յանդիմա-  
նական ձայնով.

- Սուրհանդակ, ի՞նչ ես ըրած, ո՞ւր  
ես ձգած խաշանիւղերը...

- Տէր Թագաւոր, Եղեսիոյ սղատը  
Դքուսին քահկեց-վերցուց զմտնք վրա-  
յէս... Ըսաւ ան. «Գնա՛, ներկայացի՛ր  
Թագաւորին, ատանց Պաշի նշանիդ, ս-  
րովհետեւ անարդուած է Պաշը...»

- Պաշ՛, ի՞նչ անարդանքի պատժու-  
թիւն կը բերես դուն Հայոց Եղեսիոյնէն-  
ինչո՞ւ սղատը կը կոչես Դքուսին...

- Տէր Թագաւոր, կործանած է Հա-  
յոց Եղեսիան... Պալաք Թիւրքմէնը յար-  
ձակեցաւ անհամար զօրքով եւ արեւն  
Թակեց ծովու լախ... Քրիստոնէայ ա՛շ  
խարհը միայն զՔիզ ունի իրեն յոյս՝ ան-  
հաւատին դէմ...

- Պալաք Թիւրքմէնը... Ա՛, Պա-



լաք՝ Միջուկեղի ու Քիւրտիտանի աւազակը՝ - բացազանչեց թագաւորը՝ ձեռքը տալով ճակատին. բայց յանկարծ անդրադարձանալով, թէ ուրիշ պէտք է ըլլային իր հարցումները՝ յարեց, - իսկ ձոսլէն դո՛ւքը, ո՛ւր է եղեսիոյ թագաւորը ի՞նք...

- Իշխանութիւնը ձեզի, Տէ՛ր թագաւոր. եղեսիոյ Դուքսը դերի ինկաւ թշնամիին ձեռքը... Եւ ա՛յդ է պատճառը, որ այս թուղթը ձեզի գրողն է իշխանուհին...

Չարհուրանքի՛ թէ գայրոյթի ցրնցամով մը՝ Պաղտին փրցուց կնիքը թուղթէն, զոր մինչեւ այդ վայրկեանը իր մասներուն մէջ ուղղորդ էր. բացաւ, կար- Պաղտ ու մնաց արձանացած: Ֆրանկ ձոսլէնի հայ կինը՝ իշխանուհի եղնիկ՝ կը սրէր:

«Թող Պաղտին Պետը Քաջ Ասպետներուն՝ ասպետի սիրտով լսէ իմ քիտ խօսքերս:

Եղեսիան՝ խաչակիր աշխարհի Արեւելեան Ամրոցը՝ ճանդուած է Թուրան թիրախներէն քակիմ հարուածով: Գազանները ինչպէս կը բզկտեն իրենց նիբաներուն տակ ինկած որսը՝ այնպէս եւ յափշտակիչները պատառած են ցեղագործ Մայր Եղեսիոյ կուրծքը:

Մեր քաջ ասպետները՝ սէկը աստի դէմ կուրծք տալով՝ ինկած են մահատակ, Քաղաքի պարիսպներուն առջեւ: Ձոսլէն իմ Դուքսը քակարդուած ու շղթայալաց գերի տարուած է Քարքերդի բանտը...

Ու ես՝ անբակներու մէջէն հետիտուն փախուստ տալով՝ հասած եմ Սեաւ Լեռներու ապա- հովաքեան: Քեսուս՝ իմ հօրս տունը, ուրիշ է կը գրեմ թուղթը...:

Թող աների՛ ու խուճայի այս գիրը հասնի Քաջ Պաղտին՝ ին՝ ա՛յ արպէս յուր ու գայծ, այլ արպէս հուր ու բոց: Եթէ

Քշնամին այսօր եղեսիան տուածին ճակատով քանդեց, վազը կրնայ առանձին-առանձին քայ- քայել խաչակիր միւս իշխանութիւններն ալ, եւ օր մը կարգը կրնայ հասնիլ Երուսաղէմի...

Մեր վրէժը միայն Եղեսիոյ վրէժը չէ, այլ ընդհանուր հա- չակիր Աշխարհի վրէժը...»

Պաղտին լրացուց թուղթի ընթերցումը, բայց տակաւին կը մնար արձանացած՝ ջահի աշկերծուող լոյսին տակ: Իր սմբողջ նոզոյն մէջ վարարուած մը կար, որ նմարելի էր իր մկաններու պրկումներուն վրայ: Անոր ձեռքը այնքան պրկուեցաւ, որ մազաղաթը ճնշու- կեցաւ մատներուն մէջ: Այդ բռունցքին մէջ կը խառնային իր մտածումները:

Եղեսիան Երուսաղէմի շափ սիրելի էր եղած իրեն: Ինքն ալ անոր Դքսութեան Աթոռին բազմած էր ու վայելած անոր լուսառատ ճոխութիւնները՝ մինչեւ վեց ասրի առաջ, երբ Երուսաղէմի թափուր մնացած գահը դրաւելու համար Հևոսցած էր եղեսիայէն:

Ո՛վ եղեսիա, զոր ճիւղուհին Քաղաքներու էր կոչած էին բանաստեղծները. Եղեսիա՛ ուր առաջին անգամ Պաղտին Ասպետը զգացած էր Արեւելքի լուսեղէն ու քնքուշ մատներուն շոյանքը իր բիրեղ ճակատին վրայ: Ի՛նչպէս հիմա տւերակ հրեակայել գայն...

Պաղտին թագաւոր՝ Էրազանքէ մը արթննալու նման՝ գոչեց յանկարծ՝ ձեռքը վարկելով խոնաւ ճակատին:

- Թանգրի՛տ, սիրելի՛ Թանգրէտ. հըրամանս է Ասպետներուն... Մենք Երուսաղէմ պիտի չլքեցորդանանք, մինչեւ մեր հետք արած չըլլանք ձոսլէնը Քարքերդի բանտէն...



Քրիստոսեայ աշխարհի 1124 թուականի աշունն էր:

Պաղտինի խաչակիր բանակը, որ արդէն ոտքի էր, կէս չըլլան դարձ մը կատարեց, ու՛ փոխանակ զէպի Երու-

սաղէմ շարժելու՝ սուրաց դէպի Միջազգային:

Ինչ որ պիտի պատահէր՝ պէտք էր արագ պատահէր, դեռ թշնամին շարժընցած եւ իր ուժերը ճակատ չհաւաքած:

Պաշակիր Բանակը կանգ առաւ մը՝ առաջ Եփրատի միւս ափին, դայն ճեղքելէ ետք Մինջախի անջգէն:

Այնքան հանգարտ կը սահէր աշնանային Եփրատը, որ կը թուէր իր զարաւոր ու ամենի հեղեղներուն պղտոր հեքիաթները խոկալ ու հեղեղ՝ դարերով իր ափերն ի վեր եւ իր ափերն ի վար թաւալած-թաղուած բանակները մարդու սերունդներուն, - բանակները՝ հիլլեններու Աղեքսանդր Մեծի, պարսիկներու Գարեհ Մեծի, ու բանակները Հայոց Տիգրան Մեծի ու հռոմայ Պոմպէոսի...

Հսկայ Եփրատը, այնքան տարածուն ու լայն ալիքներով, գրեթէ ուժաթափ եւ անկասկածեղի, կը հետեւէր Պաշակիր Բանակի դնացքին, որ Պաղտին լճաբերանէն էին բարձրացած դարերու համայնակուլ ջրհեղեղները...

Եւ այնքան հրապուրելի էր սեմական այդ անապատի խաղաղ տարածութիւնը, որ Պաղտին Քաջ բոլորովին մոռցաւ, թէ կոթած էր արդէն թշնամի հողերուն...

Եփրատեան այդ ամբողջ գիշերը՝ քունը չըլլեց երբեք Պաղտինի մտայն ճակատին կնճիղները: Վրանի ներքեւ պակած տեղը՝ յիշեց միայն, թէ այդ անապատը հարուստ էր եղնիկներով...

Առաւօտուն, մինչդեռ Պաշակիր Բանակը կ'արթննար իր թմբած դէմքը լըտալու Արեւելքի պայծառ լոյսով, Պաղտին արդէն որսի ելած էր՝ անապատի եղնիկներու հետեւէն...

Անապատի խնձոյքը եղնիկի որսն է: Եւ Պաղտինի օտար չէին ո՛չ այս անապատը, ո՛չ եղնիկի որսը: Տարիներ առաջ որսացած էր ինչպէս կ'ուզէր որսայ հիմա: Եւ իր աղուոր ձին, նիւար եղնիկի մը հետեւէն արձակած ասեն, իրեն այնպէս կը թուէր, թէ եղնիկ մը չէր, որ կը

հալածէր, այլ կը վազէր իր հին-հին յիշատակներու հետեւէն, հետուահոռու...

Բայց երբ Պաղտին այդպէս անկոյթ եւ անկասկած տարածուեցաւ անապատի հորիզոնին, հրապուրուած՝ որսի հանդէս... պատահեցաւ յանկարծակնը, որ ասկայն մշտական ներկան էր արդէն...

Այն խորամանկ Թիւրքէն Պալազը - Բազակ - նո՛յն ճերմակուրը, որ Եղեւթի Ճոյլէն իշխանը գերեզմարած ու Պարբերդ էր տարած... խորամանկ այս ազուէսը՝ որ որսի շան մը պէս քայլը-ըտեսեր էր խորտիշահեր ասպետի հետքերուն վրայ... սարսափեցնող վալլակուժով մը յանկարծ վեր ցատկեց իր թաքստոցէն... Եւ Քինչպէս կը թախարհուրէին ուժասպառ եղնիկները անապատին մէջ՝ ան, այնպէս, դեռ ողջ-ողջ բունեց թաղաւոր Պաղտինը, ասոր որսի ընկեր խումբ մը միամիտ ասպետներով...

Շանթային զատերազմ մը՝ առանց մանրամասնութեանց. առանց բանակներու զուպար-զուպարի կոխելի, եւ առանց սուրբու շաշիւնին եւ տակալու անկումին ու արեւու խաւարումին, կամ լուսնի լացին...

Յաղթանակ մը՝ ո՛չ թէ ռազմիկի, այլ աւազակի. ու պարտութիւն մը՝ ո՛չ թէ ասպետի, այլ ուղեկորոյս որսորդի...

Պաղտին Թապաւորի բանակը սատիկ շարդուեցաւ:

Օ՛, լուռ եւ անզրեղի պատմութիւնները անապատի, ուր հովը կը հարթէ, կ'անհետացնէ լուսով մարդոց քալիւրուն հետքերը եւ արիւնի կաթիլները...

Նոյն գիշերն իսկ, տագնաք, Բազակ՝ հեղեղներէ վալլել իր խոր աչքերուն մէջ՝ առանց խօսքի, առանց դատաստանի, իր սարքերուն առջեւ՝ երկաթէ լըժ-թաներով կապանքներու տակ արեւի տըտու բախտորս Պաղտինը, ու նոյն գիշերն իսկ դայն ճամբայ հանեց, ընծայ դրէց նոյն հին Քարբերդի բանտին:

- Դուռն ձոսւլէն ընկերդ կը փնտռէիր... Զայն պիտի գտնես շուտով...  
 Պալաք Թիւրքմէնը հիմա ունէր մէկի տեղ երկու Թանկապին որո՞ թակարդըւած իր ճիբքաններուն մէջ. Եղեսիոյ ձոսւլէնը եւ Երուսաղէմի Պաղտինը:

Տ՛

Ամիս մը ետք, Թատերական տեսարան մը կը բացուէր Բարբերդի մութ բանտին մէջ:

Ճոսւլէն՝ Եղեսիոյ դուքսը՝ որ խցիկէ շոր խշտեակին վրայ լքուած, ձեռքերը շղթայուած՝ կը սպասէր փրկելի մը, առաւօտ մը՝ ջունէն, թէ երազէն կ'արթննար, իր խցիկին մէջ ընդունելու համար միայն մուկն թանտարկեալ մը, բրտորէն շղթայուած...:

Այն առաւօտ, փոխանակ սոճորական ձեւով՝ փոքր լուսամուտը բացուելու, ահա դրան ծանր կղզանքէ շղթան կը իջնար, Ծխնինները եզան սայլի նման կը ճանչէին, ու կիսաբաց դռնէն ներս կը փլչէր մարդկային զանգուած մը, բանտապահի հարուածին առկ կիսածալ, թէ:

- Մտի՛ր, ահա այստե՛ղ է խաչի ընկերդ, զոր կը փնտռէիր...:

Ճոսւլէն, զիջ-զիջ արթննալով՝ ջունէն, թէ երազէն՝ զարհուրեցաւ տեսնելով շղթայուած մարդկային այդ զանգուածը:

- Աստուած ի՞մ... զո՞վ կը տեսնեմ... Դուռն ուրուակա՞ն ես... Պաղտին Բաղի ուրուականը... Եղրա՞յր ի՞մ Պաղտին, զո՞ւն ես...:

- Մե՛ծ է Աստուած, - հտտաչեց Պաղտին:

- Ի՛նքն է, իր ձայնը... Պաղտին, Պաղտին, դուռն ուրկէ՞, դուռն ի՞նչպէս եկար այստեղ... Դո՞ւն ալ ուրեմն ինկար անարդ դաւին մէջ...:

- Մե՛ծ է Աստուած:

- Մեծ մեր Աստուածը, Պաղտին, սո՛ւղ միայն կապել տուաւ իր Պաղտին գաղտնական ասպետներուն... Մեր չորս գահերէն ահա՛ երեք հատը այսպէս ան-

դուրս կը մնան. նախ Բոնէր իշխանի Անտիոքը, ապա մեր Եղեսիան, եւ հիմա ջու Երուսաղէմը... Ուրեմն մնաց միայն փոքրիկ Տրեպոլոսոյ իշխան Ալֆոնսը...:

- Մե՛ծ է Աստուած...:

Ճոսւլէն այլեւս չէր լսիր. նուազած էր երազի մը մէջ, իր բաց աչքերը՝ դէպի խցիկի փոքրիկ լուսամուտին... ու մեքենաբար կը կրկնէր խօսքերը բախտակից Պաղտինին - Մե՛ծ է Աստուած, մե՛ծ է Աստուած - ու յանկարծ վերադառնալով իր մտածուրդունէն, կ'ըսէր:

- Ա՛, զարհուրեցի՞մ կ'երեւակայեմ, թէ հիմա ի՛նչքան Թիւրքմէններ, Գիւրտեր, Զէչէններ, Էնէպներ կը խուսեն Պաղտինի Իշխանութեանց կալուածներէն ներս, անպաշտպան գառնուկները յօշոտող զայլերու նման՝ ասպատակելու, թալիւրու, լիկելու, այրելու, տաբելու...:

- Մե՛ծ է Աստուած, ողորմա՛ծ է Աստուած:

- Պաղտին, ես հիմա աւելի կը սարսափեմ Պաղտինս մեր այստեղի խուսարումի անդունդէն, քան մահուան սա սեւ շուքէն, որ օրէ օր աւելի կը պաշարէ զիս խոնաւ այս խուցին մէջ...:

- Ճոսւլէն, մե՛նք ուզեցինք, մենք՝ որ մեր գլխուն փլչի մեր գահը, - կը բացուի վերջապէս Պաղտինի լեզուն...:

- Մե՛նք, դուռն ինչպէ՞ս կրնաս ըսել, թէ մենք Ծրանկներս ուզեցինք մեր թագաւորութեանց փրկուածը, երբ դուռն լաւ գիտես, թէ մեր ասպետները քաջ-քաջ կրուեցան հողի ամէն մէկ շերտին համար...:

- Մենք Ծրանկներս մեր մեծ սխալները շնչմարեցինք... Մենք եւ մեր առաջին մեղքն է այս, չհանդուրժեցինք իրար: Մենք չկարողացանք ընդարձակ այս երկիրներուն մէջ միացեալ մէկ զբիտոնեղական համահայտ թագաւորութիւն հաստատել:

Այս երկիրներուն ճանչցած աւանդական վարչաձևն էր՝ աշխարհակալ պետութիւն: Ժողովուրդներ ստոր վարժուած էին այստեղ. Ասորեստան, Պարս-

կաստան, Հոռով՝ էրենց աշխարհակալական միակեան արքայազնով. իսկ մեծնք ինչ բրինձ. մենք այստեղ եւս փոխադրեցինք հարստական մեր երկիրներու բաժանեալ փոքրիկ աւատապետական վարչաձեւը: Ամէն մէկ Սիհեոր, ամէն մէկ Դուքս, Կոմս, Պարոն՝ Եւրոպայէն եկաւ յափշտակեց չորի փոքրիկ շէնք մը, եւ ուղեց այդ անջատ սահմանին մէջ հաստատել իր ինքնավար երջանկութիւնը, բոլորովին անհարգ միւս իշխանութիւններուն, եւ յաճախ՝ իրարու միջեւ նախանձառ ու դաւադիր...

Մինչդեռ, Խաչակիր բաժանեալ այդ իշխանութեանց դիմաց, բնիկ այլազգ ժողովուրդները, որոնց միաբնի բոլորովին օտար էր մերինին նման փոքրիկ անկախութիւններու գոյամիտակը, հեռազնեոյ զօրացուցին այս երկիրներու աւանդական գրութեամբ միանակատ իշխանութիւնը, ու մէկ առ մէկ գրաւեցին մեր առանձնացած գահերը...

Այս մտածումները օտար չէին ձոնիչին: Ան էր բանտի առանձնութեան մէջ՝ յաճախ անդրադարձած էր մեծ ազգտի պատճառներուն, եւ իր հոգւոյն խորը զգացած, թէ իրենք բոլորն ալ իշխանական շատ յանցանքներ գործած էին, Կիլիկեան Դոները անցնելէն ի վեր...

— Այո՛, — ընդունեց ձոնիչն, — մենք շատ սխալներ գործած ենք, եւ այս երկիրներուն մէջ վարուած ենք ո՛չ թէ Խաչի տիրապետութեան մեծ ծրագրով, այլ մեր անձնական առօրեայ հաշիւներով...

— Մենք, սիրելի ձոնիչն, — աւելի յառաջ անցաւ Պաղտին, — ո՛չ միայն չըզիտցանք միացեալ ճակատ կազմել Խաչակիր Իշխանութեանց միջեւ, այլ աւելին՝ չզիտցանք իսկ մեզի գործակից պահել երկրին բնիկ Քրիստոնեայ իշխանութիւնները:

— Սի՛ն թափառում, Պաղտին, սին թափառում անցեալի մարդ ճամբաներու վրայ... Չուր մի զրգռեր մեր սրտի

վէրքերը. այնքան խորունկ են անոնք եւ անբուժելի...

— Ահ, յորդանո՛ւ եմ այնքան... կարծես դարբերու բեռը իմ ուսիս է ծանրացած...

— Հանգչէ՛, Պաղտին, հանգչէ՛, զո՛ւն ալ կը վարժուիս այս չոր խոտակի քաղցր քունին:



Ամբողջ վեց ամիս, այնպէս, բանտին մէջ, փոխնիփոխ զանգատներ էին ու զընացեր ձոնիչն ու Պաղտին:

Անոնք լուր ալ չունէին, թէ արտաքին աշխարհին մէջ, Թիւրքմէն Պալաթ՝ տապալելու պատգամ տա՞ծ՝ ընդարձակի էր իր տիրապետութիւնը ամբողջ Գիւրտիստանի, Եղեւսիոյ ու Միջագետքի վերայ, մինչեւ Որոնդէսի ափերը, ու Հալեպը զարձուցեր իր մայրաքաղաքը:

— Ձմեռն ամբողջ, Խարբերդի բանտի զոյս շրթայուածները խորխափեր էին անցեալի տխուր յիշատակներու քարայրներուն մէջ, բայց յոյսի ոչ մէկ գուարթ նշոյլ ինչպէ՛ս էր անոնց խցիկի մուկ անկիւնը...

Բայց ետքը, երբ բացուեցաւ Հայոց աշխարհի զուարթ գարունը, այն ատեն ահա կատարուեցաւ դիւցազնագործութիւն մը, զոր ո՛չ կապուտալուի բանտարկեալները, ո՛չ ալ անապատի յետզահ կալաք կրնային երեւակայել:

Ամէն ինչ բնական է չարերու աշխարհին մէջ: Ու Խարբերդի պարիսպին դռները պահող թիւրքմէն զօրքեր արտասովոր ոչինչ կը նշմարէին՝ թէ ինչո՞ւ արդեօք վերջին սա մէկ քանի օրերու ընթացքին, քաղաք կը մտնէին կարգ մը օտարական փերեզակներ: Անոնք կը հաւատային, ինչպէս իրենց կ'ըսէին այլ օտարականները, թէ իրենք չըջնակայ բարի, արար վրանաբնակ էմիրներու ու չէյիներու ճորտերն էին...

Ձորա կարծաւանդները, սակայն, ծպտուած ծրագիր ունեցող ուխտակիցներ էին: Մուրազկանի, վաճառականի, վանականի, աշուղի գժուճ կերպարանքի

ներքեւ, անոնք կը կրէին տուր զէնքեր...

Յիսուսն հայ էաջըն էին անոնք, իջած-եկած Մեաւ ինքնեքու ամուր բեր-րորէն, որոնք իմանալով Յրանկ իշխան-ներու զերեկաբուսմը եւ հաւատացեալ աշխարհի ահարեկուսը թալլիչ վոհմակ-ներու դիմաց, խորհուրդը մէկ ըրած էին եւ անմահներու դործ ծրագրած, հաւա-տարիմ՝ իրենց զիւցազմն նախահայրերու ձայնին...

Սի յամուր բերդէն Պահանուս էին, հայց քաջերը, որոնք վտարեցան խոր-հուրս քաջաց եւ կատարեցին զգործս անմահից:

Յիսուսն ասպետները, անշուղ շրջե-լով քաղաքին մէջ, առանձին-առանձին, ճննեցին ամէն կայան ու պահակատուն, ճշդեցին թշնամիին պաշտպանութեան շրջերը, տեղեկութիւններ հաւաքեցին բանտարկեալ իշխաններու մասին, հաշ-ւեցին բերդի մուտքի ու ելքի անցքերը, թէ ո՛ւրիկ պէտք է յարձակիլ, կամ ո՛ւր-իկ փախցնել բանտարկեալները:

Ու դիչեր մը, տակաւին Քարբերդ քաղաքին մէջ ո՛չ մէկ կասկած ու շուղ արթնած, անոնք մէկտեղ հաւաքուե-ցան ու կատարեալ զաղանազործութեամբ սողոսկեցան բանտի պարիսպներէն ներս, որ մէկ քանի պահակներու ձեռքին էր վտահուած:

Այնքան արագութիւ, որքան յան-կարծակի գիրկընդխառն դաշունահա-րումի մը կարճ միջոցին, ասպետները մէկ առ մէկ խելուկեցին պահակները, ու հասան գոտան մեծ աշտարակին խարիս-խի խուցին մէջ՝ իրենց ճակատագրին սպասող երկու իշխանները՝ Պաղտինն ու Ճոսլէնը:

Ճոսլէն ընդուտ իր խտեակէն դուրս ցատկելով.

- Պաղտին, Պաղտին, ելի՛ր, մտի՛կ ըրէ՛... կը լսե՞ս՝ դուրսը ի՛նչ խուճապ կայ...

Դուրսը այնքան աղակալից իրարան-ցում մը կար, որ Պաղտին երկար կատ-կածելու ժամանակ չունեցաւ.

- Արտակարգ զէպքեր ըլլալու են... Կատարի կռիւ մը կայ...

- Ահա՛, դաշունահարի մը սարսա-փելի ճիչը լսեցի:

- Մտի՛կ ըրէ, հայերէ՛ն ալ կը խո-սին...

- Այո՛, կը ծօտենա՛ն...

Պաղտին ու Ճոսլէն կասկած չունէին այլեւս: Դուրսէն, հայեր զիրենք կը փնտռէին... «Պաղտին, Ճոսլէն, ո՛ւր էք... խորտակեցէ՛ք սա դռները...» Անոնք զարհուրանքի ու զարմանքի խառն զգա-ցումներ կ'ապրէին, երբ բացուեցաւ ի-րենց բանտին դուռը...

- Պաղտին թի՛ն ձեզի... խաղա-ղութիւն եւ ազատութի՛ւն...

- Ոն, քակե՛նք շղթաները...

Ինչորք հաւաքուեցան բերդին բակը, որ զարմած էր ուրախութեան աշխարհ մը: Ամէն մէկը իր ծանօթը կը փնտռէր. Այդ միջոցին, Պաղտին ճանչցաւ մէկը.

- Այդ դո՛ւն ես, իմ թորոս...

Թորոս աւ Պաղտին ողջադուրեցան ինչպէս հարազատ երկու եղբայրներ: Թորոս եղբայրն էր՝ Մալթիոյ իշխա-նուհի Մելիտիոնի, Պաղտինի նախին կնոջ... Անոնք արցունքներով համբու-րեցին զիւրար:

- Ինչորք ալ ազատած էք, - ըսաւ թորոս, իր թեւերուն մէջ առնելով միան-դամայն Պաղտինն ու Ճոսլէնը, - քակ-ւած են նաեւ միւս բանտարկեալ տասնը-հինգ իշխաններու շղթաները:

- Դիւցազնագործութիւն մըն է այս, սիրելի թորոս, - ըսաւ Ճոսլէն, - զոր միայն դուք՝ Հայ քաջերը կրնայիք կա-տարել: Բայց մենք պէտք չէ անբաժին մնանք այս յաղթանակէն, - ըսաւ ան ու խլեց ծոնք սուր մը:

- Ամբողջ քաղաքը մեր հրամանին ներքեւ է արդէն, - ըսաւ թորոս, - ժո-ղովուրդը յարձակած ու փախուստի մատնած է Պալաքի պահակազօրքը:

Պաղտին, բերդի բակին մէջտեղ կանգնած, այս բոլորը մտիկ կ'ընէր զար-մանքով, որպէս թէ երազի մէջ ըլլար: մինչ քաջերը բերդի աշտարակէն վար

կ'անձէին արեւնաներէ դրօշակը ու տեղը կը բարձրացնէին Ռաշանիչ դրօշակը...

Բերդը այլեւ եղած էր «ճաշարերդ»:

Իսրայել, սակայն, երբեք իր ծածածու ժպիտին ներքեւ չէր ծածկած այնքան դաւնութիւն: Յաջորդ օրն իսկ, Պայաքի մարդիկը, սթափած իրենց գըլ-խուն իջած յանկարծաճաս շանթէն՝ կը վերադառնային մեծ բանակով:

- Ասպետներ, - ըսաւ Թուրքէն՝ որ քաղաքի ինքնապաշտպանութեան հրամանատարութիւնը ունէր, - վաղուան կոխը աւելի ահաւոր պիտի ըլլայ, քան երէկուանը. քաղաքը պաշարուած է...

- Ահաւոր կոխը նախատեսուած է, - ըսաւ Թուրք իշխան, բռունցքը ծանրացնելով իր սուրբին:

- Ես բաւական ճակատամարտեր վարած եմ խորհրդի Պայաքին դէմ՝ պիտնալու համար, թէ դիւրաւ կոխէն հրատարող աքլոր մը չէ ան, - ըսաւ ձոռլէն հեղնօրէն:

- Ժամանակ չկորսնցնենք, - ըսաւ Պաղտին, - մենք անմիջապէս օգնութեան կոչ պէտք է զրկենք Ռաշակիւր աշխարհին...

- Պատրաստ եմ ես երթալու, - ըսաւ Լեւան քաջ, որ դիտէր դայիբու եւ աղուէսներու անցած բոլոր ճամբաները, - ինծի անձանօթ շէն անցքերը՝ մինչեւ Անտիօք:

- Կու գանք նաեւ մենք, - ըսին Թորոս ու Թուրքէն միաբերան:

- ձոռլէն, դնա՛ նաեւ դուն, - ըսաւ Պաղտին, - քու երեւումդ պիտի խանդավառէ բոլորը: Ես կը մնամ այստեղ՝ բերդաքաղաքի պաշտպանութեան գլուխը... Օ՛ն ուրեմն, աճապարեցէ՛ք:

Նոյն գիշերն իսկ դաղտնի ճամբայ ինկան շորս պատգամատարները: Անոնց առաջին յաղորդութիւնը պիտի ըլլար՝ դաղտազողի ճեղքել պաշարման օղակը ու բացուել դէպի ազատ աշխարհի ճամբաները:

- Բերդը պահպանեցէք մինչեւ մենք

վերադառնանք, եւ անկասկած չուով կու գանք, - եղաւ ձոռլէնի վերջին խօսքը:

- Կը պահպանենք, չուտ հասէք, - պատասխանեց Պաղտին:

Գացողները շուքերու փոխուեցան ու մնացողները բերդի բարձր աշտարակէն անձկութեամբ դիտեցին երկար տանն, մինչեւ որ հեռակայ բլուրի ստորոտէն անհետացան լուսնի շողերուն զիծաց երեւցող երեք ստուերները, իսկ շորորդը անոնցմէ զատուելով՝ հոն մնաց արձանացած երկարօրէն, եւ ապա սխալ վերադառնալ զէպի բերդ...

Մահուան դժիւմ ուրբուականը՝ հեղնող Գիւմերայի մը նման բազմած իրաբարդի աշտարակին զազաթը՝ կարծէք կը մտմտար իր դժոխային տարեգրութեանց մէջ նմանը շարձանագրուած ոչ բերդութիւն մը...

Պա՛ւ մը ետք, բերդ վերադարձող Թուրքէնն էր, իր ընկերները ուղած էին, որ ան ետ դայ՝ աւետելու առաջին յաղթանակը, թէ:

- ձոռլէն եւ ընկերները ճեղքեցին անցան պաշարման օղակը...

- Աստուած հետեւրին, - մրժնեց Պաղտին...

Ճ

Եւ Աստուած եղաւ ձոռլէնի ու Թորոսի ու Լեւանի հետ:

Անոնք հովի նման ալեկոծեցին Մէլրէի ընդարձակ ցանքի դաշտերը: Ետապշտապ... Կար դիրքէնք հալածող, ու կար դիրքէնք կանչող, ու կար մանաւանդ իրենց վերադարձին սպասող...

Անոնք պէտք էր աւելի արագ հասնէին, քան սուրհանդակները: Փրկութեան հրեշտակները պէտք էր վազէին կողմիկներու ոտքերով ու թռչէին արծիւներու թեւերով... Երբ անոնք վերադառնային հոկայ բանակներու առջեւ բարձրացուցած ասպետակն նշանները՝ Ռաշին խաղաղութիւնը այլեւ մէկ ու միացեալ աշխարհակալութեամբ պիտի տարածուէր Քարբերդէն մինչեւ Քեսուն:

ու Երեսփայլէն մինչեւ Երրուաղէմ: Այդ միացեալ արքայութեան մէջ այլեւս պիտի չըլլար խորութիւն ո՛չ Ծրանքի, ո՛չ շայի, կամ Յօյնի եւ Արարի միջեւ. բոլորը պիտի ըլլային միացեալ մէկ տղոգորգ:...

Մնացողները Հաւատք ունէին այդ լուսաւոր ապագային վրայ ու տենդազին լծուած էին բերդի պաշտպանութեան. զացողները Հաւատք ունէին այդ լուսաւոր ապագայի վրայ ու անդադար կը յառաջանային:...

Յերկնքերը, թուուածներու մէջ պահուածներով ու գիշերները միայն ճամբորդելով՝ անոնք անցեր էին վասնփաւոր շրջանը, Քիւրտիստանի ամենի Չակրոսեան լեռնաշղթան՝ Չոկ գետի երկայնքին, եւ ահա դարձեալ Հասեր էին մեծ Եփրատի ափերուն:...

Ու դարձանային այս եղանակին, ո՛րքան յորդուն է Եփրատը: Անոր թաւալուն յորձանքները կը պատմեն դարեւու անձկութիւններն ու կոտորածներն ու կործանումները:...

Ճոպլէն չհամարձակեցաւ անցնիլ գետը, որովհետեւ այլեւս լողալու ուժ չուներ իր թեւերուն մէջ:

Քաջ լողորդներ են թորոս ու լեւոն, եւ Ճոպլէն անոնց միջեւ ապահով կ'անցնի զրոտկան ափէն արաբական ափը:

Բայց անոնք ճամբորդելու են տակաւին օրերով: Ու միայն անապատի մէջ ճամբորդած մարդիկ գիտեն՝ թէ ի՞նչ վտանգներ կան այնտեղ: Օրէ օր ուժը կը նուազի անոնց մկաններուն ու ջիղերուն մէջ. յոգնութիւն, ծարաւ ու քաղց ծանր բեռներու նման կը կախուին անոնց ծունկերէն ու զանոնք ամէն քայլափոխի քիչ մը աւելի կը խրեն աւազներու մէջ: Անոնց սրունքները արիւնած են՝ ամէն քայլի իրենց ոտքին փաթթելով տատասկներէն, ու ծարաւի աւազները անյագօրէն կ'ըմպեն անոնց ճակտէն կաթոռ զրախները, գիշերներն ի՞նչ էրբ կը ճամբորդեն, իսկ ցերեկները՝ նստած տեղերին՝ անապատի աւա-

ղը Հայկիի մը նման արեւուն ջերմութիւնը կը կրկնապատկէ անոնց այրած դէմքին վրայ:...

Գիւղացի ճամբորդ մը կը հանդիպի իրենց: Ան կը ճամբորդէր իր ընտանիքով: Գաղթական մըն է աւերակ Ռուհառայէն, մնացորդ բեկոր մը Հայութեան՝ որ կը գիտէր դէպի ազատ աշխարհ՝ նոր բոյն մը շինելու:...

- Թոյլ տուր, - կ'ըսէ գիւղացին, - որ մեր Հեռը երթամ:

- Վասնզաւոր է, - կ'ըսէ թորոս, - շարունակէ՛ դուն քու ճամբաք ընտանիքիդ հետ:

Բայց ուռւայցիին չ'ուզեր բաժնուիլ թորոսէն.

- Ընդհակառակն, - կ'ըսէ ան, - զուք աւելի ապահով պիտի ըլլաք ճամբորդելով ընտանիքի հետ... պիտի արթնցնէք նուազ կասկած:

- Այժմ մեր առաջին հոգն է ապահով Հասնիլ Ռաշակիի իշխանութեան ազատ մէկ հողը, - կ'ըսէ Ճոպլէն, - ու եթէ մենք ապահով Հասնիք, ես կը կրկնապատկեմ, կը տասնապատկեմ քու կարծանիքդ, ըսէ՛ թէ ուր է քու կարտածդ:

- Ես ձեզ ապահով կը հասցնեմ ու վարձք չեմ ուղեր, - կը պատասխանէ ուռւայցիին, - ես քեզի վերադարձուցած պիտի ըլլամ միայն քու հին մէկ բարութիւնդ ինձի... Գուն անգամ մը՝ քու ասպետներդ գրկելով ապտոցիք թիւրքմէն աւազակներու կողմէ յափշտակուած իմ ոչխարներս... Բայց ահա ես ու կինս, ու մեր մանուկը, նաեւ աս մեր գառնուկը. այժմ միայն մնացած է մեզի աշխարհէն... Ամբողջ ընտանիքովս ծառայ եմ քեզի. ո՛ւր ուզես՝ այնտեղ կը տանիմ ձեզ... Բայց թող տուր՝ նախ աս գառնուկը մորթեմ, որ սնունդ առնէք:...

- Չգուշացի՛ր դառնուկը մորթելէ, եղբայր, - կ'ըսէ Ճոպլէն, - կ'ուշանանք եւ ուշադրութիւն կը հրաւիրենք... Մենք պէտք է աճապարենք միայն:...

Ու խուժքը կը շարունակէ իր ճամբան, գաղթական ընտանիքի մը ապահովութիւնով ծպտուած այժմ:

Սուրբ ընտանիքի պատկերով այս թափօրը վերջապէս կը հասնի իր կայանը, Սեաւ Լեռներու գոգը՝ Քեռուէ... ուր ձոսլէն կը գտնէ իր կիներ՝ սուգերու մէջ նստած...

Ան զինք մեռած կը կարծէր արդէն: Այնտեղ են նաեւ ասպետները, որոնք սպասած էին Սղեմիոյ աղէտէն:

Ասպետները կ'ուրախանան, իսկ իշխանուհին կու լայ շարունակ՝ կորսւած ցուցած իր ջիղհրուն զսպանակը:

- Զոսլէն, ի՞մ ձոսլէն, գերութեանդ մէջ, դարձեալ զքե՛զ միայն ես սիրեցի. տառապանքն ալ սէր դարձաւ իմ մէջո՛ւ՝ երբ ան զեզ յիշեցուց ինձի, ձոսլէ՛ն, ի՞մ ձոսլէն... Եթէ ես չմեռայ՝ քեզի սպասելու համար էր միայն, ձոսլէ՛ն, ի՞մ ձոսլէն...

Բայց ձոսլէնի համար՝ օրը սիրոյ կամ ուրախութեան օր չէր:

Առանց դադարի, ան կը վազէ Անտիոք, կ'իջնէ Տրիպոլիս, կ'անցնի Երուսաղէմ...

Փողերը կ'արձագանդեն լեռնէ լեռ, սուրբեր կը փայլատակին բերդէ բերդ, ու դաշտերէն ու անապատներէն հոսելով սրակիր ասպետները զոնդ-գունդ կը հասնին բանակատեղի:

Երկու ամսուան մէջ, ձոսլէն գլուխը կանգնած հսկայ բանակի մը՝ ահա միւս մտանգաւոր օտար անցած է դարձեալ խորհրդապաշտ Եփրատի... Ո՛ւր կ'երթայ բանակը, սակայն... Հրամանատարական վրանի ներքեւ նստած են ձոսլէն ու Թորոս, կը ծրարեն:

- Բայց մենք պէտք չէ տեսիլ օպասենք այտեղ, - կը վիճի Թորոս, - Անտիոքի բանակը եթէ պիտի ուշանայ՝ թող մեր ետեւէն հասնի, մենք յառաջանանք անմիջապէս:

- Բայց զանոնք մտանգած կ'ըլլանք այս անապատներու մէջ անանձին թողլով, - կը պատճառարանէ ձոսլէն:

- Մեր միակ գործը պէտք է ըլլայ՝ ժամ առաջ հասնիլ Ռաշարիղի մէջ մեզի սպառող ասպետներու օգնութեան, - կը պնդէ Թորոս, - եթէ դուք սպասելու

ժամանակ ունիք՝ դեռ դանդաղեցէ՛ք, ու թող ես երթամ իմ յառաջապահ գունդով...

- Թող ըլլայ այդպէս, - կը համակերպի ձոսլէն...

Ու Թորոս իր քաջերու խումբը զինած՝ կը նետուի յառաջ, հետը՝ Լեւոն քաջ, անձկալից սպասուժի մէջ թողլով ձոսլէնը՝ իր ետին:

Շատ շանցած, սակայն, սակաւն Անտիոքի բանակը չհասած, ձոսլէնի ձայնիւրձ ետ կու գայ Լեւոն:

- Բարի ըլլայ դուրս, ի՞նչ լուր Ռաշարիղէն...

- Ամէն ինչ վերջացած է... Թորոս իշխան յառաջացաւ, ըստ զիս ետ զըրկեց, ըսելու ձերդ դքսութեան, որ անմիջապէս ամրացնէք ձեր զինքերը...

- Ըսէ՛ ինչ որ պիտես, Լեւոն:

- Թշնամի բանակները երկու թեւերով կը թաւալին գետի հոսանքի վերէն ու վարէն՝ ձեզ օղովելու համար իրենց աքցանին մէջ... կը սպասեն Պալաքի:

- Բայց դուն նախ ըսէ, թէ ի՞նչ է պատահած Ռաշարիղի ասպետներուն...

Ահա՛ թէ ինչ էր պատահած:

- Ինքզի ժյուզումէն ազատած հայ քաջեր պատմեցին Թորոսի, թէ ձեր մեկնումէն ետք, երբ Պալաք աղուէս կը լսէ լուրը, թէ հնարքով մը իր թերթին բանաւարկեալները տէր դարձած են անոր, կը հրամայէ իր զազաններուն:

Ճեղքէի արագութեամբ պիտի հասնինք անոնց վրայ:

Երբ Ռաշարիղի պարիսպներուն մօտենալով Պալաք անձամբ կը տեսնէ, թէ երբեմնի իր դրօշակին տեղը կը ծածանի ասպետներու խաչանիշ դրօշակը, կը հաւատայ անշուշտ, թէ թախտը միշտ ալ ժպտուն զէմքով պիտի չդիմաւորէր զինքը...

Անմիջապէս Պաղտինին կ'առաջարկէ պատուաւոր հաշտութիւն:

Քի՛նք դնում Ալլահով, - կ'ըսէ ան, - որ քեզ ողջ-առողջ քու գահիդ կը վերադարձնես:

Պրանկը, սակայն, բաւական ապրած



է այս երկիրներուն մէջ՝ շահատարու  
համար թիւրքմէնի երդումին: Որովհե-  
տեւ, ան կը հաւատայ ուրիշ բաներու.  
ան կը հաւատայ, ու ժամէ-ժամ կը սպա-  
սէ, որ հորիցոնը շուտով պիտի բացուի  
եւ պիտի հասնին փրկութեան բանակնե-  
րը, յաղթական երգերով. ան կը հաւա-  
տայ անպարտելի նուիրումին՝ իր կող-  
քին կանգնած յիտուն քաջերուն...  
Ու հաշտութիւն չընդունողին բա-  
ժինն է դաժան կոխը:

Պալաք անձամբ կը վարէ բերդի  
վրայ յարձակումները:

Բերդը կը քաջարի փխրուն խաւի մը  
վրայ է կանգնած: Պալաքի բաբանները  
անդադար եւ ուժգին կը ծեծեն պարիսպ-  
ները, ու մեքենաներ կը փորփորեն աշ-  
տարակներու խարխոխները, այնքան  
կատաղորէն, այնքան արագ - հակառակ  
իրենց գլխուն տեղացող նետերուն - որ  
կեղբորի հակայ աշտարակը կը փլի յան-  
կարծ՝ դատաստանական օրուան ահաւոր  
փրկումովը...

Կատարի վոճմակը կը խուժէ բեր-  
դէն ներս՝ ջարդելով, աւերելով, հրդե-  
հելով...

Եւ իր բոլոր յոյսերը փլած, կը յանձ-  
նուի Պաղտին թագաւոր:

- Դժոխադէմ բախտը կը հալածէ  
մեզ, Լեւոն... Լուր ունի՞ք, թէ ուր են  
հիմա մեր քաջերը...

- Պաղտին եւ իր ջրով որդին՝ իշխան  
Փալեբան, նաեւ միւս տասներէնը Փրանկ  
բանտարկեաները հիմա Պալաքի առջեւ  
ձգուած՝ չլիսալակապ դերի կը բերուին  
մայրաքաղաքը՝ Հալէպ... Այնտեղ ան-  
շուշտ Պալաք, ճիշդ ինչպէս որ ըրաւ  
Անտիօքի իշխան Բոժէրի եւ իր քառա-  
տուն ասպետներուն, իր ժողովուրդին  
առջեւ հրապարակային խնձոյթ մը պիտի  
սարքէ՝ գլխատելով իր գերիները...

- Իսկ բերդապահ միւս քաջերը...

- Անոնցմէ մարդ չկայ գերիվարեալ-  
ներու շարքին...

- Երանի անմիջապէս վերադառնար  
Թորոս իշխան, որպէսզի մենք այստեղ  
կազմենք մեր ինքնապաշտպանութեան  
չորքը...

- Ընդհակառակն, - յարեց Լեւոն, -  
Թորոս իշխան անմիջապէս աւելի յառաջ  
խորացաւ, դռնելու եւ գաղտագողի հե-  
տեւելու համար Պալաքի հետքերուն ան-  
ձամբ... Իսկ զիս ետ ձեռի զրկեց, որ-  
պէսզի՝ եթէ ժամանակ գտնէք վերա-  
դառնաք Եփրատի արտաքական ապահով  
ափը...



Անպարտութիւն եւ անձկութեան մէջ,  
ձուլէն հաղիւ լրացուցած էր իր բանակ-  
ները Եփրատի ապահով ափը վերամփո-  
փելու ուղղակիութիւնը, եւ դիտա-  
բանէն շարունակ կը լրեսէր գետին  
միւս, թշնամակուն ափը, երբ իր դէտե-  
րը լուր բերին՝ թէ փոխանակ թշնամի  
բանակներու, դեռի հանդիպակաց ափէն  
իրենց կը ձօտենար սպիտակազրօշ նա-  
ւակ մը...

Խաղաղութեան բանազնացներ էին  
կեղծները:

- Սալամ ալէքում, - ողբունեցին  
պատգամաբերները, - Ալլահի ողորմու-  
թիւնը՝ մեր քուրբին վրայ... Խաղաղու-  
թեան ողջոյն կը բերենք ձեզի իշխան  
Թիմուրթալէն...

- Թիմուրթալ... - զարմացու ձու-  
լէն:

- Պալաք սպաննուած է, - ըսին  
պատգամաբերները, - անձանթ նետ մը  
գայն ձիւն վար ձրեց... Ու մեր բանակ-  
ներուն պետը հռչակուած է ահա Թի-  
մուրթալ...

- Ողջոյն տարէք Թիմուրթալին, -  
ըսաւ ձուլէն...

- Թիմուրթալ չուզէր պատերազմել  
Փրանկներու դէմ, - ըսին պատգամա-  
բերները, - Թիմուրթալ խաղաղութիւն  
կուզէ, եւ պատրաստ է Պաղտին թագա-  
ւորը եւ միւս գերիները ձեզի վերադար-  
ձրենելու հարկը հազար ոսկի Փրանքի  
փրկագրիով, ու խաղաղութեան դաշինք  
կնքել ձեզի հետ...

- Ընդունեցի, - վճռեց ձուլէն, -  
Թող հաճու ըլլայ Թիմուրթալին՝ կնքել  
խաղաղութեան դաշինքը ու մեզի յանձ-

նէլ թագաւորն ու գերեզմարեալները, եւ անմիջապէս կը ստանայ Հարիւր Հազար ոսկի Քրանքը...

Ու գետի երկու ափերուն վրայ շարունակ Հնչեցին փողերը, բացաւտեցան խորոյկները խրախճանքի, ու փայլատակեցան սուրհրը շուրջպարերու, մինչև որ վերջապէս՝ արցունքներու հոտին պղտորած աչքերով իրար ողջագործեցին Ճոսէն ու Պաղտին...

- Իայց պատմէ՛ ինձի, սիրելի՛ Պաղտին, - ըսաւ Ճոսէն անձկութեամբ, - Ի՞նչ կ'ընէ պատահեցաւ ինչպէս յետուն ասպետներուն...

- Անոնցմէ շատերը նահատակուեցան, - ըսաւ Պաղտին, - իրենց դորձը թողլով մեզի... Իսկ ողջ մնացածներէն անոնք, որոնք տակաւին կանգնած էին կռուի պատնէշին վրայ, երբ տեսան, թէ մենք յանձնուեցանք՝ նետուեցան պաշարման օղակին մէջ եւ անյայտացան... Իսկ քաղաքի բնակիչները ջարդուեցան ու պարիսպներէն դահլիճէ՛ նետուեցան...

- Անոնք զոհուեցան մեզի համար, Պաղտին, - ըսաւ Ճոսէն գլուխը խոնարհեցնելով:

- Աստուած խաչին լոյսը անպակաս ընէ անոնց վրայէն, եւ...

Պատահութիւնը ընդմիջուեցաւ փողերու ուժգին եւ անզգար Հնչումով... ՀՅորո՛ս, Թորոս իշխա՛նը եւ Յաշաբերդի

ասպետները՝ կը զոռային ձայներ...

Պաղտին եւ Ճոսէն վազկցին դէպի Հրապարակ... Եւ ի՛նչ գեղեցիկ պահ էր այդ՝ անկեղծ քաջերու գերկրկնախանութի... Ահա Թորոս եւ Յաշաբերդը ազատագրող ասպետներէն քոսն վերադրողները...

«Կեցցէ՛ Թորոս իշխան, կեցցէ՛ն Յաշաբերդի ասպետները», - կը զոռային ուրախ ձայները, երբ Պաղտին ու Ճոսէն մէկ առ մէկ կ'ողջագործէին յաղթական հերոսներուն հետ...

Եւ լուսնիան պահի մը ընդմիջումին, Պաղտին յառաջ անցաւ, գնաց ըրունեց Թորոսի աջ բազուկը, եւ զայն ըրունած այդպէս՝ երկու քայլ աւելի հրապարակ գալով եւ իր ձեռքին մէջ բարձրացնելով Թորոսի աջ բազուկը՝ ըսաւ հանդիսաւոր ձայնով.

- Իսկ այդ նեղանցք կիրճին մէջ, ժայռի թաքտոցէն իր գանձանօթ նետը արձակելով Պաղտը մէկն վար գլտորդ բազուկը ահա ա՛յս բազուկն էք... Թորոսի աջ բազուկը... որ վրէժը լուծեց մեր նահատակներուն ու փակեց Պաղտի մեղքերուն հաշիւը...

- Ու վերստին կեանքի բերաւ մեղրուրս, - յարեց Ճոսէն ու վազեց փաթթուեցաւ Թորոսի վզին... Թորո՛ս, ի՛մ անդին՝ Թորոս...

Ք. Ե.

ԱՐՄԷՆ ԲԱԲԱՅԵԱՆ

**ՄԱՆՅՐ ԻՄ, ՈՐՔԱՆ ԿԸ ՍԻՐԵՄ ՔԵԶ...**

– Դա՛ն... խորք մտնա մրն ես... – պոռայ տղեկը...  
 Ու ձայնին մէջ վիշտ, ցառում, ընդվզում եւ մտնուկի իր վիրաւոր  
 արժանապատուութեան բազմքը կար:  
 Ձեռքը, գոր վեր վերցուցած էր կրկին անգամ հարուածելու համար  
 սղան, ֆարացաւ պահ մը... ու վար ինկաւ փշրուած:  
 Անգուսպ, սակայն արդար այդ պտտկումին սեւաւոր ծանրութեանը  
 տակ ջանքախնայած, ինկաւ բազմոցին վրայ, ու շլմորուն հայեացքը պտըտ-  
 ցուց աննպատակ:  
 Ապահովարար՝ ոչինչ կրցաւ տեսնել...  
 Միտքը արթուն էր սակայն. կը գործէր զարմանալիորէն կանոնաւոր  
 ու յստակ: Ու հեղ մը այնպէս կարծեց. թէ անցեալը կը տազանցէր իր հո-  
 գիին տեսողութեան առջեւէն...

.....  
 Երբ առուսմացաւ, երագներու աշխարհ մը՝ օժիտ բերաւ իր հետ ա-  
 մուսնոյն տունը. իր ճար տունը:  
 Աշխարհ մըն էր իրը, ուր ոչինչ կար իրական. այլ՝  
 «Հագար ու մէկ գիշերներ»-ում առինձնոյ հեփթաթները լուսէ...  
 Գրախոսային կեանք մը երփներանգ...  
 Ո՛չ յուսախորտութիւն, ոչ վիշտ...  
 Ահա, այսպէս է, որ կը հասկնար կեանքը:  
 Իւ այս բոլոր մտածումներուն ծնունդ էր պարզեւած ինք՝ վառ ե-  
 թեակայութեամբ մը: Սակայն, զանոնք հրահրելուն մասամբ ալ օգնած էր  
 ամուսինը, սկիզբէն իսկ, իրար ճանչցած ու իրար սիրած օրերէն:  
 Այս բոլորը կը բնորոշէին սակայն, որ անկազմակերպ տարազութիւն  
 մըն էր ինք. անհարաւարակշիռ՝ կեանքին սեմէն ներս ծտէր զնոյզ անձ մը  
 որպէս:

... Սակայն աւա՛ղ:  
 Բոլոր երագներն ալ ցնդեցան, երբ զգացին իրականութեան պաղ  
 հալումը:  
 Երագին ու իրականութեան միջեւ, կար հսկայ սարքերութիւն մը:  
 Դառն ու առողջութ էր իրականութիւնը. աւելի՛ խան կրնար երեւա-  
 կայել երբեւէ:  
 Իրականութիւնը կեանքին, իր մերկութեանը մէջ, չափազանց ծանր  
 կշռեց իր անկազմակերպ հագիին եւ թոյլ ուսերուն վրայ...  
 Ու գիտցաւ մանաւանդ, որ կեանքին պաստառը ունի երկու գոյն  
 միայն.  
 Սև... ու... ճերմակ...

Փուլում. ահալի վազում մըն էր տեղի ունեցածը:  
 Ու կորսնցուց, ունեցած քիչ մը հաւասարակշռութիւնն ինչ:  
 Հիւժեցաւ... հիւժեցաւ հոգեպէս ու մարմնապէս...  
 Ու դարձաւ գերզգայուն, յուսահատ, անողոք:  
 Ատել սկսաւ բռնորդ, բռնորդ անխտիր:  
 Խորշանք գցաց բոլոր մարդոցմէ:  
 Սակայն, առաւելաբար ատեց իր ամուսինը:  
 Որովհետեւ, ամբար մէջ կը տեսնէր գլխաւոր մեղաւորը, գլխաւոր  
 պատասխանատուն այս բոլորին...

Կեանքը, սակայն, բերքատեց իր էջերը: Օրերը յաջորդեցին մէկը  
 միւսին. ու անոնց իրաճանչութիւնն ծանրութեանը տակ, իր երազներէն հաս  
 մը իյնալով զսխալտեցաւ...

...  
 Անուշ ու քաղցր տեսչու մը ծնունդ պարգեւեց:  
 Սակայն...  
 Ան ալ չկրցաւ ներշնչել յուսալսարը:  
 Զկրցաւ նաւարկեալն առաջնորդի՝ փրկութեան փութեանը լուսն:  
 Զկրցաւ վերացնել՝ կուտակուած մաղձն ու ատելութիւնը:  
 Այլ՝  
 Ան ալ եղաւ թիրախ, իր պոռթկումներուն...  
 ... «Ի՞նչ... խորք մամա մըն ես»...

Մանկան բառքի նիշը, վայրագորէն կը մրճահարէր իր զանկը: Կը  
 բզկտէր իր ողջ էութիւնը: Ու իր յուսալսար հոգին՝ արիւն կու լար:

Իր հարագատ գաւակին արդար ընդվզումին պատճառած վերքը իր  
 հոգիին, ցաւի սկսած էր, սուկալի, սուկալի ցաւով մը:  
 Սարսափեցաւ:

Ինքզինքն ձերբազատելու շնորհիւ այդ անօրինակ ցաւի թիրախներէն: Կը  
 գայարուէր. կ'ուզէր նշալ. չէր յաջողիր: Կուրծքին իջած ծանրութիւնը կը  
 ճնշէր ահաւոր կերպով: Շնչանկէզն կ'ըլլար...

Մտածում մը, սակայն, դուրս կրցաւ բերել զինքը այդ ահալի կոշ-  
 մարէն:

Զուակը...  
 Յատկեց տեղէն: Շուրջը նայեցաւ:  
 Զուակը չկար:  
 Զայնեց պաղատագին, յուսահատ ճայնով մը:  
 Լռութիւն... քար լռութիւն մը հարուածեց զինքը՝ ուժգնօրէն...  
 Ցանկարծ.  
 Ինքնաշարժի շշակի աղանջ խլացնող ճայն...  
 Մայրական նախագգացումէ մղուած, խելագարի մը պէս սլացաւ  
 դուրս:

Ամուսինը, տղան գիրկը. փռուած էր յատակին:  
 Հայրը փրկած էր գուակը՝ ստույգ մահէ մը...  
 ...

Մայրը, ընկիւնը չգիտցողի մը պէս, պահ մը կեցաւ շուարած, եւ  
 ապա գրեթէ խլեց ազան, այդէն ստիկ ելած ամուսնին գրկէն:

Ու անհուն գորովով սեղմեց անոր գեղեցիկ գլուխը իր քաթախում  
 կուրծքին, ուր անբեկուած էր մայրական սրբազան գգացումներու հուրը:

Անպատմելի ու գերագոյն հանոյք մը լեցուց իր ներաշխարհին պարսպը. էութեան շոր ակունքները:

- Մա՛նչս... իմ անո՛ւշ մանչս... - բառ իր հոգիին քննուշ ու խոր տկունքներէն եկող ձայնով մը:

- Մա՛յր իմ, - շշգրաց երգանիկ տղեկը. - մա՛յր իմ, որքան կը սիրեմ քեզ...:

Մայրը, Յարէն կեանքին վերադարձողի մը պէս քայտաւար գրաց: Արեւը տաք ու շոյիչ, եւ օրը ակելի պայծառ թուեցան իրեն...:

Մարդիկ բոլորը, բոլորն անխոր սիրելի եկան իրեն:

Անչափելի երգանկութիւն մը կուտակուեցաւ իր կարծիքն տակ, կուտակուեցաւ ու յարդեցաւ յամկարծ՝ արգունքներուն ընդմէջէն:

... Տաք ու սիրագեղ ձեռք մը, շոյեց իր ոսկի մագերը... անցեալի քաղցր, անկայն մոռցուած յիշատակներ արթնցնելով իր մէջ:

Գորովով լի ու ազնիւ անձի մը, - իր ամուսնոյն, - ձեռքը, որ գիտէր միշտ ու ճանաչում, այնքան բարութեամբ ու օրով փայտալի գիւտէր. եւ մտածել՝ որ ինքն այսքան երկար ժամանակաշրջան մը, ամուսնորէն խուսափեր է անկէ:

Իր գեղեցիկ ու անուշ զէմքին վրայ ու ծաւի աչքերէն հոտոյ արցունքներու ընդմէջէն, ժպիտ մը փթթիլ սկսաւ. ժպիտ մը անինքնագիտ, որ կու գար իր ներաշխարհին խորերէն եւ որ իր ներքին գեղեցկութիւններու հայելիին էր միանգամայն:

Ճշմարտութիւնը՝ ծաբած էր իր հոգիին մէջ...:

Ու տարօրինակ թուեցաւ իրեն եւ յուզուեցաւ անհունօրէն, երբ մըտածեց, թէ ինչպէս մինչեւ այսօր կ'անգիտամար ատոր գոյութիւնն ու ներկայութիւնը, երբ իրեն այսքան մօտ էր ան:

Գեղեցիկ գլուխը բարձրացուց եւ համակ սէր ու զգացում արտայայտող իր նայումովը՝ արցունքներու ջիւղ ու վնիս կաթիլներու ընդմէջէն, հանդիպեցաւ ամուսնին յոնու աչքերուն:

Ոչ մէկ խօսք. ոչ իսկ բառ մը:

...

Պզտիկ, պզտիկ թաթիկ մը, սիրագեղօրէն մաքրեց, իր ակնագրիւններուն ծայրը յամեցող արցունքին կաթիլները...:

Ա. Բ.

ԹԵԼԵՐԱՆԻ

### ՏՈՄՍԵՐ

Դարն է - սսին, կեզծաւորի,  
Հացկատակի ու վատի.  
Քզա՛յշ պոէտ, կը խորտակուես՝  
Քանզի կեղծել չգիտես:

Դարն է - սսին, շազոտորի,  
Հացկատակի ու վատի.  
Քէ՛ր քիրք կ'ուզես, պատիւ կ'ուզես,  
Պէ՛տք է սաղաս ու բծնես:

Օ՛ր, անճարակ կեզծարարներ,  
Աժան փառքի հերոսներ.  
Քո՛ւր էք սրտուս յորդոր կարգում -  
Ձեր բաւք միտքը յագնեցնում:

Ձի՛ մտքամայ եզգես՝ Մասիս.  
Ժանգ չի ճատի երգերիս.  
Քեր ճակիճք՝ ձեզ կը մնայ, -  
Երգերիս մտք չի ճատի:

### ՔԱՌԵԱԿՆԵՐ

Դու սերելեր բիրեւ բերել,  
Դու վարդերի բոյրն ես սիրում,  
Ու իմ հագին՝ ա՛խ, անարեւ,  
Հրկիզում է տներ կեանքում:

Վախենում եմ չար հասակով  
Քշուես հեռու ու մրրկուես,  
Ու քո ցաւի խոր կակիճով  
Անմխիբար մտմտում ես:

Մի անգամ է մտքդ լացով,  
Աշխարհ գալիս, մտքդ անում.  
Ու մի անգամ սէրը շաղով  
Մեր սրտի գունն է բախում:

Ա՛խ, առաջին սերն է միայն՝  
Երկնապարգէտ, հրանում,  
Որ յայտնուէից մինչ զերթում,  
Իր մայր արտից չի մեկնում:

ՀԱՅԿ ՅՈՎԱԿԻՄՅԱՆ



# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆ

ՄՈՒՍԱ ՓՐԵՆՍԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԻՆԵՆՈՒԹԻՒՆԷՆ ԵՏՔ

## ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Այսօր, առկի ջան ջսան տարիներ ետք, բերեալու մէջ ներկայ կը մնայ պատկեր մը, զոր տեսայ 1946-ի օր մը, Քարանթինա հաւաքուած ներգաղթող չո՞ր քաղաքի մէջ: Հոն տեսայ Հայաստան դաղթելու համար եկած մարդիկ ու կիներ, որոնց տարազն ու յեզուն ա՛յն էր ճիշտ, որ երեխայի իմացումս տուած ու հազցուցած էր շիւրտերան: Զարմանալի բան: Քիւրտե՞րն ալ Հայաստան կ'երթան...

Այդ օրերուն մայրս ամենազէա էր, բոլոր երեխաներու մայրերուն պէս: Ան Նամուշիի և Տէր Զօրի կողմերէն եկած՝ բացարեց ինձի, թէ անոնք հայեր էին կը հագուէին այդպէս ու կը իօսէին ջրտերէն, որովհետեւ իրենց բնակած միջավայրը այդ կը պարտադրէր:

Ես, տասը տարիներէ ի վեր կ'ապրէի աշխարհի երեսին, հայ ընտանիքի ծոցին մէջ, կը յաճախէի հայկական վարժարան, բայց առաջին անգամ ըլլալով կը հանդիպէի հայերու, որոնք փոյղ ու ինձի պէս շէին: Տարօրինակ:

Այս տարօրինակ երեւոյթը պատճառ

զարձու ստիպան, որ զեռ տասնամեայ երեխայ՝ մտածեմ հայութեանն մասին, լուրջի սունեմ զայն: Արովհետեւ ճիշդ այդ օրն էր որ զազրեցայ հայկական ծագումիս Լեւոնաթուէէ եւ սկսայ հայութիւնս ապրելի:

Հայեցի ինքնութիւնը սպրիլը վիճակ մըն է, զոր հաւանաբար բոլորը ալ ունեցած էք, սեղի՞ք ու պիտի պահէ՞ք, եւ որ կը մղէ ձեզ հաւաքական ու հասարակական գործին նուիրուելու՝ տրամաբանական ու անհեթեթ բոլոր միջոցներով, ի չեճուկս ձեր անհատական հանգիստին չեճուկս ձեր անհատական հանգիստին ու բարօրութեան, ի զին ձեր քսակին ու ապագային: Սա նուիրումի անյազ պատկ մըն է, հոգիէն կը բերի, եւ կը ջուղանայ միայն յարանուն, յարատեւ աշխատանքով: Այլապէս անբնութագրելի հրկիզում մը կը զգաք ձեր ամբողջ էութեան մէջ ու ձեր մարմինը կը զգաք ինքնազործ ու գատարկ պատեանի մը պէս:

Զարմանալի չէ բնաւ հոգեվիճակը իրենց ազգային ինքնութիւնը սպրոցեմ-

բուն: Բնութիւնը նոյն օրէնքը կը պարտադրէ նաեւ անհատներու կեանքին մէջ, ուր, կը բաւէ որ մտածէք ձեր գործքեան մասին, զգաք ու գիտնաք, թէ կ'ապրիք, որովհետեւ չքանայ օտարութիւնը մահուան, եւ հրամայական դատանայ իմաստին որոնումը, ձեր գոյութեան իմաստին:

**Որոնումը**

Կարծեմ սա աւելի էական է, քան նոյն ինքն գիտը: Որովհետեւ, յամոյս, եթէ ոչ միշտ, գիտը խաբուսիկ է: Լաւագոյն պարազային հանգրուան մըն է ան, իսկ որոնումը՝ ինք, գործ է, մըլտանոտող գործ, հետեւաբար նշարբխ: Յամենայնդէպս, ես ցարդ յուսաբար եղած եմ գիտերէն, գիտերէս: Բայց արտասովոր հրճուանք մը լեցուցած է զիս որոնումներու մէջ:

**Ճ**

Անցեալ տարի, Միացեալ Նահանգներէն, ընկեր մը, երկար նամակով մը կը խօսէր Ամերիկայի գաղութի մասին ոչ թէ ակնաստես անցորդի մը պէս, եւ կամ արդէն իսկ աւազախրած Ամերիկացայի տեսանկիւնէն գիտած, այլ իրատեսութեամբ այն վկային, որ կ'ապրի միջնորդութիւն մէջ, բայց չ'ընդունուի: Ընկերս կ'ըսէր, թէ Ամերիկայի գաղութի ամէնէն փճացած խաւը ա՛յն է, որ վերջերս գաղթած է Միջին Արեւելեան երկիրներէն: Ասոնք շտեմներ են, որոնց համար նորահաս սերունդին ապագայանական վերաբերմունքը իմաստութեան ցերեզոյս արտայայտութիւնն է: Երկար է նամակը: Երկար ու յուզիչ, բայց մասնաւոր արտակերպէ էր ա՛յն ճիշդ, որով ան կը դանդաղէր զեռ հազիւ լեզու ելլող իր մէկ հատիկ մանչէն, այդ ճշտութեն, որ նոյն կը պատասխանէ. ընկերոջս ճիշտին պարտքը թող մնայ վաւերական վկայութեամբ խօսիլ Ամերիկայի գաղութի ներկայի մասին: Ինծի համար կարեւորը ա՛յն է, թէ հոն կան

մարդիկ, ունեցէ հասարակութիւն մը ամբողջ, որոնք իրենց ապագիշտութեան յէն յետոյ կրնան ժամանակը գտնել, զպրօց հասաստելու, գաւառները ապահովելու, նորահաս սերունդին Ա եւ Բ սորվեցնելու, գէթ անով իսկ վաւ պահելով յիշատակը իրենց ազգային ծագումին:

Մեղի, Միջին Արեւելեան երկրներուն մէջ բնակողներու համար, արգոյի բազմաթիւ մեծանորհներ գնալը մնան հասանելի: Միջնորդ հոն, Ամերիկայի անխորաչափելի խառնարանին մէջ, ուր ազգային իւրաքանչիւր բնիկ կու գայ միջազգային ընդհանուր մարմինը հարստացնելու ի հեճուկս իր ինքնօրոնութեան, հոն ճիշդ աւելի դեղեցիկ է, որոնումը աւելի իմաստուն:

Չեմ վարմանար, երբ կ'ըսեն, թէ Ամերիկայի մէջ հայ թերթերը շեն կարգացուի: Չեմ վարմանար, երբ պահանջը կը զգացուի հայ թերթերու արդէն իսկ օակաւաթիւ սիւնակներէն բան մը արամադրելու անդիւրէն լեզուով արտայայտուող յօգուածներուն: Կեանք պայմանները յարգելի են որքան ալ սուղ արժեն անոնք: Կարեւորը, սակայն, ա՛յն է՝ որ Ամերիկայի բոլոր գիտեն լեզուն զործածել իրբեւ միջոց, արտայայտելու համար ողին՝ որ լեզուէն ալ վեր ու էական կը մնայ:

Ամերիկայի գաղութը նկատուութեան առի անո՛ր համար, որ այս աշխարհամասը Ափիւսքի իրականութեան ամէնէն հիւանդկախ թիւը ըլլալու սքեթութիւնը ձգած է վաղուց: Իմ կարծիքովս այդ համարը կը դարձնեն անոնք, որոնց աչքերը գուրկ են երեւոյթներէն անդին դիտելու ընդունակութենէն, որոնց սիրտը գուրկ է յոյսի սնունդէն եւ հոգին՝ պարտապէս հաւատքէն: Ու անոնք, որոնք չեն տեսներ, չեն յուսար եւ չեն հաւատար, անոնք միայն կրնան դատապարտել ու դատապարտուիլ: Այլապէս պիտի ունենային ճիշդ կարողութիւնը եւ հաւատքով պիտի նուիրուէին որոնումին: Կը գտնէ՛, ով կը փնտռէ՛:





Ուրիշ ընկեր մը լրիւ տարի մը մնաց ֆուէյթի մէջ: Անցեալ ամիս եկած էր արժուկուրդը ծնողքին ու բարեկամներուն հետ անցնելու: Սրճարանին մէջ զաւաթ մը սուրճը մեզ զարձեալ միւսճեց զին մտածումներու մէջ: Արդէն Ազգն էր մեր արջու հրդը, նորէն մեր աննիւրը իրբեւ արդի սերունդի: Նորութիւնը սա էր միայն, որ խորհրդածութեանց ծիրին մէջ մտած էր նաեւ Քուէյթի պազութը:

- Ի դէպ, ըսի ես անտարբերօրէն, իրաւ է որ հոն այսինչ ու այնինչ... ակնարկելով բամբասանքներու, ասոր ու քնոր հասցէին վերադարձներու:

Ընկերս յանկարծ լրջացաւ, ջղային պրկումով մը սուրճի պատճիւ սեղմեց ակին մէջ, սուր կզակը ցցուեցաւ եւ նայուածքը յայտնօրէն պղտուեցաւ: Պիտի խօսէ՞ր, բայց կարծես իբրեւ բաները կը փնտռէր:

- Պիտի զարմանաւ, հաւանարար, եթէ ըսեմ, թէ արզալին ամբողջակա- նութիւնը շօշափեցի յասկապէս Քուէյթի մէջ: Հոն մտնաւանդ արզալին հպարտութիւնս վաւերական դարձաւ: Վերհասանքու մասին ձեր բոլոր շտաները օտաւ են եւ ճամբիս միանգամայն: Ի՞նչ փոյթ: Մարդկային բոլոր հասարակու- թիւններուն յատուկ մանրուքներ են անոնք: Ձեռ կարծեր որ աշխարհի երեսին զոյութիւն ունի հասարակութիւն մը, որ մարդոց կողքին չհաշուէ նաեւ մեծ քա- նակութեամբ տմարդիներ: Այդ ոչինչ: Էականը գործն է, իսկ Քուէյթի հայ պազութի գործը, վստա՛հ եղիր, անգը- նահասակի է:

«Պէտք է հոն գտնուիլ հասկնայու համար, թէ բանն ինչո՞ւմն է: Երեւա- կայի անծայրածիր անապատ մը, ուր դրամի հրաշքով ինկած է փոքրիկ բայց բերարդիական քաղաք մը: Տեսնելու բան են լայն պողոտաները, շարք շարք ե բոլորը իբրբու նմանող միայարկանի եւ երկյարկանի տուները...: Իսկ կիզի սո- բեւը, փոշիի հասանքները, բնութեան

ժլատութիւնը՝ ուրիշ խնդիր: Ասոնց կողքին դիր ընկերային հասարակու- թիւնը, զասակարգային դրութիւնը եւ յետոյ նկատի ունեցիր որ օտարը, դըր- սեկը քաղաքացիի իրաւունքներ չի վա- յելիր: Մենք այդտեղ պիտի չունինք, կալուած չունինք: Անցորդներ ենք միայն, անդէմ ու անդիմագիծ:

«Եւ սակայն Քուէյթի մէջ յաջողած ենք ունենալ ազգային հասարականու- թիւն մը. դպրոց: Այլ չըսեմ մնացեալը: Ո՞վ կատարեց այլ բոլորը: Կրնաս դի- շի՞րդ յուսցնել անուններ փնտռելով, բայց չես գտնէր: Անոնք տեսնուն ու խոնարհ- չեբոսներ են, անցորդներ՝ ինչպէս ըսի: Չկան բայց դորձը մէջտեղն է: Աներեւ- աւկայիտի են ասի զուտութիւնները, ու- թոնց կը նարկադրուի Քուէյթի հայ դու- զութը ինքզինք ու իր դպրոցը պահելու համար: Ո՞վ կը ստիպէ զիրենք այդ յանձնառութեանց տակ մտնելու: Ի վեր- ընդ պետական զպրոցները ո՛չ միայն ձրի են, այլ մինչեւ իսկ աշակերտու- թեան կը արժապարհեմ հազուստ, ուտես- տեղէն եւ դրպանի ծախս: Ի՞նչ բանը կը ստիպէր որ հայկական վարժարան մը ունենայինք: Այս բոլորի կողքին մի մտնար նաեւ որ Քուէյթի հայ հասարակութիւնը կարենոր մեծամասնու- թեամբ աշխատաւոր տարրերէ կը բաղ- կանայ:

«Քեզի կը ձգեմ լուծումը այս հա- նելուկին: Ես կը բաւականանամ հայ ըլ- լալու հպարտութեամբ: Երեւակայէ որ կեանքիս մէջ չեմ պարտծ, չեմ դիտեր ու չեմ սիրեր պարել, բայց հոն պարահան- զէս մը ոտքըսած էր եւ ես պարեցի, պարեցի: Յիշեցի Զօրպան: Իրաւ որ պարը կըքոտ պերճախօսութիւն մը ունի»:



Մեր յիսնամեակի Սպարտանի տախտի, զիջ թէ շատ օտարներն ու, մանաւանդ Միլիին Արեւելեան մասուլը, մտաւորու- կանութիւնը եւ հասարակութիւնը հե-

տարբերուեցաւ մեր Հարցով եւ մեզի վերապահուած ճակատագրով: Բնական էր որ բացարձակ մեծամասնութիւնը համակիր ըլլար մեր գաղտնի ու պահանջներուն: Արդար գաղտնի համայն մարդկութեան կը վերաբերի: Բայց լուսանցքի վրայ հանդիպեցայ նաև մարդոց, թէ թէ շատ մտաւորականներու, մամլոյ սպասարկուներու, որոնց կեցուածքը մեզի հանդէպ անպաշտօն հանդիպումի ընթացքին բոլորովին տարբեր էր հրատարակչին ու պաշտօնական կեցուածքէն: Անոնց համար հարց էր, թէ Սփիւռքի մէջ Հայերը ինչո՞ւ կը շարունակեն անջատ հասարակութիւն մը մնալ ու չեն նոյնանար իրենց բնական երկիրներու ընդ կ ու տեղացի մարդկութիւններուն հետ: Հարցը անոնց համար «Ի՞նչպէս» չէր, այլ «Ինչո՞ւ» էր: Այսինքն անոնք մեզ կը նկատեն «եղած» մեր համայնքային ինքնորոշութիւնը պահպանող համար:

- Ինչո՞ւ կը շարունակենք Հայերէն խօսիլ, երբ պետական լեզուն այդ չէ՞:

- Ինչո՞ւ կը շարունակենք Հայկական մշակոյթ մը ստեղծել, երբ մեր ապրած երկիրներուն մշակոյթը այդ չէ՞:

- Ինչո՞ւ մենք զմեզ ուրոյն Ազգ կը դուռնենք, երբ կը յայտարարենք, թէ մեր ապրած երկիրները մեր հայնկեաներն են:

- Ինչո՞ւ Հայաստանը կը սիրենք, երբ ոչինչ կը պարտինք անոր վաղուց ի վեր:

Սրկար է ինչուններու շարքը, բայց մէկ է խորքը.- ինչո՞ւ կ'ուզենք Հայ ազգի Հայաստանէն դուրս՝ բոլոր երկիրներու տակ:

Կարելի կ'ըլլար բոլոր «Ինչո՞ւ»-ներու պատշաճ պատասխանը տալ, եթէ երբեք անոնք տեղին գրուած ըլլային: Իրականութիւնը, սակայն, «Ինչո՞ւ»-ն չէ այլ «Ինչպէս» է: Եւ երկուքին միջեւ մեծ է տարբերութիւնը: «Ինչո՞ւ»-ով հարցադրելու համար պէտք է ընդունիլ որ մեր ազգային գոյապահպանումը սոսկ իմացական, արամարտական խնդիր մըն է, որ կրնայ շիտակ ըլլալ կամ սրխալ, յամենայնդէպս, կրնայ վէճի նիւթ

դառնալ: Մինչդեռ «Ինչպէս»-ով հարցադրութիւնը խնդրոյ առարկայ կը դարձնէ մեր ցնդային բովանդակ ժողովուրդութիւնը եւ գոյապահպանումը կը դարձնէ կենաց ու մահու խնդիր: Արդարեւ, ցնդային գոյատևումը ո՛չ մէկ ատեն եւ ո՛չ մէկ տեղ խնդրոյ առարկայ չէ եղած եւ չէ զլացրած ո՛չ մէկ ցնդի, քանի որ այդպիսի գլացում մը անհեթեթ է ու ապարդիւն: Պատմութեան ընթացքին բազմիցս ու բազմաթիւ ցնդեր կ'էկէն ու անցեր ու բոլորն ալ շքեցներ են քննական պայմաններու ճնշումին եւ իրենց ցնդային շաղախին հետեւանքով: Իսկ շարունակած են ապրիլ անո՞նք, որոնց կերտուածքը եղած է կենսունակ: Հայոց պատմութեան մէջ արիւնաթաթախ էջերը աւելի, շատ աւելի բազմաթիւ են, քան լուսաւոր՝ շքեցնէ արեւոտ էջերը: Տարուարութիւնները, Հայրենազրկումը, պանդխտութիւնը միշտ եղած են մեր լուծիչը դարերէ ի վեր: Մեր պատմութեան ընթացքին հազիւ կը յանդիպենք խօսիլ յարաբերական ինքնիշխանութիւններու մասին: Ընդհակառակն, շատ շատ կրնանք խօսիլ արտաքին աշուանքներու մասին: Բայց եւ այնպէս կ'ապրինք, կը շարունակենք ապրիլ, երբ մեզ իրենց լուծին տակ ճնշողներէն շատեր գոյութիւն չունին այնչառ արեւուն տակ: Ի՞նչպէս կը բացատրուէ այս երեւոյթը...:



Կրկին ու կրկին կը կարդամ «Բազմեան» Սեպտեմբերի համարով տրուած սաքանի մը էջերը, որոնց ընդմէջէն Մուսա Փրինս կը խօսի մեզի: Յամաք աւրով գլտական ընկերաբանը չէ ան, ոչ ալ դատարկապարտ հօգեբանը: Արդարութեան տեսչին հրապատ մտաւորական է, որ կ'ուզէ, կը պահանջէ որ ապրինք, Հայ ազգինք բոլոր երկիրներու տակ: Մուսա Փրինսի յօդուածին ընդմէջէն կրկին կը տեսնեմ քրտացած հայերը, որոնք տուն ու կարուած, ցանք ու հոծծք

մրած՝ ընդառաջ եկած էին հայրենիքի ստալին կանչին եւ ճամբորդի ցուպն առած՝ ինկած էին Հայաստանի ճամբուն վրայ, առանց երբեք գիտնալու, թէ ո՛ւր է ան եւ ի՞նչ է ան: Կը յիշեմ կրկին ընկերսն ցատուճը եւ աչքիս առջեւ կ'ուր-ւագնուի պատկերը անո՛նց, որոնք յանգրգուծութիւնը ունին հոսանքն ի վեր թիւփարելու եւ համայնակուլ Ամերիկայի մէջ հայկական բլիթը կենդանի պահելու: Կը տեսնեմ Գուկիթը եւ Հոն, արեւուն տակ խորովելով դրամ վատակող հայրը՝ որոնք իրենց ճակատին քրտինքէն սիրտօտար եւ ինքնակոչ բաժին կը տանն ազգին:

Ե՛րբ եւ ո՛ւր է պատահած առանկրան: Ո՛ր ազգը կրնայ հպարտանալ այսքան կորովով, այսքան կենսունակութեամբ:

Մուսա Փրենս մեր արդի ու ապագայ լինելութեան հարցը կը կապէ մեր ցեղային նկարագրին եւ անոր որ մեր ցեղային ընդերքը Հարուստ է եւ կենսատու: Մենք բնութեան կողմէ շատարեւութեամբ օժտուած ազգ մըն ենք: Անտարակոյս, մեր ցեղային կերտուածքն առաջին ու վերջին ազգերն է մեր կեանքին, ի Հեծուկս բոլոր հայածանքներուն ու տառապանքներուն, ի Հեծուկս բազմաթիւ ջարդերուն եւ տեղահանութիւններուն: Բայց հարցը կը մնայ գեոեւսանչոյ մ'յնքան ատեն, որ չէ լուսարանւած ամբողջ բովանդակութիւնը, որ պէտք է տայ ցեղային նկարագրի կոշտածին:

Կարծէք Մուսա Փրենս այս իմացումին մէջ կը դնէ շօշափելի այն դանձարանը, որ ազգի մը կը պատկանի եւ որ կը բովանդակէ լեզուն, կրօնը, պատմութիւնը, աւանդութիւնները, հաւաքական կեանքի բնագոյնը եւ մշակութիւնը: Տարակոյս չունիմ որ ասոնք ազգ մը բնորոշող եւ անոր գոյատեւումը երաշխաւորող սուսանքներ են: Արդ, ինչպէ՞ս բացատրել պարագան անո՛նց, որոնք կը շարունակեն հայ մնալ հայերնիքէն դուրս, առանց հայկական շարժող յաճախելու, առանց հայկական միջավայրի մէջ ապրելու, կորուսած ազգային անցեալէն,

անծանօթ աւանդական սովորութիւններուն ու բարքերուն, եւ անկրօն ու անդուստնանք իրենց հողիին մէջ: Ասոնք ալ հայեր են ո՛չ թէ անոր համար որ իրենց անուանին ետեւ գեանք մը կը կրեն կամ անոր համար որ հայկական տոհմի մը սերունդն են, այլ պարզապէս անոր համար որ հայու զգայարանը մը ունին:

Արդարեւ, ցեղ մըն ենք, որ մեր ապրած երկիրներու տեղական միջոցառումներով ընտելանալու, յարմարելու, պատշուձելու եւ մաս կազմելու ընդունակութիւնը ունինք: Ո՛ւր որ ալ գտնուինք կայսէս կը մասնակցինք տեղւոյն անասական կեանքին, կը կառուցենք, կը բեղմնաւորենք եւ հասարակական կեանք կը ստեղծենք: Ո՛ւր որ ալ գտնուինք տեղական յեղուն ու մշակութիւն կ'որգեղենք, կ'իւրացնենք վաղ թիւ ուշ, առանց սակայն բան մը զիջելու մեր ինքնորոշութեան: Եւ այս ատորքնակութիւնը այնքան զիւր եւ բնական կու գայ մեզի:

Մեր լինելութիւնը երաշխաւորուած է մեր ցեղային նկարագրով:

Սակայն վառանգէ զերծ չենք: Մտահող է Մուսա Փրենս իւրաքանչիւր հայու պէս: Արտաքին ճնշումներուն զէմ անասան, ներքին ինքնաբացայտմը, սակայն, կրնայ սպառել այլապէս անըպատ ցեղային կենսունակութիւնը: Գուրսէն գիտողին համար ինքնաբացայտմը կը ներկայանայ եղբայրասպան կոխմարտ, կուսակցական պայքարներու եւ այլ հատուածական պատակտումներու տարազում: Ուրեմն սէրն ու միաբանութիւնն են, որոնք պիտի ապահովեն մեր լինելութեան անմահութիւնը:

Անկասկած որ բոլոր պատակտումները կրնան միայն ուժերու քայքայում յատաշացնել: Անկասկած որ ուժասպառութիւնը գիծադրականութիւնը կը ջլտատէ եւ մահուան վտանգը աւելի կը մօտեցնէ: Այսուամենայնիւ, անհրաժեշտ է դիտել աւելի Հեռուն, նախատեսել այն օրերը, երբ գալիք սերունդները արժատապէս կորուսած պիտի լլնան շատ մը երկինքներու տակ բոլոր այն տուեսլին-

բէն, որոնք այսօր բովանդակութիւնը կը կազմեն ցեղային նկարագրին: Նախատեսենք այն օրերը, երբ կրնանք կորսնցուցած ըլլալ մեր լեզուն, անկարող ըլլանք շարունակելու մեր մշակոյթը մամուլով ու դպրոցով, հեռանանք մեր սահաւական աւանդութիւններէն, կորսնցնենք Լուսաւորչի կանթեղը: Այն ասան թ'նչ պիտի մնայ ցեղային նկարագրին մէջ մեզ տակաւին հայ պահող:

Պիտի մնայ ազգային բնագոյր, որ ուշինով պայմաւոր է:

Պիտի մնայ ինքնուրոյն հաւաքակալութիւն մը ըլլալու իրաւունքը, որ տնկեղէնքէի է եւ ազատութեան չափ նուիրական:

Պիտի մնայ վտանգութիւնը մարդկային արգարութեան հանդէպ:

Պիտի մնայ Հայաստանը, որ վաղ թէ ուշ տէր պիտի կանգնի մեր արգար իրաւունքներուն:

Ինչ կը վերաբերի եզրայրասպան կոխներու, կուսակցական ու հասարակական պայքարներու, որոնց մէջ կը կարծուի զրուած ըլլալ մեր ազգային ինքնաջայջայման տուեալները, անոնք հետու են սպառնալիք ըլլալէ, որովհետեւ պործն են անհատներու, վատասրած հայերու: Մինչ հայը, իրաւ հայը, բոլոր դիւտերէն առաջ եւ բոլոր դիւտերէն ետք՝ ինքզինքը կը փնտռէ, կը գործէ, կը հաւատայ ի հեծուկս պայմաններուն ու պարագաներուն: Իրաւ հայը Քուէյթի պէս տեղ մը ազգային կեանք կը հնարէ, Ամերիկայի պէս աշխարհի մը մէջ, առանց վարձատրութեան դիր ու մշակոյթ կը սերմանէ, Քանադայի պէս տեղ մը կուսակցութիւն եւ հաւաքակալութիւն կը կերտէ: Իրաւ հայը ամենուրեք կը տարածէ հաւատքը հայութեան հանդէպ եւ յոյսը մեր արգար լինելութեան:

ՊԵՂՈՒՅ

ՆԱԶԱՐԷԹ ՓԱՌԱՆՆՍՆ



Բ. ՓԱՓԱՋԵԱՆ



ԼՈՒԻՏԻ ՓԻՐԱՆՏԷԼԼՕ

10 Մայիս 1921-ի գիշերը, Հուսի մէջ, առաջին անգամ կը ներկայացուէր տարօրինակ թատերակ մը՝ «Վեց անձնատրուքիւններ, որոնք հեղինակ մը կը փնտնեն»: Իրական ճակատամարտ մը տեղի կ'ունենար սրահէն ներս, շատ աւելի սուր, քան Հէրնանտի ճակատամարտը՝ սուրջ, ծաղր, հեղնանք, հայհոյանք: Հեղինակը կը ստիպուէր բեմ դալ, անձամբ բացատրութիւններ տալ, պատասխանել հայհոյանքներուն: Կոխը կը շարունակուէր թատրոնէն դուրս, փողոցը, ուր կողմնակիցներ ու հակառակորդներ իրար կը ծեծէին, հեղինակը կ'ապտակէին:

Հեղինակը՝ Լուիճի Փիրանտէլլօ, այնքան խորազէն կ'ազդուէր պատահածէն, որ հետագային կ'անդրադառնար այդ պատահարներուն իր ամենախաթող թատերակներէն միոյն, «Այսպէս կամ այնպէս» մէջ, ինչպէս Իրսէն, իր «Ուրախաններ» թատերակին դտած հալածանքին դառնութիւնը արտայայտած էր իր «Ժողովուրդի քննախնայ» թատերակով:

Փիրանտէլլօ, սակայն, նոյն տարին իսկ հրապարակային դժգոհում մը կը ստանար, երբ նոյն թատերակը կը յաղթանակէր, նախ Միլանոյի, ապա, Լիւտովիա եւ ճորճ Փիթօլֆներու խաղարկութեամբ, Փարիզի բեմերուն վրայ:

Իր թատերական յաղթանակներու շարանը սկսած էր նախորդ ամբի, 24 Մարտ 1920-ին, Վենետիկի Կոլտոնի թատրոնին մէջ, «Առաջուայ նման, աւելի լաւ քան առաջ» թատերակով: Անկէ ետք, Փիրանտէլլօ կը տիրապետէ Հոտ-

մի եւ աշխարհի բոլոր բեմերուն. ներկայ է ամէն աեղ, ճամբայ կը բանայ, նորանոր հետեւողներ կ'ունենայ, մէն- շն ախոր տարի շ'անցնիր, առանց փրբանտէկան կարեւոր թատերակի մը ներկայացման, Փարիզի բեմերուն վրայ կամ այլուր:

1925-ին Ֆրանսական բեմերուն վրայ փրբանտէկան չինոյ թատերախաղեր միաժամանակ կը ներկայացուէին: Յաջորդող երեսնամեակին, Ֆրանսացի թատերադիրները առաւելաբար փրբանտէկան տարազները օգտադործեցին, փրբանտէկան ջնարի մը թելերուն վրայ նուազեցին, ինչ- պէս, օրինակ, թատրոնը թատրոնի մէջ. անձնաւորութեան բազմաթիւ երեսներու գոյութիւնը. ճշմարտութեան յարա- րեակահոսթիւնը. պատրանքին ուժը. արուեստի մեայու- նութիւնը՝ հակադրուած կեանքի անցողակի էութեան: Իր ազդեցութիւնը կրած են Սարման, Կանթիյոն, Փէլլըրէն, Պէրնէթայն, Տընի Ամիէլ, Լընորման, Ղէլսըրօտ, Մարսէլ Աւար, Արման Սալաքու, Ժան Ժիրոտու, Սաշա Կիթրի, Ժան Գոթթօ, Ժան Անույ, Ժան Փոլ Սարթր, Ալպէր Գամիւ, Ատամով, Իոնէսքօ, Պիքէթ, Նըվէօ, Ժան Ժընէ:

Կ Ե Ա Ն Ք Ը

Ծնած է Սիկիլիա, Ակրիկանթէյի մէջ, 28 Յունիս 1867-ին:

Ուսանած է Նախ Հոռոմ, ապա՝ Պօն, Գերմանիա. ա- մուսնացած է 1894-ին: 1904-ին հրատարակած է իր առա- ջին գործը, վէպ մը՝ «Համկուցեալ Մաքիաս Փաւսէալ» ա- նունով: 1915-ին կը սկսի թատերական դրականութեան: 1934-ին իր թատերական գործերուն համար կ'արժանանայ Նապէկեան մրցանակին: 1936-ին, 69 տարեկանին, թոքա- տապի հետեւանքով կը մեռնի:

Այսպէս, հինգ-վեց տողերու մէջ կ'ամփոփուի կեանք մը: Ամէն կեանք կը վերածուի ի վերջոյ անունի մը, յիշա- տակի մը ու ապա՝ մտազուրբեամ: Գործերը, սակայն, կը մնան, եթէ հոգեկան ու մտային հարուստ աշխարհի մը ծը- նունդն են. ու երբ տարիներ ետք, երբեմն նոյնիսկ դարեր ետք, կը դարձնենք անոնց էջերը, կեանքը կը սկսի ետալ, զգացումներն ու մտածումները կը կենդանանան, կը հոռին գրեթէ էջերէն (կամ բեմէն) կ'արթնցնեն նոր մտածումներ, զգացումներ, յուզումներ, որոնք հարստացնող են, մարդ- կային են, յաւիտեական են:

Ըմբռնելու համար գործը պէտք է դիմել կեանքին. կեանքը վերականգնելու համար գործը պէտք է ուսումնա- սիրել:

Փրբանտէլլօ ծնած էր Ակրիկանթէ, 1867-ին, հայրը էթիէն Փրբանտէլլօ, ծննդավայրի (սոլիպար) հանգրու- ու-

նէր: Չ՛հ գաւակնիրու ամենակրօններն է եղած Լուիճիի հարբը, յաղթունդամ, կատաղի, տիրապետող խառնուածք մը: Կոռուպան՝ քանի մը սուսերամարտեր ունեցած մարդ. հակադիրական՝ անպոճ մը կրակած է իրենց տան դիմացի եկեղեցիի զանգակին մը, որուն զօղանջները իր «Սիէսքը» կը խանգարէին:

Դիւրաւ ղեկավարելի ամուսին մը չէր, եւ չէր կրնար ըլլալ: Կ'ըսուի՝ թէ անկամ մը սիրային կապ ունեցած է զարմուհիի մը հետ, որուն հետ ժամադրութիւն կու տար ա՛յն վանքի խօսարանին մէջ, որուն վանամայրը իրենց հօրաքոյրն էր: Կ'ըսուի նաեւ, թէ Լուիճի Փիրանտէլլօ ՆՅ տարեկանին տեղեակ էր այս բոլորին, եւ իր մեղմ ու բարի ժօր տառապանքին չդիմանալով զացած է իր հօր սիրուհիին տունը, անոր պատմած ժօրը վիճակը եւ իրենց տան մէջ առաջացած Հողեկան թշուառութիւնը. ապա թքած է այդ կնոջ երեսին: Երբ կը պատրաստուէր հետանալ, յանկարծ, կանաչ վարագոյրի մը տակէն նշմարած է պահուրտած հօրը սեւ կօշիկները: Տոսմը Փիրանտէլլօյի համար շատ կոնուսէն սկսած է:

Քրիստոնեայ, գէթ արտաքինապէս քրիստոնեայ միջավայրի մը մէջ ծնած մանուկը, օժտուած շատ սուր տեսողութեամբ եւ զգայնութիւններով, պատրանաթափութեանց երկար շարան մը կ'ազդի: Դեռ մանուկ, օր մը տունէն դուրս կու դայ Հողուած նաւազի նոփ-նօր, կապոյտ տարազ մը, ու քիչ ետք կը վերադառնայ տուն ցնցոտիներով: Ետտով յայտնի կ'ըլլայ, թէ նոր հագուստները տուած էր աղքատ ընտանիքի մը զանկին եւ առած էր անոր հագուստները: Աւետարանը կ'ըսէր... ծնողքը կը զայրանայ, հագուստները ետ կը պահանջուին, ետ կը բերուին: Աւելին՝ աղքատ գրագին կը յանդիմանուի նուէրը ընդունած ըլլալուն:

Մանկական անուշ պարումներուն, սքանչելի երազներուն տեղ՝ Փիրանտէլլօ կը հանդիպէր իրականութեան: Հողին կը մնայ խորապէս վերաւորուած: Ընկերութեան պայմանագրութիւնները շատ աւելի ուժեղ էին, քան Աւետարանի խօսքը:

Իսկ երբ կրօնականները կը մերժեն քրիստոնէական պատգամը...

Նոյն տարիքին է զրեթէ, որ Հետեւեալ դէպքը կը պատահի: Եկեղեցւոյ ի նպատակազմակերպուած վիճակահանութեան մը տոժօր, որ իրն էր, որուն վրայ իր անունը գրուած էր՝ Փիրանտէլլօ կը նուիրէ տղեկի մը, որ Հիւանդութեան պատճառով չէր կրցած սովորակ մը ունենալ, Կը ջնջէ իր անունը վրան գիծ մը քաշելով, եւ ինքն իր ձեռքով կը գրէ տեղը տղեկին անունը: Դիպուածը կը բերէ ձեռքով կը գրէ տեղը տղեկին անունը: Դիպուածը կը բերէ այնպէս, որ այդ տոժաակը կը շաւի նուէրը՝ Մարիամ Աստուածածնի արձանիկ մը: Քահանան, որ շահողին անունը պիտի կարդար տոժաակին վրայէն, փոխանակ կարգալու

նոր տիրոջ անունը, կը կարգայ ջնջուած անունը: Փիրանսէլլօ, արցունքեմբուն մէջէն, ի զուր կը բողբէ, կը պահանջէ որ արձանիկը տրուի այդ տղուն. քահանան կը մրնայ անդրդուելի: Մայրը ետ կը դրկէ արձանիկը, եւ Փիրանսէլլօ այլեւս ոտք չի դնէր եկեղեցի:

Աւսարճը՝ որուն վրայ կը բացուին Փիրանսէլլոյի աչքերը, քարոզուածի ու գործադրուածի հակասութեանց աշխարհ մըն է: Տրամարանութեան վրայ կառուցուած իրրիւ թէ, սակայն, անտրամարանական աշխարհ մը: Բարոյականը, որ կը քարոզուի՝ արտաքին է միայն. երբեմն այդ ալ չի յարգուիր: Օրինակ, Հայրը, որ մանկութեան սէր մը վերադառնելով կը լքէ կիներն ու զաւակները ու կ'երթայ Հին սիրածին Եսեւէն: Մայրը, սիկիլիացի կանանց յատուկ արտանայատուութեամբ, լուսութեան մէջ կը տանի տառապանքը: Լուսինն է, որ կ'ընդգոյնէ իր մէջ: Իրմէ փոքր թոյրերէն մին, անուսի տարիքին մտային անհաւասարակչուութեան նշաններ ցոյց կու տայ. Հայրը՝ խղճահար, կը վերադառնայ տուն: Սակայն, իր սիրուհիէն ապօրինի զաւակ մը ունի, աղջիկ մը. կը Համոզէ դրացի մը, որ դրամի փոխարէն ստանձնէ Եւ կիներ, Եւ զաւակը:

Զորս կողմը, Սիկիլիան կողմին յատուկ փակ կեանք մը, նախանձներով, վրիժառութիւններով, սպանութիւններով լի, տաժանելի արդիւններով եւ բոլոր արդիւններուն հակուակ՝ կիրքերով, Հրայրքներով Հարուստ նոյն աստի: Կեանքի ետուցը՝ մէկ կողմէն, մահուան սպառնալիքն ու գոյութիւնը՝ միւս կողմէ, կողք-կողքի, միատաժանակ, միախառնուած գրեթէ:

Օր մը, յանկարծական տեղատարափի մը սպառնալիքէն փախչելով, մանուկ Փիրանսէլլօ կ'ապաստանի ժայռերուն մէջ փորուած քարայրի նման տեղ մը, որ երբեմն կը գործածուէր որպէս դիակնարան, անտէր մեռելները պահելու Համար, մինչեւ օրինական ձեւականութիւնները լրանան եւ կարելի ըլլայ թաղումը:

Երբ աչքերը կամաց-կամաց կը վարժուին քարայրի մթութեան, Փիրանսէլլօ կը նշմարէ սեղանի մը վրայ տարածուած, երկար ծածկոցով Հագիւ. ծածկուած անշարժ մարմին մը: Մեռելային պրկուածութիւնն ու անշարժութիւնը կարելի էր զգալ ծածկոցի տակէն. բարկ Հոտ մը արդէն կը խեղդէր կողորդը: Մարտափահար նայուածքը չէր կրնար հեռացնել սաւանին տակէն դուրս ցցուող խիտ մօրուքէն, ուսած երեսէն, որուն շուրջ ճանձեր կը պտտէին, եւ դիւպստի հակայ կօշիկներով ոտքերէն, որոնք սաւանին տակէն դուրս կ'երկարէին:

Մինչ ինք լուռ կը մնար, գրեթէ շունչը բռնած յանկարծօրէն յայտնարերուած մահուան Հրէշային այդ լրութեան դիմաց, կը լսէ խեղդուած Հառաչանքներ, տեսակ մը Հոնդիւն: Մութին այլեւս վարժուած իր աչքերը քարայրի մթութեամբ թանձրացեալ անկիւնին մէջ կը նշմարեն երկու



ստուերներ, իրար միացած, միախառնուած, որոնք իրար կը փնտռէին, կը հռնդային, աւելի առանձնացած իրենց ցանկութեան կոհացման մէջ, քան մահուան ներկայութեամբ: Երկու սիրահաղթներ, որոնք չկարենայով ալլ տեղ մը պահել իրենց մեղաւոր սէրը, մահուան քարայրը բնորած էին որպէս ապաստան իրենց կրօնին:

Փիլանտէլոյի հաւատարիմ յիշողութեան մէջ այդպիսով անբաժան կը դառնան, ու անբաժան կը մնան այլևէս այն երկու բեւեռները, որոնց միջև կը թաւայի կեանքը, այսինքն՝ հեշտասիրութիւնն ու մահը:

Տասնըւորնոց տարեկանին խենթի պէս կը սիրահարի իրմէ չորս տարու մեծ գարմուշի մը: Վտղաչաս այս սէրը կ'արատայատուի աքաղաղութեան, որ ծնողները կ'որոշեն նշանել զիրենք: Յետոյ կը փոխեն մտադրութիւններն, Փիլանտէլո կը զրկուի Փալէրմոյի յիւղէն, ուսանելու: Հետագային, տարիներ ետք, երբ կը վերադառնայ Սիկիլիա, իր նախկին այդ կէս մը նշանածը կը գտնէ կէս մը խելագար վիճակի մէջ, զինք շատ երկար սպասած ըլլալուն ծանօթէն հիւանդացած, լռման քիչ հիւանդութեամբ մը, որ, այդ տասնամեակներուն եւ այդ միջավայրին մէջ՝ յաճախաբար էր:

Փալէրմոյի Լիալէն երբ հետագային Հոսմ կը զրկուի ուսանելու, մեծ ընդունակութիւն ցոյց կու տայ դաստիարակութեան և մտափոխութեան ցանդով: Հորմէն զազանի սորված էր արդէն լատիներէնը. իր ընթերցանութեան նիւթերն են յոյն, լատին եւ իտալացի դասական հեղինակները: Հոսմի համալսարանի տնօրէնութեան հետ խնդիր ու վէճ ունենալով՝ կ'անցնի Գերմանիա, Պոն, 1888-ին, 21 տարեկանին, ուրկէ կը ստանայ իր ասպրաճ, որպէս թեզ ներկայացնելով ուսումնասիրութիւն մը իր ծննդավայրի բարբառին մասին:

Թէև կարճ ժամանակ մը միայն կը մնայ Պոն, սակայն երջանիկ շրջան մը կ'ապրի: Կը սիրահարի իր դասցուհին, Ժէննի Ծուլը Լանտերի, որուն կը նուիրէ բազմաթիւ բանաստեղծութիւններ: 16 տարեկանին սկսած էր արդէն բանաստեղծութիւններ գրել, որոնք ոչ մէկ արժէք կը ներկայացնեն այսօր: Հոն կը հանդիպի նաև Ծոփէնհաուրիի «Աշխարհը, որպէս կամէ և պատկերացում» գրքին, որ մեծազոյն ազդեցութիւնը պետի գործէր իր վրայ:

Վերադառնալով Հոսմ, հօրը խորհուրդին վրայ կ'աճուանանայ Ակրիկանթէյէն, հօրը գործի ընկերոջ Սինիոր Փորթույանոյի ազդեցութեամբ, Անթոնիէթթայի հետ: Անթոնիէթթայ թա 600,000 լիրէ դրամօտիտ մը կը բերէր. սակայն ոչ թէ Լուիսիի, այլ Լուիսիի հօրը, որ գործին մէջ կը պահէ զրամ մը, եւ իրենց կը զրկէ եկամուտներէն մաս մը:

Անթոնիէթթայի մայրը մեռած էր, մասամբ ամչկոտութեան, մասամբ ալ Անթոնիէթթայի հօր, սինիոր Փորթույանի:

թուլանոյի ահաւոր նախանձին պատճառով. ծննդաբերութեան նախորդ օրերուն եւ ծննդաբերութեան ժամանակ՝ մերժած էր քննուիլ բժիշկին կողմէ: Ախիր Փորթուլանո այնքան նախանձու եղած է, որ իր աղջկան ամուսնանայն անգամ զժուարով ընդունած, զժուարով տարած է: Փորանէլլօ իր նշանածին երեսը տեսած էր մանկութեան միտայն, եւ առաջին անգամ առանձին գտնուած է իր նշանածին հետ միմիայն հարսնիքի գիշերը: Այս էրողութիւնն ու իր աներձօր ահաւոր նախանձառութիւնը սքանչելիօրէն նկարագրած է իր «Երբ խնձք էի» պատմութեան մէջ:

«Իրնց ամուսնութեան մախրողոյ չարա միսմերու ընթացիւն, ետն, իրնց ծննդավայր փոքր քաղաքին մէջ, ո՛չ միայն առիթը չէր տրուած իրեն իր ապագայ կնոջ ձեռքին դռնը բացուիլու. մէկ անգամ իսկ, այլ ցած ձայնով երկու քառանգամ չէր կրցած փոխանակել հետը:

Անոր հայրը, աւելի մախանձոտ, քան վագր մը, մանկութեան իսկ մերջնած էր տղայն իրական սարսափ մը տղամարդոցմէ:

Սրբեմ, եւ ո՛չ իսկ մէկ հաս տղամարդ – երբ ոչ մէկ հաս կ'ըսեմք, ոչ իսկ մէկ հաս ըսել կ'ուզեմք – ընդունուած չէր իրնց տունէն մերս: Տան պատուհանները գոց կը պահէր, եւ այն հագուադէպ առիթներուն, երբ տղիկը դուրս հանած էր, պարտադրած էր փողոցներէն քալած արեւն աչքերը գետնին կախած պահել, այնպէ՛ս՝ ինչպէս մայրապետները. կարծես գետնի քարերը համրել տալու համար:

Լուիսի Փորանէլլօյի նոր կողմած ընտանիքը կը թուէր երջանիկ կեանք մը ապրելու կոչուած ըլլալ: Նրբական զժուարութիւններ չկային, Փորանէլլօ կը դրէր պատմութեանը, սրտնք իր կնոջ ներողամիտ գուրգուրանքին ու ժպտալի կ'արժանանային. Հոռմի իրենց փոքրիկ յարկաբաժնին մէջ, դրեթէ իրար հտեւէ, երեք զաւակներ կը ծնին՝ ամուսնութեան տարի մը ետք, 1895-ին մանչ մը՝ Աթիֆան, 1897-ին աղջիկ մը՝ Լիլիթա, 1899-ին մանչ մը՝ Փոսթո: Անթոնիէթթա կը սերէ իր ամուսինը, թերեւս զի մը ըստին աւելի կեդրոնացած ձեռով, սակայն սիկիլիացի կանանց համար անընտան չէ երեւոյթը. զժուարութիւններ չկան:

Յանկարծ, կարծես անտեսանելի վրիժառու ձեռքէ մը հարուածուելով, ամէն ինչ տակնուվրայ կ'ըլլայ: Սրբորդ զաւակի ծննդաբերութեանէն ետք՝ Անթոնիէթթա ցնցուած ըլլալու թիթեւ նշաններ ցոյց կու տայ, կարծես թէ հանգիստ չէ, իանգարուած քան մը կայ իր առողջութեան մէջ: «Երբ կը հասնի Փորանէլլօյի հօր անանկութեան լուրը՝ անանկութիւն՝ որուն մէջ կուլ գացած է Անթոնիէթթայի բերած ամբողջ հարստութիւնը: Այս լուրը միանգամ ընդմիջու կը խանգարէ Փորանէլլօյի կնոջ մտայնն ու հոգեկան առողջութիւնը, խորապէս կը ցնցէ զայն. ամիսներ կը մնայ



Փիրանաեյլոյի կիներ՝ Անթանիէթ-թա

անկողին առանց բառ մը արտասանելու, և անզամաչոյծ  
փեճակի մէջ:

Դրամօժիտի և ամսական եկամտաբեր կորուստին հետ,  
գծուարութեանց երկար շարան մը կը կանգնի Փիրանաեյլ-  
լոյի դիմաց: Մէկ կողմէ կնոջ անհանգստութիւնը, որ դար-  
մանել պէտք էր (քանի մը դոճարեղէններ գրաւի տակ կը  
դրուին), միւս կողմէ ապրուստը պէտք էր ապահովել՝ թեր-  
թերու ետեւէն վազել, պատուազինի զանձու պահանջէլ,  
զարակները քրքրել և նոր ձեռագիրներ գտնել, դրել: Փի-  
րանաեյլօ ուսուցչական պաշտօն մը կը ստանձնէ կանանց  
յատուկ ուսուցչանոցի մը մէջ, ուր իսպախան դրականու-

թեան դասեր կ'աւանդէ . մասնաւոր դասեր կու տայ օտարականներու , որոնք իտալերէն սորվիլ կ'ուզեն :

Այս բոլորը դիւրին , տանկի դժուարութիւններ են միայն , եւ ոչ մէկ ոգրերգական բան պիտի չպարունակէին , եթէ Անթոնիէթթայի մտային աւողջութիւնը իր հաւասարակչութիւնը պահէր : Օրէ օր , շաբաթէ շաբաթ կը վատթարանայ կացութիւնը : Մնակութեան լուրէն քանի մը ամիս ետք , երբ Անթոնիէթթա դուրս կու գայ իր լուսթենէն ու անդամաւաճութիւնէն , կը սկսին նախանձի ահաւոր տեսարաններ , որոնք իրար կը յաջորդեն զբեթէ առանց ընդմիջումի : Կը բաւէ թղթատել ֆիրանտէլլոյի գործերը , տեսնելու համար թէ ի՞նչ սիրտ պատուող տեսարաններ տեղի ունեցած են կնոջ դրամօժիտի կորստեան լուրի ստացումէն ետք :

Անթոնիէթթայի նախանձը կը գլխաւորէր սինիոր Փարթուլանոյի , այսինքն իր Հօր , նախանձի չափաստիճանը , 190է-էն այս կողմ դժոխքի վերածելով տունը : Կը նախանձէր ամուսնոյն ուսուցչութեան պաշտօնէն , աղջկանց վարժարանի մը մէջ դասաւանդելուն համար : Կը նախանձէր նուագադոյն ուջոցումին համար , կը նախանձէր ֆիրանտէլլոյի բարեկամներէն , բարեկամական հաւաքոյթներէն . Անթոնիէթթա կը նախանձէր մինչեւ սնագամ իր ամուսնոյն պրական ստեղծադրութեանց . արուեստի երեւակայական աշխարհին : Գրագէտ մը , - կ'ըսէր ան , - իր Հողին կու տայ աշխարհին , իր տեսակին մէջ դաւաճանութիւն մը չէ՞ ստիկա կնոջը հանդէպ , անհաւատարմութիւն մը , քանի որ այդ Հողին պէտք էր պատկանէր միայն ու միայն իր կնոջ . . .

Հրեշտակային զպտութեամբ մը , անհուն սէրով Փիրանտէլլօ կ'ենթարկուի կնոջ բոլոր պահանջներուն : Կը հեռանայ իր բոլոր բարեկամներէն , կը խուսափի երթալէ մինչեւ անպամ իր սեփական թոտերակներու ներկայացման . շահածները , ամբողջութեամբ , մինչեւ վերջին լիբը կը բերէ ու իր կնոջ կը յանձնէ , որպէսզի կասկածները պակսին : Հակասակ ուղեղային հաւասարակչութեան խախտումին , թմիչկներու եւ բարեկամներու խորհուրդին , կը մերժէ զայն սալաքարիւմ մը դնել , կը մերժէ մանաւանդ պիտական , հասարակաց հիւանդանոցը փոխադրել տալ (քանի որ իր նիւթական միջոցները տւելիին թոյլատու չէին այդ ժամանակ) :

Կեանքը կ'ընթանայ այս երկու տարեք աշխարհներուն միջեւ . մէկ կողմէ առօրեայ կեանքը՝ իր դասերը , դուրսի աշխարհը , հացը շահելու պարտադրանքը , զաւակները , անձնական մտածումները , ապրումները . միւս կողմէ կնոջ հիւանդագլին նախանձոտութեան ստեղծած աշխարհը , ուր ամէն ինչ կը դասաւորուի ըստ այդ նախանձին , ըստ այդ կեղծոնացման : Երկուքն միջեւ Փիրանտէլլօ կը քալէ , կ'ապրի , կը շնչէ , կ'ուսուցնելով իւր մէկուն , եւ միւսին պա-

հանձնեցրը. ենթարկուելով կնոջ երեւակայական աշխարհի կանոններուն, բռնութեանց ու պարտադրանքներուն, ինչպէս նաեւ, անշուշտ, արտաքին աշխարհի, իրեն ժամանակակից բնկերութեան պահանջներուն, պարտադրանքներուն, կանոններուն: Այսպէս, տարիներ, ամբողջ և8 տարի:

Տիկին Փիրանտէլլօ, նշմարելով իր զուակներուն անոց սէքը հանդէպ իրենց հօր, կը սկսի անոնց հետ նախանձիւ, կը նախանձի մանաւանդ իր աղջկան, Լիէթթային: Իրեն համար եփուած ճաշերը կը պահանջէ որ նախ աղջիկը ճաշակէ, վախնալով որ կրնայ թունաւորած ըլլալ զանոնք:

Փիրանտէլլօի կեանքը կը վերածուի կոշմարի մը, իրական Փիրանտէլլեան կոշմարի մը, որ մարդ կրնայ իր սեփական հասարակչութիւնն ալ վրայ տայ: Ո՞րն է իր իրական դիմադրոջը: Արդեօ՞ք պատուաւոր մարդ մըն էր, ինչպէս կը թուէր ինք բոլոր, թէ իր կնոջ երեւակայած հրէշն էր ինք: Երկու այս հակասական երեւոյթները, նոյն մարդուն վերաբերմամբ, իրականութիւններ էին, եւ պարտադիր իրականութիւններ, նայած դասողութիւնը ընդհին: Իր կնոջ ուղեղին համար, առանց որեւէ վարտնեմի ինք էր ա՛յն՝ ինչ որ ծայրայեղութեան պայտծ եւ բնկերութեան առումով հասարակչութեան սահմանը անցած ուղեղ մը կը ներկայացնէր: Իրեն համար, ինքզինք դատելով իր ընթացքէն, ինք չէր այն՝ որ Անթոնիէթթան կը կործէր: Ո՞ր էր ուրիշն ինք, ի՞նչ էր ինք, ո՞րն էր իրական Փիրանտէլլօն, կա՞ր իրական Փիրանտէլլօ մը... ամբողջ կեանքը դիմակախաղ մը չէ՞ր արդեօք...:

Համաշխարհային առաջին պատերազմն է, տղան, դիմուոր իտալական բանակի մէջ, զերի կ'իյնայ աւտրիայիներու ձեռքը 1915 Յուլիսին. կը հիւանդանոց, Կարտինայ Կասրաբի կը միջամտէ, աւտրիացիք պատրաստ են ազատելու Փիրանտէլլօի սղան, սակայն պայման կը դնեն որ փոխարէնը երեք աւտրիացի դերի պէտք է ազատագրուի: Հակառակ կնոջ թախանձանքներուն, հայրենասիրական պարտադրանքով մը Փիրանտէլլօ կը մերժէ իր զուակը փրկելու համար նման խնդրանք ներկայացնել իտալական կառավարութեան:

Աղջիկը, Լիէթթա, գրեթէ 20 տարու է ալիւս, Մօրը նախանձի ասուոր տեսարանները տանելու տնկարող ու ելքի ճամբայ չգտնելով, անձնասպանութեան փորձ կը կատարէ: Բարեբախտաբար զործածած ատրճանակը Հին է, ժանդատած, եւ կրակ չ'առնէր: Լիէթթա տունէն կը փախի, երկար ժամեր կորսուած կը մնայ, մինչեւ որ դիմք կը զբտնեն թիպէր գետի եզերքը: Այլեւս չի կրնար տունը մնալ, կը դիմուի Պլորանս, հօրաքրոջ մը մօտ:

Պատերազմը կը վերջանայ, Միլիթանօ կը վերադառնայ թոքախտաւոր, Բարեբախտաբար բուժեւի, եւ կը բուժուի:

Տունը ղժոխք է: Կինը ամբողջովին կարանցուցած է իր հուսաարակշռութիւնը:

Կեանքը կոշմար է: Զուտկենքը ցրուած են եւ չեն կրնար սուն գալ:

Ի վերջոյ Փիրանտէլլօ տեղի կոչ տայ կեանքի այդ պարտագրանքին, եւ գութը գտակրով, տրամարանութեան ենթարկուելով, իր գաւակներուն իսկ համար կը համաձայնի կինը տեղաւորել սանաքորիում մը: Մանուանդ որ իր նիւթական պայմանները լաւ են հիմա, եւ կրնայ մասնաւոր, լաւ հիւանդանոց մը տեղաւորել զայն:

Կարճ ժամանակ մը ետք, 1918-ին, մահը կ'ազատէ Անթոնիէթեան իր շարշարանքերէն, տասնութ տարուայ ղժոխային կեանքէ մը ետք, որ իր շուրջ կ'առաջացնէր մարդկային տրամարանութիւններէն ամէնէն դորատորներն անպատ խախտելու կարող դոյաժիւնակ մը, որուն մէջ ապրած էր Փիրանտէլլօ ամբողջ տասնութ տարի, առանց բռնակ մը իսկ կորսնցնելու իր անհուն գութը, մարդկային դուրգութեանքը հանդէպ անոր, որ իր գաւակներուն մայրն էր եւ զս'ը պայմաններու, կամ ժառանգականութեան մը:

Տասնութ տարի շարունակ Փիրանտէլլօ ապրած է շարիւրիթոսի մը մէջ, որուն ելքի դուռը կը մնար հեռաւոր, անտեսանելի: Տասնութ տարի շարունակ իր կեանքը եղած է կրկնակ կեանք մը, մեծ մասը տունը, կնոջ պահանջներուն համապատասխան կաշկանդումներով, ու հոր մը, ամուսինի մը գութով ասնելի դարձած. փոքր մաս մը դուրսը, սկիզբները զատաւանդութեան համար, հետազային իր դործերու հրատարակութեան կամ ներկայացումներուն համար: Չկարենալով ապրել իր կեանքը, կը մնար իրեն գրելի գայն, եւ այդ եղաւ սկիզբնաւորութիւնը հոյակապ բիւրեղացման մը, որ Փիրանտէլլօն տարաւ ղէպի մնայուն արուեստի խորութիւններն ու բարձունքները:

Իր առջին գրական մեծ յաջողութիւնը կը պարտի ղէպի մը, յրուած 1904-ին «Հանգուցեալ Մաթիաս Փաւսթալ», որ թերթօնի մեւով կը տպագրուէր, եւ որ այնքան ընդունելութիւն գտաւ, որ, աննստիւրեաց երեսոյթ, առկաին յաւարտած թերթօնի հրատարակութիւնը, սիտաթարգմանութիւն Փրանսերէնի Թ. Գերմաներէնի: Իր անունը կը սկսէ տարածուիլ, եւ նիւթական վիճակը՝ բարելաւուիլ: Կամ թերեւ թէ մը առաջ, թատերակ մը գրած է, որ թէ մնացած է որ խաղցուի, եւ չէ խաղցուած պարզապէս անփութութեանը պատճառով թատրոնի մարդու մը, որ կ'ուշանայ պատասխանելու Փիրանտէլլոյ Տեղեկանալով իրողութեան, այնպիսի գայրոյթ ու կատաղութիւն կ'առաջանայ Փիրանտէլլոյ մէջ, որ այդ մարդը սուսբաւարտի մէջ սպաննել սպաննալէ ետք, կը վճռէ «Լնդմիշտ» հրատարակել թատրոնէն եւ թատերական գրականութիւնէն:

Բարեբախտաբար, տարիներ ետք, մօտ ասօրը տարի  
ետք, բարեկամներու կրկնակի թախանձանքին տեղի տալով  
Միկիլիւս բարբառով թատերակ մը կը զբէ եւ կ'արտօնէ բե-  
մադրութիւնը:

Թատերական ձեւը կը զբաւէ զինք, որովհետեւ իր  
կեանքի բմբուխով թեան հետ կը նսնանայ, լաւագոյն ար-  
տայագութեան միջոցն իսկ է այդ բմբուխով թեան, փաստն  
իսկ է իր ըսածին: Թատերական տենդ մը կը զբաւէ զինք:  
«Ձգուշացիր ձիագօտ» թատերակը կը զբէ երեք օրուան  
մէջ. «Ամէն սէկուն իր ճշմարտութիւնը»՝ վեց օրուան մէջ.  
Իր լաւագոյն թատերակներէն երեքը մէկ տարուան մէջ կը  
գրուին 1921-էն 1922. «Վեց անձնաբույրիւններ, որոնք  
հեղինակ մը կը փնտռեն» երեք շաբթուան մէջ, ապա, յա-  
ջորդ երկու շաբթուան ընթացքին՝ «Համրի Զորարդ» թա-  
տերակը, ապա, յաջորդ ամիսներուն, «Հազուեցնել ա-  
նախ, որոնք մերկ են»: Հրաշքի նմանող արտադրողական  
կարողութիւն մը կը յսականչէ զինք, շատ տարբեր իրանի  
արտադրութի ձեւէն ու կարողութիւնէն, որ երկու տարին  
անդամ մը թատերակ մը կու տար:

Կինը մեռած է արդէն, երբ այս թատերակները կը  
գրուին. իր կեանքը հիմա կ'անցնի թատերանի քույրաներուն  
ու սրահին մէջ, զերասաններուն ու բեմադրիչներուն հետ:  
Ինչն ալ կը դառնայ խմբավար մը, բեմադրիչ մը երբեմն:

1925-ին, կը ստանձնէ Հոռոմի Օտէսքայի թատրոնի  
գեկազարութիւնը, կը վայելէ Մուսոլինիի հովանաւորու-  
թիւնը. իր խումբով աշխարհ կը շրջի՝ Թրանսի, Գերմա-  
նիա, Կեդրոնական Եւրոպա, Հիւսիսային եւ Հարուստին  
Ամերիկաներ: Ամէն կողմ իր շահածը կը բերէ ու կը ծախ-  
ուէ Հոռոմի թատրոնին վրայ. մէկ տարուան մէջ 600,000 լիբ  
կը կորսնցնէ իր անձնական գրածէն ի նպաստ իր թատրո-  
նին: Այլեւս կ'ապրի երկու պայտասկով: կը զբէ ուր ալ սր  
ԵՄԿ:

Հոռոմի մէջ կը սուլեն զինք (սկիզբները)՝ զրեթէ նոյն  
տաւն Փարիզի մէջ կը ծափահարեն, եւ Պատուոյ Լեգէոնի  
չքանանով կը պատուեն:

Ինականաբար իսկոյն կ'արժանանայ նաեւ իր երկրի,  
Իտալիոյ շքանշաններուն: Լոնտոնի մէջ կ'արգիլուի իր թա-  
տերակներէն մին, որպէս հանրութիւնը շփոթանքի մատնող  
թատերակ մը, մինչ անդին Պերլինի մէջ, յաղթական ըն-  
դունելութիւն մը կը սպասէ իրեն, լուսանկարչներով, ծաղ-  
կեփունջերով, սինէմայի զործիքներով, որոնք տեսնելով,  
կը կարծէ թէ այդ բոլորը ուրիշի մը համար տեսնուած  
պատրաստութիւններ են, եւ պանդոկի հասելէն, ծառաներու  
չունէն ներս կը սահի:

1920-էն 1936, տասնըվեց տարուան ընթացքին, Պէր-  
նար Եօ-ի հետ կը դառնայ ապրող ամենաճամբաւար թա-  
տերադրը, որուն գործերը ամէն կողմ կը խաղցուին,

բողոքները լեզուներու կը թարգմանուին, կը ծափահարուին, կը սուլուին երբեմն, բայց տեսարար կ'աղղեն. կ'աղղեն թատերական դրահանութեան եկող սերունդին վրայ, նոր ճամբուներ կը բանան թատրոնին համար, նոր հարստութիւն կը բերեն մարդկութեան. ու ի վերջոյ, 10 Դեկտեմբեր 1934-ին կ'արժանանան Նոպէլեան մրցանակին:

1936-ին, իր «Հանգուցեալ Մաքիսս փառալստ Վէսլը կը վերածուի սինէմայի, որուն առաջին ցուցադրութեան ներկայ ըլլալու համար մասնաւոր ճամբորդութիւն մը կ'ընէ, հսկելու համար որ տխարակերը հարազատ ըլլան իր գրականութեան:

Պազ կ'ստնէ, թաքտապ մը ծայր կու տայ, որ զինք կը նետէ փոխնիփոխ զատանցանքի եւ պայծառատես խաղաղութեան յաջորդական վերիվայրումներու մէջ, օրեր շարունակ: Յստակատեսութեան բողոքներուն կ'արտայայտէ իր միտէ ցար՝ աւարտած չլլալը իր վերջին գործը «Լեռնիքու հսկաները», որ այնքան մօտ էր իր սրտին եւ ուր արեւոյ ստեղծագործութիւնը կը բարձրանար ամբողջական մերկացման մը աստիճանին:

Ուժը կը գտնէ իր սնարին մօտ վազած տղուն թելապարէլու այդ թատերակի վերջին, չորրորդ արարուածի սեմարիոն, տառնց տխարակիմ անշուշտ:

10 Դեկտեմբեր 1936-ին, Նոպէլեան մրցանակէն ուղիղ երկու տարի ետք՝ կը փակէ իր աչքերը, 69 տարեկան հասակին, Մարսէլ ֆրոսթի նման մտահոգ աւելի իր արուեստի գործով, քան ինքն իրմով:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

(Մար. 1)





### ՎՈՒՌ ՄԱՐԴՈՒ ՍՏՈՒԵՐԸ ՌԵՂԻՂ ԶԻ ԼԻՆԻ

Հայաստանի գրողներու վարչութեան օրդան գերական Թերթին մէջ, վաղպէն Մնացականեան իրենի վերադրումը անդրադարձած է Պ. Մնացականի զեւ այդ շումն եմք գործին, այսպէս սկը- սելով իր յոգուածը.

«Մէրութեամբ լայս է տեսիլ մի... դժուարա- նում եմ ասել քէ ինչ, բայց գրի տեօ՛ւ ունի, վերնագիրն էլ անկեղծ խոստովանութիւն է՝ զեւ այդ շումն եմք: Դրա նեղիմակը Պօղոս Սնապ- եանն է»:

Առաջին պարբերութեան ընթացումն իսկ, ընթացողը կը շուարի: Եթէ Մնացականեան կը զօնարանայ զբզի մը գիրք ըսել, ապա ինչո՞ւ կը վերադառնի գրողներու վարչութեան օրդան զերական Թերթը, անոր էջերը կապելու համար զբզի տեսք միայն ունեցող զբզի մը հետ:

Կամ այն է, որ Վերական Թերթը իր ար- ժանուար բարձրութեան վրայ չէ ու ընթացք կու տայ տեսքէն բանեցու վերլուծութիւն, եւ կամ այն՝ որ Մնացականեան ասուածն հակասութեան մէջ է ինքն իրեն հետ, առաջին վարկեանէն իսկ:

Թեթեւ արժանութիւնները ծանրօրէն կը ճըն- լան թէ՛ ծանրութիւն յուսադրող քննադատին եւ թէ՛ լրջութիւն անկեղծի տուող հրեւրեկող օրդա- նի զոյգ վարկերուն:

Ո՛ր քննադատը եւ ո՛ր ալ Վերական Թերթը անլուրջ նկատելու մտադրութիւն ունի՞ք: Այլա- պէս լուսութեամբ կ'անցնէ՞ք արձանագրուածին վրային:

Բայց որովհետեւ անկախ ըստածէն ու ըս- տածին ձեւէն՝ զեւ այդ շումն եմքը զերթ է, նը- կատուելի գիրք եւ իրրեւ այդպիսին երկար վեր- լուծումի ներքէ զարձեք Վերական Թերթին մէջ, կը գտնենք, որ արժէ անդրադառնալ այն մասին, թէ՛ իրաւ, զՄուս մարդու ստուերը ու- ղել չի լինիք:

Իր առաջին պարբերութեան մէջ՝ Մնացա- կանեան շարունակելով իր թեթեւ արժանութիւ- նը, զիւր մը ըրած ու իր գիւտով հպարտ մեկու- մը պէս կը խորհի վերջին հարուածը սկիզբէն

տուած ըլլալ, պնդելով որ Վերնագիրն էլ ան- կեղծ խոստովանութիւն է - զեւ այդ շումն եմք.

«Յոտովանիլ՝ կը նշանակէ զործուած սխալ մը կամ մեղք մը ընդունիլ: Բայց այդ շումը ըլ- լալ, խորհրդանշական այդ Շում նմանիլ տարբեր խմոր մը կ'ենթադրէ, տարբեր բանի մը մասին կը վկայէ: Պատիւ է, մզաւում: Ուտի, անընդու- նեյի է Վոտովանութիւնը բարձր իտ. Կթէ հայիսկ մտնանք Մնացականեանի յետին միտքը ու անտեսնք խորագիրը իր փոխարեանական իմաստն անշատելով՝ հեղինակը իր պատկերա- ցուցած շունչըու դասուն դասելու գոհակա- թիւնը:

«Եւ այդ շումն եմքը խոստովանութիւն չէ, այլ՝ այլ արտարուի ու հպարտ յայտարարութիւն, հաստատում, լինելութիւն, կոչ: Իսկ եթէ Մնացականեան իր հակացած ձեւով կ'ըմբռնէ շումը, ապա ի՞նչ արտով կը մտանայ անոր, կ'իջնույ բնագրութիւն հաստատումներու շարանի մը մէջ: Ինչո՞ւ կը շարանայ, որ զարանայ, քունը կը փոխցնէ:

Կը վախնայ Այդ շումն: Ո՞վ է Այդ շումը, որուն կը նմանի հեղինա- կը ու այդ նմանութեան զէ՛մ յօդուած կը գրէ Հայաստանի քննադատը:

Գիրքը բուական սպասում ունեցաւ հոս, կարգացուցաւ, գրախօսուցաւ, քննարկուցաւ: Ընթերցողը ծանօթ է այսինքն անոր բովանդա- կութեան, փաստելու համար, որ ետինքն Մը- նացականեանն եւս կրցած է լու ձեւով հասնելու ու ներկայացնել Այդ շումը, շունով արժեւոր- ւած զէպէք, արտաքինք իր պարբերութիւնը:

«Գիրքն սխալում է յազիւ մի պատմութեամբ: Մեծ եղանակ տարիներ անց, երկու հայ ուղի- տրներ գրուցիլով անցնելու եմ լինում Ալպիան յետնորի ստրատով: Ինչ-որ գիւղի մտնորում մի շում, իրեն մասք քանիքից ու երգիցից կը- անանում է ուղեւորներին ով լինելու եւ մտնորմէն հարում: Ենտայ մնկնրը եւս ու տաք վագիլով ստիպում է Երանց բունի մտանայ ընդմիջայրը

տանոց համբան: Եւ մը ցրանց բերում է իր տի-  
րոջ մտա: Պարզուս է, իր տէրը իսկ է, մեկն  
այն տնդսմուսումներէ, որ եկելի Ալիպական  
ստորոտում տուն տեղ է դրելո:

Միւշիւ հոս Եան պատմութիւնն է, գէպքը:  
Եարուհակոթեան մէջ, Մնացականեան սեփոյթ  
հարկանոյ մը կը կարծէ հանել հեղինակին միտք  
բանին:

Քննականում է աշխատաւոր եւսը, ուր էլ որ  
գնացել է, տուն է շինել, աւելորդ թնա չի դար-  
ծել ուրիշէ հաղիմ, ոչ էլ յարք պէտք է Յայել  
ցրա երկնիքն, իր ամենամարդկայինն զընդու-  
թեան մէջ էլ բարձր պահելով մարդու պատիւը:

Մնացականեան միայն այդքան կը հասկնայ,  
այս կ'ըզբազանէ ճշտեմէն ու գէպքէն:

Յօտինք սակայն եղանակը այդ գնանակում  
էքին մասին եւ փորձեր յատկորէն տեսել  
Այդ շուքը:

Եւ մը թնայող իր տիրոջ բառերը զործա-  
ծող, իր տիրոջ հրգեքը երգող անտեսութեանը կը  
նկատէ հարազատ, բարեկամ, ու կ'ուզէ իր տի-  
րոջ մտա տառապանքէն զաննք, կասկէ մը զանկում  
տիրոջ եւ աննշտութեանն միջեւ:

Նշանակում է՝ որ Ալիպաններու Այդ շուքը  
իր թնայողն ու հոտաւորութեանը կրցան է հասցնել  
մարդոց գիտակցականին:

Նշանակում է՝ որ Ալիպաններու շուքը  
մարդոց չնտեղանն ու հասկնալ շուքանը կրցան  
է՝ ոչ միայն հասկնալ, այլեւ հասկնալի գործնէլ:  
Տեսնել իր տիրոջ հիւրեր, որոնք անոր պէտ են,  
որոնք կարտող կը միայ տէրը:

Նշանակում է՝ որ Մնացականեանի գնանա-  
կում էն ոչինչ չի նշանակում, ու այդ ոչինչին  
միայ բարձրացող յաճոյք վերուսումները, միեւ-  
նոյն ստիպով, աւազի միայ շինուած տուններու  
պէս դիւրին փուլ կը գտնուի:

Ու մինչ իր գրախօսականին սկիզբը, գիտակ-  
ցարար չնակնալ կը մեւտցնէ Մնացականեան  
շան կերպարին մէջ դրուած խորունկ իրականա-  
թիւնը, վերջապետութեան, սակայն, տեղ մը, ան-  
դրտակցարար, կը մատնէ ինքզինք, որ լաւապէս  
բժրուած է Այդ շուքը:

«Ալիպական ստորոտի օտար շուքը կարում  
էր, որովհետեւ շուքն էին հայրենակիցները եւ  
ցամակնուս էր միտարարած, միասին կնդէ-կող-  
նք տեսնել օրանց»:

Ինչպէս կ'ըբեւ, Մնացականեան զո՛ւ է Ալ-  
իպաններու շան կեցուածքէն, հայտարար հաջող-

եւրէն, բայց իրատ գոգոս է անոր կերպարին  
մէջ մտած անմէն, որ նոյն արդն չի դաւեր շա-  
թիւն, միաւորման համար չի հուշեր, կը հաշ-  
«Որովհետեւ պանդուխտ եայտքին իր զնկն  
սանդ Սովետական Հայաստան ունենէ, սեփա-  
կան տուն, տնօրէն կողմ հազ»:

Ատաջինը կը հաշէր բանի մը համար, երբ  
բորդը կը հաշէր բանի մը դէմ: «Համարքի եւ  
պէնթի ինքիքը մը արեւմտեանն է հոս եւ շու-  
գործուած է երեւութեան հակասութիւն մը,  
զոր կարելի չէ անտեսել»:

Ալիպաններու շուքը ճշտեմէնում էր միաւոր-  
ւած տեսնել բաժան հղած հայրենակիցները,  
կ'ըբեւ, ճիշդ է, բայց կայ նախնի նորու-  
թիւն մը, զոր պէտք էն աշխարհը ընել  
Այսպէ՛ս, - շուքը բաժան եղած հայրենա-  
կիցները միաւորուած տեսնել չէր ցանկար,  
միաւորուած կ'ուզէր տեսնել նոյն բառերը ար-  
տասանող հայրենակիցները, նոյն երգեքը եր-  
գողները: Ենթադրելի է, որ սարքեր բառեր ու  
երգեր կրկնող շատ մարդիք տեսած էր ան, բայց  
զանտեղ միաւորուած տեսնելու ցանկութիւն յայտ-  
նած չէր, սարքեր բառեր արտասանող ու երգե-  
քերող մարդերուն զէմ հաջած էր հաւանարար,  
սարքեր բան չէր կրնար ընել, պիտի ճար իր  
շնային թնայողն ու փարսիքն հաւատարմի, ու  
զազանիք չէ, որ դիրքը հեղինակած գրած հա-  
մար մեր հայրենիքին մէջ ու սեփական հոյն  
միայ սարքեր բառեր կ'արտասանուին, մեր ու  
գիւն անհաշտ երգեր կ'երգուին, որոնք զէմ հա-  
շիւը արժանաւոր բանի մը գոգոս հաշիւն է, ընդ-  
հակառակն, անհարգուած սրբութիւններու հա-  
մար հաշիւն է, բաժան եղած հայրենակիցները  
այդ սրբութիւններուն շուքը միաւորուած տեսնել  
լու ցանկութիւնն է կրկին: Այս է որ չ'ըբեւն  
ու չի ներքեր Մնացականեան եւ Հայաստանին  
փակցուած թնայողիկը ցուցադրելով՝ կը դիմէ  
ամբողջականութեան...:

Հայրենիքի մէջ, երբեմն, արտասանութեամբ  
կր բազման, որ հայ մեծքը:

Մական, երբ օտարութեան դժոխքին մէջ  
գրուած զբողի մը ունեւորուող անենն, զհասկա-  
րանային կնիքով գրուած գիրքը, ինչպէս կ'ը-  
սէր ողբացեալ Պոյանեան, փոխանակ սրբաբու-  
թեան ճիշդ արձակելու, որ հայրըն հոյն կը մեան,  
հայ մեւուր պայքար կը մղեն, հաւատարմու-  
թեան շուքը կը պտտցնեն իրենց կուրծքերուն  
սակ ամէն որ, ամէն վայրկեան, կը փրփրեն

յանհարձ, կը կազմակերպեն՝ բայց երբեք Այդ շան պէտ:

Փարիզի պարտին ձեռք, Պոզոս մը, Պոզոսներ այսպէս: Իրենց երեսնասուրսներէն ամէնէն սառ չըլանին, Բանդարաններու, պեղծկուրիներու, աշխիներու ու հազար երեսուցեանց աբ ռասանին մէջ լուսն մը կը պտտայնն իրենց հետ, ոչ անտես լուսն մը, ա՛յն շունը, մինչ Մնացականները ախտեղեն, հայրենիքէն, եզարն էր Թարգմանեն որպէս զաւանտութիւն, հայրենազաւտութիւն:

Մնացականներ ճեղհիւցի բանաստեղծէ մը եւ պրակտիկացի դրողէ մը մէկնական պարզուկ, համարգական նաթերու մէջ հազիւ հանդուրժելի մասնուններ կը յիշէ մեր հայրենիքին մասին եւ ապա սրտի կատարեալ խաղաղութեամբ կը հարցնէ:

«Մի պան կողմ-կողմի քրէք տաքիմ ու մընայանին եւ կը տեսնէք, քէ ով է իսկական օտարը»:

Հայրենիքին համար տագնապող ամբողջ դիրքի մը մէջ նպատաստող պարտերութիւն մը շղջանելու շահ կուրծնու եւ սառնի պատահական մէջ խօսքին շանտալով այդպիսի օտարումը բաղդատութիւնները ընել՝ ընականեան պայմաններու մէջ ապրող հայ մարդու վարձ չէ, աւելի շատ կուսուցանումը զտոն է, սովետականի, որ տիջան մութ բարձր ներմուծեց մեր մէջ:

Անպայման ու ամէն ինչ ժխտելու մտայնքէն սարուած՝ Մնացականներ կ'իջայ, սակայն հակասութեանց եւ ինքնատեսութիւնի վախճաններն մէջ: Տեղ մը կը մեղադրէ, որ Վճռապետ ինքնօրով սիրում է մտերմիկ կտայն պահպանել Լանդկանայ աշխարհի բնակիչների եւտ, ուրակակներէ է տառն երախրում, ստանքներն ու պարզապէս շարքային համբաւցեաների, ետագոյն մի էին սփռոց մետում գետնին ու իր հոգոց բաժնի համար մրանց, բայց նոյն Մնացականները, առանց երկուցիւր ըլլալու մասնագութեան, Սրտաններու շան արքով հետ ամբանմանքու գիշում ըջան Գրանտուրիին պարագան կը մեկնարակէ հետեւեալ շնորհաբերիկ բացատրութեամբ:

«Դա անշահախնդիր եկրքնկուպարիմն էր այն Գրանտայի, որ տանտանակներ յնտայ երախտապարտ մնաց Մանուշեանին, գլուխ խաւարից իր ազատարան համար բնկած հայերի աստը: Հաբ երգատարդի մը հետ Գրանտուրիի մը ամանական զիջումը զանաւարիցիք հե-

րժնկուրիներն համարելու այս պնդումը եւ սրտանու այդ ու նման զիջումներու համար Մանուշեանի պայտը, նահատակութիւնը, Ֆրանսայի զլուխ խոնարհելու փաստը թոտոյ, սորոհութիւններ են, որոնց վերջումովը նոյնքան ճիշտագիտի պիտի ըլլար, որքան երկուցիւր են անոնց ստիժով ցոյց տուած Մնացականներ հաստատումները:

Պան մը, սակայն, տառայնորէն ընդունելը արուած բացատրութիւնը: Մանուշեանի մը համար ամբողջ Գրանտան երախտապարտ մնացիք է մեղի: Պայտըն ու նահատակութիւնը կրնան նման պրագութեան ստեղծել մարդոց մէջ, հարեւր է սակայն նոյն օրէնքին վրայ յենելով հարցաւ, ինչ ո՛ր շահով Սովետական Հայաստանը երախտագիտութիւն ցուցարարից ցարը՝ Հայաստանի համար ինկած Հայաստանի ընտրելագործ զուակնեցուն, որոնց ամբողջութիւնը ծանոթ է իրեն ճան Յնտայի:

Ուրիչ անց մը, Մնացականներ ճանրժիկ մթնոլորտ մը կ'ուզէ ստեղծել, այս անգամ մեն ու յուերմարտ հանդուցեալի մը յիշատակումով: «Մեր տղն ու հարցը դեռնու Մաշտոցն է օրհնելը»:

Նուզէն կ'երեւի, Մնացականներ հանդուցեալներու փաստարտութիւնը իրեն վերապահման է, իրմէ դուրս, իր ընտրանիքին քառ՝ անընդունելի է սեւի հանդուցեալի ուղեկում, հակահակ պարագային՝ եզարն էր յայտարարող զըբմային հայրենասիրութիւն - եւ ... արտասուող շըբմար:

Թի Մաշտոցին օրհնումն տղն ու հարցը ի՞նչ շահով կը մարտն հետ, ինչիք մըն է, սրտն մէջ չենք ուղիք հետ միքնուի: Թի ինչ Մանուշեանը կարելի է ուղեկուել ու վկայութեան կանչել: Բայց Գնորդը ոչ, Սերբը ոչ, Հրայրը ոչ, Գուսանը ոչ, Ծանոթ ու անտես Յնտային ոչ, այդ ալ վկայութիւն մըն է ճշունեց չկարենալ ըմբռնելու, զուտ իսկ չկարենալ ըլլալու...:

«Մարդիկ մեր պահույնի սպրտմներուն ծանոթ չին: Աշխարհը մեր կարտիմ ծանոթ չէ, բար մարդկութիւնը, բար աշխարհը, մարդիքը, աշխարհը ... Բայց շունքը չկրքան պիտանալ մեր վերջերուն ու արագանցեցին...»:

Իր զիջքին մէջ, անց մը, այսպէս պտթկան է Անպահան: Մնացականներ, սակայն, կը դունէ, որ ճիշտ չէ Մնացականը: «Մարդկութեան ազատարանն ասպետները միշտ էլ ճանայի են

վեզ եւ խորապէս արքի վեր նախատարի արեւ-  
կոստաները, կ'արձագանգէ ան, ի հեծուկս Սը-  
նապետնի: Այդպէս է, անշո՛ւշա, Ղարապաղի նոր  
միացող վերջը վկայէ...

Բայց ի՞նչ աշխարհ ու մարդիկ իրար կը  
խառնենք: Պանդուխտի մեր ապրումներուն ծա-  
նօթ չեն նշխարի մեր հայրենիքի հարազատները:  
Մենք հայրենիքով զինով, իրենք՝ մեր հայրեն-  
նապետութեամբ մտադրող: Մենք մեր կարգովն  
կրակներուն մէջ տաղուող մարդիկ, իրենք՝ մեր  
մէջ տարներն անսկիւն մուրհակով զորոշանալ...

Արտժը խորացնողը, յանախ, գաղափարականի  
տարբերութիւնը չէ այնքան, որքան այդ գա-  
ղափարականին անունով զրոհարուած կերբը:  
Եթէ Մնացականեաններու փոխարէն, որոնք ու  
մաքի ուր մարդեր ըլլային թեմ վրայ, գաղա-  
փարներու տարբերութիւնը մնալով հանդերձ,  
զինքնեզրութիւնն ու անհանդուրժողութիւնը  
վստահօրէն այս համեմատութեամբ չէր ծաւալու  
ու խորանար:

Միակողմանի են, ինքնագիտած չեն, կը վախ-  
նան հանդերձաններու յահափանգէն, իրենք խայթ  
ունին:

Այդ աւերիչ բարդութիւնն եթէ կարենային ա-  
զատել, այդ աւերիչ բարդութիւնն ազատելու նը-  
ւերէն իրենց հիշելը, այն ատեն միայն կը  
յաշտէն ըմբռնել այդ շունը, ու հզարաստալ՝  
այն շունը իր կուրծքին սեղման իւրաքանչիւր  
հայրադիրով:

Աստուծանն ու կերբի մէջ՝ Մնացականեան-  
ները ի զուր շահակն կը ձեռացնեն յասակ ըս-  
տաները. ահաւասիկ թէ ինչ կը գրէ ընտաղաբը.

«Մի մարգ, որ իր իրարացումը վեր է գա-  
տաւ մայրնիքի իրականութիւնից, առում է այդ  
իրականութիւնը, միաժամանակ նաեւ իրականու-  
թիւն է ազնաւան, կարող է արդեօք արդիարար  
սիրել ժողովրդին, որ արդէն 50 տարի, իմչ տերն  
է իր նրամիկ թակատագրի»:

Անգրադանաւորով հաւանարար, որ մի զուցէ  
Մնացականը կրկին թող կը բաժայ այդ ճերմանիկ  
նակատագրին ժառանգ, Մնացականեան կ'ահա-  
պարէ զէթ շափով մը որբադրել ինքզինք.

«Եղի եմ փառքիկներ, կամքի գերագոյն  
լարսից երբեմն ճանաչուցի եմ մեր օսկարները,  
բայց մեր օրնոց անդաւաճած է մնացել մազկա-  
լի քնարարութեամբ: ... Այո, եղի եմ ծանր տա-  
րիներ»:

Որ այդպէս է, ալ ինչո՞ւ զարմանալ, որ Սը-

նապետները իրարանցուծի մատնուցան, Որ  
այդպէս է, ալ ինչո՞ւ զարմանալ, որ Մնացա-  
նեքը գիտադաշտութիւն են աշխրոսէս:

«Ըստ այդ շունն նման կարգացող պարզուր  
ընթերցողն ինչ պիտէ, թէ Մնացականի հաղոր  
մէր հայրենիքին վրայն անցած կամ զեւ եւ  
յամտուող փոթորիկներուն զէմ էր, սակարկե  
ճոճուցնող բարձրուն զէմ, Ծանր տարիներուն  
ու զեւ հարկներուն վրայ Ծանրօրէն նստած ուր-  
ականներուն զէմ:

Ինչո՞ւ պայթէին այդ փոթորիկները, ինչո՞ւ  
ճոճուցին օսկարները, ինչո՞ւ ըլլային Ծանր տա-  
րիները:

Պատասխան տարի պէտք եղաւ, Ստանցի  
Դաւիթին արձանը ունենալու համար, Յիսուն  
տարի պէտք եղաւ, Ապրիլ 24-ին արձանը ունե-  
նալու համար: Պէտք եղաւ յետն տարի, որ  
Անդրանիկը կըթողուի հայրենիքին մէջ:

Անդրանիկը... ուրիշ հանդուցեալ մը...

Իսկ միւսները, որոնք արձան պիտի ստանան,  
պէ՛տք է ստանան: Մինչ այդ ի՞նչ կ'ուզեն որ Ը-  
նենք, ինչպէ՞ս չեն կրնար ըմբռնել, որ մեր ար-  
եան ինչ թելադրանքով կը նմանիք Այդ շունը,  
կը հաղինք, մեր հ'րգն է՝ կը կողականանք...

Մեր մատնանշումներն պարզ երեւցաւ, որ՝  
Մնացականեանները երբ ըսեն՝ «այո», եղի  
են Ծանր տարիները, իրաւունք ունին ինչ կր  
նայնը ըսն Մնացականները՝ իրաւունք չունին:

Մնացականեանները յետն տարիներու ատե-  
ծագործութեամբ հզարանալու իրաւունք ունին,  
ունայն Մնացականները հազարամայ մեր գա-  
տութեան որեւէ այլ շրջանի փառքը հիւսելու ի-  
րաւունք չունին:

Մնացականեան իրաւունք ունի աւանդ ի-  
րայնէլ, աւանդողը ուրանալ, Մնացական իրաւունք  
չունի աւանդին հետ նաեւ աւանդողին գօփքը հի-  
սելու:

Մնացականեան իրաւունք ունի հայրենասէր  
նկատելու ինքզինք, հայրենիքը պայմանաւոր-  
ով որոշ գաղափարաբանութեամբ մը, Մնացական  
իրաւունք չունի այդ պայմանաւորութեան  
զէմ ծառանալու եւ ստանց պիտակի հայրենիք  
մը կարտող երգելու:

Մնացականեանի ըմբռնումով՝ յետն տարի  
առաջ կարեւոր կեանք գոյութիւն չունէր Հայաս-  
տանի մէջ:

Յիսուն տարի առաջ՝ Հայեր ու թուրքեր  
չկային:

Ահի՛նք առաջ՝  
 Հայեր ու համայնքիներ չկային:  
 Հայեր ու ասորեստեղծներ չկային:  
 Յիսուս ասորի առաջ՝ Տեսալի գոյութիւն չէ  
 կրնար ունեցած ըլլալ Հայաստանի մէջ:  
 Յիսուս ասորի առաջ՝ հայրենիքի թրու զգար-  
 նութիւն չէ կրնար գոյութիւն ունեցած ըլլալ  
 ճարզոց սրահերուն:

Իսկ եթէ գոյութիւն ունեցեր են այդ բոլո-  
 րը, Յանգուցեմալ են, Հին սփոսց ու անոնց մա-  
 օրն իստիլը՝ ունեւարկով:

Մնացականեաները պայժմաւարուած հայ-  
 ընդի՛ք մը զովջին լծուած են: Եղբարեկանօրին  
 այդ ճորտութիւնը կ'ուզեն որ ուղբինք:

Իայց ոչտաք է շմարանն ի վերջոյ, որ հայրե-  
 նիքը իր լինելութիւնը չէ աւարտած ասկաւրն:  
 Փաստը այն է, որ ինչ որ ինք չէ կրնար ընել իր  
 սանձաններուն մէջ, տարագիր բեկորները կ'ը-  
 նեն ասարզութեան միշտ իսկ զօնակ պայ-  
 մաններուն մէջ:

Այդ շնորհ...  
 Այդ շահ տառապանքը, կաղկանձը, անընդ-  
 մէջ անոցը...

Մնացեանի գիրքը մեր այսօրը, մեր այսօր-  
 ան ասկանակները, վերաւարանները, սէրերն ու  
 յոյսերը հայելեացնող փայլք մըն է, ու անոր  
 դիմաց Մնացականեանի մասնատ խուճապը, ըն-  
 քերցողին հետ խօսելու փութկոտութիւնը կը  
 հաստատէ յայտնուած մասնատներուն իրաւո-  
 թիւնը, թափը, վառակիչ անգամանքը:

Արդարեւ, կը հաստատուի, որ ՎԵՍ ԱՅՔ շուճճ  
 ենք պարզապէս պարտաւորով գիրք մը չէ:  
 Ընդհակառակն, ան լաւազոյն կրնայ մեր այսօրը  
 վերջունոյ ճարգան արամազութեան ասկ զըր-  
 տի, որպէս ներկայ օրերու հաղեանական միեակ  
 ու հասկացողութիւն, տխուր անհասկացողու-  
 թեանց ցովն ի վեր, շտանալով միաժամանակ  
 շտաբու անմիջական օրերու երգ ու գտազամ:  
 Ուրացումներու եւ զուր քայտարութիւններու

հղերական շրջան է մերը Արեւագան չէ, ու  
 լե՛ծ, որ ծնունդ ասան արտի ու մայր նման  
 պոթկութեան:

Սփոռց կարգը գծուարութիւն ու սրտա-  
 լուկ: Կարգը-կարգ մէկ պահանջը, ասիպո-  
 ղութիւն: Այդ բոլորին հետ ու նախապէ՛ պատ-  
 մութեամբ պիտուած առաջ կը ասեմք մեր լուծը:  
 ստիպուելով երբեմն, որ, այսպէս, մենք մեզ  
 պաշտպանենք մեր բժրոնելու անկարող կարող  
 զասաներու դիմ: Մերք ընդ մերք կրպարող  
 նսննք ունեցող լուծը:

Ու լուծերը, որ մենք ենք, լուծը՝ որ ու  
 կրնք մեր կուրծքին ասկ, ու միտները, որ շնա  
 կանօրին կը քրջան մեր տագնապին ի լուր:

ՎՄուռ ճարգու ստուերը ուղիք չէ լինին:  
 միջք է:

Իայց ու վ է Եւաքը, Եւաքը:  
 Մուռ ու ծոռաներ պատն ծրուծայ մեր իրա  
 կանութեան մէջ այն օրէն ի վեր, երբ մեր ասե  
 մաններուն մէջ հայրենիքն ու ինքնաթիւիւր  
 վերածուեցան մէկի: Արուհուողներ, մենք շնոր  
 ուղիք հաստուլ, որ հայրենիք մէջ հուռ մարդ  
 կույ: Գ'ուղենք միայն բմունել, որ Եւաքներ  
 կան, ակամայ կորստամակներ: Անա թէ ինչու  
 մեր մէջ Մնացականեանին եւ բոլոր Մնացական-  
 եաններուն համար ետն շուճճ է, որ կը լարու  
 նակէ անալ:

- Բռնակալութեան զոհերն են անոնք: Վա-  
 զը, երբ այդ թափը վերայ իրենց վրէն, անոնք  
 ալ նոյն ծրգը պիտի երգեն: Գիտի կրկին քա  
 ոստուն երաժշտի ու քառասուն երգերու անկու  
 բիւի խառնուրդին քառասուն անգամ գերակշիռ  
 ու արրեցնող համահասար անոցը Աւրիաններու  
 շան, հորսմիւնի մը լափ գեղեցիկ:

Մինչ այդ, մեր սմբողջ տառապանքին մէջ՝  
 կը շարունակենք անյիշատար ըլլալ Եւաքներուն  
 համար ու ըսել:

- Այսուհետեւ շարունակենք ներել ՉԻ-  
 արան զուճներուն...

Փյունուք - Ելքեփիէ

ԵՐՈՒՄԷՆԻ ԵՐՈՒՄԷՆԻՅԱՆ

### ՊԱՓԻ ԵՐԱԶԸ

- «Մէնք պէտք է լինենք մեր Են-  
ցուկը, սպարապետ, մէնք: Ստեղծենք  
մեր ներքին նեցուկը... Գու զիտես,  
որ մենք սպրուտ ենք երկու որի արան-  
քում կամ ունիք ճիշդ՝ երկու զազանի  
բաց երախի առաջ, որ ուզում են կշա-  
նել մեզ - արեմն արեղէն տանէք, որ  
այդ արեքը շարունակ շարունակ մեզ  
և աչք երախեքը շղանեն մեզ... Ես  
ուզում եմ զորացնենք մեր բազուկը,  
որ հարեւանները յարգեն մեզ: Կարճ՝  
ես ուզում եմ, որ միշտ օգնութիւն  
ակնկալուք չլինենք և ընդօրինակուք  
ստրուկ... Այլապէս կ'ընենք մենք-  
կարտարներէ մի ժամ աչք պարտից  
կողմն է, միտ ժամ աչքը՝ Բիւզան-  
դիայի, և մի բան պատահելու՝ վա-  
ղում-ապաւինում են սրան կամ նրան  
և ամբողջում նրանց պարտուղը: Հի-  
մա է՛լ շատերը մեր ասեղ թողան՝  
ուզում են լինել հասանելի տունը,  
ամբողջել նրանց պարտուկները կամ  
պարտուղ զառնող նրանց համար: Ո՛հ,  
սպարապետ, մենք պէտք է չլինենք մեր  
պարտուկները և սպաւինենք ինքնքր  
մեզ... Այդ չեն գիտակցում մեր հո-  
գևոր հայրերը... Բայց դու, որ զեն-  
քը մեզից միացնում ես մեր երկրի  
անշատուած մասերը, պատժելով հար-  
րենադու իշխաններին, օգնիք մեզ սե-  
փական բերքը չլինելու, որ մէնք լի-  
նենք մեր նեցուկը... Գու այդ պարտա-  
ւոր ես, սպարապետ, օրովհետեւ յի-  
շում ես, երբ եկուր ինձ Բիւզանդիա-  
յից բերելու, դու խոտուցար, որ ա-  
մեն բանում պիտի օգնես ինձ... Հի-  
մա ասա, սպարապետ, սպրե՛նք ինք-  
նուրո՛յն, մեր դէմքով, թէ կու՛յ զը-  
նանք Բիւզանդիային և զառնանք բե-  
զանկացի... Գէ, խօսիք: Մուշեղ սպա-  
րապետ... Ասա՛, ինչ որ մտածում  
ես...»:

ՍՏ. ՋՕՐԵԱՆ

(«Պապ Թադևոսը»)

### ՍՏԵՓԱՆ ՋՕՐԵԱՆ

Հոկտեմբեր 18-ին, ձայ գրակամութիւնը,  
յամօրն Ստ. Ջօրեանի, կորսնցուց իր վաստե-  
կաւոր արձակագիրներն մեկը:

Ենած էր 1897-ին, Ղարաբիլիտէ, ու ասա-  
նքաբը տարեկանէն սկսեալ մինչեւ իր խր օժ-  
րութիւնը, անբազը վաքտուն ասրի. ծառայած  
կայ գրակամութեան՝ երկնիւով, քարզմանե-  
լով, ուտուցանելով:

Մեր գրակամութեան լաւագոյն աւակն-  
բուն հետ մտնումալէ ետէ՛ Ստեփան Ջօրեան  
նայն կրեւտութեամբ մտնցու ման աչք ան-  
պատանմներում ու իր որոնումներում ընթացիմ  
գտու թալտում, Անիովը, Յիւզպէրը, Մոխտա-  
նը, կարպաց, ուսումնասիրեց, իւրացուց և օ-  
տարնեղն ասացած իր գանձերը գուժարելով  
կայ գրակամութեան ժառանգած հիւրերում ու  
իր խառնումներն վրայ՝ կարգեց իր օնովում  
աճը, դիմագիրը:

Լայն էին Ստ. Ջօրեանի ընդգրկումները ու  
կարճ չեղաւ իր շունչը:

Փաւտմակալից շարժումներու աղիցարեան  
տակ՝ ան պեղեց ժամանակակից մարդու եռ-  
գին ու անլի լայնօրէն ու սրտաբարձը պար-  
պելու համար սիրտը, մեկուսացաւ հին հարե-  
րում մէջ, մտնցու կայ ժողովարդի անպա-  
տագիրը վարելու տագնապով այրող հին դէմ-  
քերու, մասա Արշակ Երկրորդի բերդէն մնյո.  
Պապ քաղաւորի հոգիէն մերս ու վերակազմ-  
ելով անոնց շունչը՝ փոխանցեց նոր մարդուն:

Ու այսպէս, միշտ հայրենեքին ու կայ ժո-  
ղովարդին, յաւիտենակա՛ն հայրենեքին և յա-  
ւիտենակա՛ն ժողովարդին լինելութեան հոխան-  
ձախնդիր, անընդհատ ու անազմուկ, Ջօրեան  
նուիրարեղեց իր կեանքը, սրտուռուչ հաւատաբ-  
մութեամբ:

Ի հարկէ, հարք չեղաւ իր խառնում, գա-  
նութիւններ շատ ունեցաւ, զգլխացաւ յան-  
ձալու համար՝ ուրիշներու պէս՝ ինք ևս ու  
յանտի մտնցու իր գլուխը: Բնակումն ցայ-  
նամներու մէջ հաւանաբար ժամակով անլի ճը-  
ւազ ըլլար իր բերքը, օրակով անլի խոր ըլ-  
լար. սրտիմ արաքը անլի՛ ուժգին ըլլաբ. վրո-  
քին յայտը՝ անլի պայծառ, ո՛վ գրուէ, բայց Է՛-  
մաններու մէջ:

Յարգամք իր յիշատակին:



ԱՏԵՓԱՆ ԶՕՂԵԱՆ  
1890 - 1967

Քաղաքակիրթ աշխարհը, այս տարի,  
կը տօնէ երկու տարիք 100-ամեակներ,  
լուրին փրահտէլլոյի ծննդեան 100-ամ-  
եակը և Շարլ Պոտլերի ծաւուան 100-  
ամեակը:

Մեր կանխող էջերուն մէջ սկսանք  
հրատարակել Փիքստէլլոյի մասին պատ-  
րաստած Բ. Փափազեանի յոգուածաշար-  
քը, որ լաշարէն կ'անդադարանայ մեծա-  
նուն Քասեբազրի կեանքին ու զործին:

Այս տարուան իր վերջին թիւով,  
«Երկիր» պիտի անդրադառնայ նաև  
Պոտլերի կեանքին ու զործին, ինչպէս  
կ'ընեն այսօր աշխարհի բոլոր անկիւննե-  
րուն, ընդգծելով բանաստեղծութեան եւ-  
մաշխարհային գոնձարանին կուսկած գա-  
նիծեալք բանաստեղծին օրհնեալ աւանդը:

Մինչ այդ, վերստին կարգուցէք իր  
Հոյակաւոր հնչեակներէն մէկը, Թէթե-  
եանի Քարգմանութեամբ:



### ԻՆՉ ՊԻՏ՝ ԸՍԵՍ ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ

Ի՞նչ պիտ' ըսես այս իրիկուն, միմակ ու խեղճ իմ հագի:  
Ի՞նչ պիտ, ըսես, քաղցր իմ սիրտ, Քոչնած սիրտն իմ երբեմնի-  
Գեղեցիկին, քարիւն, սիրելիին այն անգին,  
Նայաւածքն որուն երկնային քեզ ծաղկեցուց վերստին:

Հպարտութեամբք մերին, գովքն իր ընենք պիտի մենք,  
Ոչինչ քաղցր է աւելի, քան տխրութիւնն իր մեզի,  
Մարմինն ամուր հագեղէն երեշտակներու բոյրն ունի,  
Ու աչքը մեզ կը պատէ լոյս-զգեստով մը անննգ:

Ասանձնութեան մէջ ըլլայ, թէ գիշերուամ մէջ դշխեմ,  
Փողոցին մէջ ամայի կամ բազմութեան ըլլայ մէջ,  
Ուրուականն իր կը պարէ օդին մէջ գերք շահ անշէջ:

Մերք կը խօսի ու կ'ըսէ -- «Գեղեցիկ եմ ու կ'ուզեմ  
Որ իմ սիրոյն իսկ համար լոկ գեղեցիկը սիրէք,  
Հրեշտակն եմ ես մահապարտ, մուսան իմ ու Մատոնմանն»:

Քարգմ. Վ. ԹԻՒԲԵՆԱՆ

ՇԱՐԼ ՊՈՏԼԵՐ





**ՀԱՄԱՍՏՅՈՒ ԹԻՇԱՍԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԱՆ  
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՈՓԻՎԵՆԻ ՄԵՋ**

Կրթիկ, Հակահմեր 1-ին, Ուսման մեջ  
սեզի ունեցած է յարգանքի և ոգեկոչման տը-  
պատիչ հանգէս մը, Յուրբուած Հաւաստեղի  
յիշատակին, հովանաւարութեամբ տեղւոյն բա-  
ճապեալ պ. Պարոյր Սաքոնեանին:

Ասեմայեան է պ. Յովիկ էքեան: Բանաս-  
իրան է գրականագէտ բժ. Հ. Ֆելիկեան:

Օրուան գլխաւոր բանասիր գրագէտ Արամ  
Հայկազ, ամակկալ հիւանդութեան պատճառով  
չէ կրցած ներկայ գտնուիլ ... Սակայն, Յանձ-  
նախմբին յանդերձեալ, արկած է իր ճառը, ար  
կարգացում և մեծ տպաւորութիւն գործած:

Հանգէտը հզած է միասնական գործունէու-  
թեան ազուրդ ցոյց մը, արուն փութացած են  
ճերիկ ըլլալ միջեւ իսկ Շիֆալայեան:

**ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՁՈՆՏ**

*Քեզանքանակ պ. Անդրանիկ Յովհաննի-  
սեան, իր Հաշտեան Ծրանառ ուղարկած է երկու  
ուսանող, Հեռեկեղու Հայադիտութեան Երկրի:  
Անոնց երեք տարուան ուսման ծախսը ինք ըս-  
տանձեան է: Յայտնակէ, բարեբաղը Հիմուն է  
Վեովհաննիսեան Կրթական Ճոնտը մը, Հարաւու  
Համար Համալսարան յանախող չլաւոր ուսա-  
նողներուն կրթական ծախսը:*

**ՊՐՈՍՎԱԿԱՆ ԳՐԱՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԸ**

Փարսկահայ Գրողներու Միութիւնը վերջինս  
գումարած է իր սարքկան բնդեանուր ժողովը  
և ընտրած իր ձաք վարչութիւնը՝ հետեւեալ  
կազմով: Տիկին Արմենիա Սագիճեան-Կարա-  
պետեան, օր. Վառնիկ Աւետիսեան և պարոն-  
ներ՝ Մ. Մարութեան, Ալպէրք Մերանեան և  
Արսիկ Անուանեան:

**ՎԱՆԷ ԲԱՅՁՅԻ**

**«ԳԻՇԱՏԻՉՆԵՐՈՒ ԿԼԱՅՈՒԹՅՈՒՆ»**

Ճրանտահայ գրագէտ Վանէ Բայձի (Խա-  
չատուրեան) «Գիշատիչներու Կլայութեան» վերակը  
ուստի-բեմադրութեան վերածուած և Օգոստոս  
23-ի երեկոյեան Հեռասփռուած Երեւանի մար-  
տահարկի կայանէն:

**ԵՐԳՅՈՒՆԻ ՍԵՆԱ ԲԱՆՈՒՆԱՆ**

Լիբանանահայ ծանօթ երգչուհի (մեցցո-  
սոփլանօ) աիկին Սեյա Բայունեան-Քիշիկե-  
ան, Վոտերս, Միլանայի Մեայի իուսքի՞  
հետ՝ պիտի երգէ Անգարայի մէջ, Տանգըրքի  
«Ճեհա Պոչե» օֆերային մէջ իր փրինս սան-  
նա: Ապա պիտի մեկնի Անգարա՝ մասնակցելու  
Կլայութեան կոնցրտին:

Տիկին Սեյա Բայունեան վկայուած է Պե-  
րսի Գեղարանայից Աղաղիկայեան և այս  
իր արուեստը կատարելագործած վեներիկի ու  
Միլանայի մէջ, շնորհիւ իտալական կատալա-  
նութեան երեք տարուան կրթարարակին: Ան  
մասնակցուած է օֆերայի ֆիզիկ մէջ, Մե-  
լանայի Մեայի թատրոնի գանգամ մայերթ-  
ներու ծնոքին տակ: Եսեան է բազմաթիւ մեր-  
ցումներ: Մասնակցած է իրրան մեմբրագ վե-  
ներիկի 1962-ի և երեք ամի առաջ Սան Ռե-  
մոյի փառասաններուն: Երգած է Գուրգուսե-  
րեան Եղանուր գեկովորներու: Այստեղ տակ  
և բազմաթիւ օրաթորիներու մէջ, Նափայի,  
Սան Ռեմօ և վեներիկ: Երգած է նաև իտա-  
լական պատկերասփիւռէն, Նափայի և Միլա-  
նայի մէջ:

Տիկին Բայունեան օֆերայներու տնօրէններէ  
փնտուտուած երգչուհի մըն է այսօր:

**ԵՐԳԻՇԱՏԻՉՆԵՐՈՒ ՔՐԹԱԿԱՆ**

*«Ժուռ աը Ծրան» հանդէսը կը Հարգուի,  
թէ յայտնի երգիչներէն Քիշուր (Կամեան Քի-  
րազեան) մասնակցած է երգիչանքի Միլանայ-  
ին 15-րդ Մայիսին, որ վերջինս տեղի ունեցած  
է Պարսկերայի մէջ (Իտալիա): Քիշուր այս  
ցոյցանագէտին մասնակցած է ՎԷ Փարիզին*

ա վերնից շարք ժը երգիծանկարներով, որոնք ժեն յաջողութիւն գտած աւ զինք արժանի ըրած են ճՏաք ս'օրք ժրցանակին:

Քիչազ նախկին եղիպատանց ժըն է: որ երկար ժամանակ աշակերտած է Թանօթ նկարիչ Աշոտ Զօրեանին:

ՊԱՐԱԿԱԼԱՅ ԵՐԳԱԼԱՆ ԱՌՈՒՐԷՆ

Պարսկաստանի պետական ժայնասփիւռի երգանաներէն մէկն ալ հայազգի Յարեմն է. որ ներկայիս կը գտնուի Ամերիկա եւ կը շարունակուի նոր երգեր յօրինել Պարսկաստանի Ապստամբութիւնի համար:

Յարեմն՝ վերջերս Այնտապիւռի զրկած է երկու նոր երգեր, որոնց մէջ գրած է իր կատարած աւ սէրը Պարսկաստանի հանդէպ:

ԳԵՐԱՍՈՒՆԻՆԻ ԱՐԱՐՍԻ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ

Ենտէրէլ Փինթօն է անունը այն ժեն պարուհին, որուն զը մտքի տիրանալ Պարսկէն, ա՛մին մէկ արուեստագէտ, որ զ'աշխատի ժայնասփիւռի նա. գտնակերտութիւնը զեղարուեստական սուպրէզին մէջ:

Սան Փաւլոյի Քառերկան արուեստին մէջ, 1906-ի շառաքոյն զերտանուհի ընտրուած է որ Արաքսի Պարսկաները: Ան նախնայալ տարի, որդէն ընդունուած էր որպէս սուպրէզին շառաքոյն աւ խոստովանից մէկ արժէքը:

Շարունակ օրիորդը ներկանկան ուսման շարունակ փայլուն յաջողութեամբ լրացնելէ նաք, յաճութեամբ է Սան Փաւլոյի Քառերկան Արուեստի Բարձրագոյն Հաստատութիւնը, որպէ՛ վերկատուած է բարձր նիշերով:

Վերջերս, զերտանուհի Արաքսին տեղում ընտրուած է Սան Փաւլոյի նախնային Քառերկան Յանձնախումբին, ի կարգին Հոյակաւոր զերտան Սերգիս Քարտիզալային:

ԲՆՄԱՐԻՆԶ-ԴԵՐԱՍԱՆ ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՔԵԱՆ

Բննայրիւ-գերասան Գրիգոր Մելիքեան Պերլիմի Պետական քաղաքնաբու յայտնի գնչաւան Արեւն է եւ Շիլլիքի անուէր կրող քաղաքնաբու գիթաւոր գերպետարաններէն: Ունի քաղաքնաբու մը, որ սրգիական ըմբռնումով ներկայաւորումն կը սարժէ:

Այցելած է յագագիւ երկիրնեք: խաւիայ,

Ջախցերիւյ եւ Աւստրիայ մէջ եւս քաղաքնաբու կամ պատկերասփիւռի համար ներկայացումներ տուած եւ արժանացած է արուեստաւոր լայն հասարակութեան գնահատութիւն:

Հակառակ օտար շրջանակի մէջ ազրած ըլլալուն, վառ մնացած է իր մէջ հայաւ զգացումը, եւ՛ մտնէ հետաքրքրուած է հայ կեանքով աւ մշակոյթով:

Վերջերս, հայերէնի մտածուող դասեր աւսած եւ սարկած է ճաւել գրել աւ կարգալ:

Իր քաղաքական կեանքին մէջ կրող է շրջան մը, նքր գերման քաղաքնաբու կարիւր դիւմեր յագած են կարճ եւ զերմանացնիքու համար գրիւն արուեստանկի տնուն մը գտնել իրեն:

Հայ արուեստագէտը ըմբռած է նաև Մելիք անուէր, որ յարատեւ կը զոյգանէ ճշմարիտ հայու իր հագին:

Գրիգոր Մելիքեան վերջերս փայլուն խաղաղաբարիւն մը ունեցած է Մայտիովսկիի Վերլուկը քաղաքնաբու մէջ:

Աւագիմ անգամ ըլլալով շնմայրած է ճաւելաւորացի Ֆրից Հոյվիքի Վախաւանք քաղաքնաբու, որ զը պատկերացնէ Ա Աշխատարանի Գերմանիայ մէջ տիրող կարգնալով վիճակ մը: Գրիգոր Մելիքեան մեծապէս գնահատուած է ճաւել իրեն արուեստագէտ ըմբռնողին:

ԳԱՐԻՐԷԼ-ՄԻՔԱՅԷԼ ԵԱՊՈՆԵԱՆ ԱՆԿԱՐԱՅԻ ՊԵՏ. ՕՓԵՐԱՅԻՆ ՄԷՆ

Պալէի պաշտանայ նախք արուեստագէտ Գարրիէլ Միքայէլ Եապոնեան, այս արքայալուսնէն յետեւ Անգլաբարի պետական օգնութիւն մէջ աւսուած է, որպէս պետական պաշտանայ:

Ամբան շրջանի բացօթեայ օգնութիւն բաժնի մէջ ճարտար Ֆիլիքսիմի ներկայացման ըմբռացին, հայ արուեստագէտին խաղաղութիւնը մեծապէս զնահատուած է ո՛չ միայն Պոլսոյ արուեստագէտներու շրջանակներուն կողմէ, ալ նաեւ բացառիկ կերպով աշտարակները գրուած է խաղին ետեւալու վարիչին, որ զօգնատու արտաստուած է տաղանդաւոր հայ պարողի մասին:

Գարրիէլ Միքայէլ Եապոնեան, որ Պոլսոյ Երտնաւանցի Պալէն նիւզի շրջանաւորաներէն է, Անգլաւ մեկնած եւ գործի սկսած է արգիլ:

## **«ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒՄ Ե**

Ոկ. Գալուստ Պապեան 1 տարեան ԲԱ Ն կը նուիրէ Գանասոյի  
«Համագրային»ին:

## **ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ Ս. ՅԱՆՔ**

ԱՆՏՈՆԻՈՍ ԵՒ ԿԼԵՈՊԱՏՐԱ (Քատերդու իւր շարքմ. Յովհանն-  
նէս Մասեհեան, տպարան «Համագրային», Պէյրութ, 1967:  
ԱՍՏԵՂԱՏՈՒՆ (Բանաստեղծութիւն), Վաշերաժ Սօֆեան, Ֆրեզնօ,  
1967:



ՏԱՐԻԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍՍԱԶԻՄԱՆ 7 ՏՈՒՆԲ  
ՀԱՏԱՎԱԶԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ --

G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban